ԴՐՕՇԱԿ

ISSN 2579-2954

Հայ Յեղափոխական Դաշնակցության պաշտոնաթերթ

(79-րդ տարի) Թիվ-6 (1700) Հունիս 2025

Բովանդակություն

«Դրօշակ» ամսաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցության
պաշտոնաթերթ
Հիմնադիր՝ «ՀՅԴ պատմութեան թանգարան
հիմնադրամ»
Երևան, Միեր Մկրտչյան փ. 12/1
Հեռ. (+374) 10-52-18-90
Էլ. հասցե՝ droshak@arf.am
Կայք՝ hhtps://www.droshak.am

Գլխավոր խմբագիր՝ Արտաշես Շահբազյան
Խմբագրական խորհուրդ

1- Առաջնորդող

Լինել նախաձեռնող, չգնալ թելադրված օրակարգերի ետևից (էջ 1-4)

2- Քաղաքական

Անի Մելքոնյան
Ազգային կառույցների, մասնավորապես Հայոց եկեղեցու և ՀՅ Դաշնակցության նկատմամբ Փաշինյանական քաղաքականության հետքերով (էջ 5-9)

3 - Թարգմանություն

Ահմադ Քազեմի
Ադրբեջանի Հանրապետության անդամակցությունը ՆԱՏՕ-ին. Անգլոսաքսոնական կարգերի հաջորդ քայլը Կովկասում (էջ 10-12)

Վալերիա Օլյունինա
Թվում է, թե կասպյան խավիարասերների ժամանակներն ավարտվում են (էջ 13)

4- Գաղափարական

Տիգրան Ճինպաշեան
Դաշնակցական անմահ նահատակը՝ Սարգիս Զէյթլեան (էջ 14-20)

5- Դեմքեր և դեպքեր

Հայկազուն Ալվրցյան
Միսաք Թոռլաքյանը ազգային-ազատագրական պայքարի գործիչ և վրիժառու (մաս առաջին) (էջ 21-28)

6- Երիտասարդական

Մարգար Շարապխանեան
Մտերմիկ զրոյց երիտասարդ դաշնակցականի մը հետ (էջ 29-32)

7- Ընթերցումներ

Մարիամ Հովսեփյան
Հայոց պահանջատիրության արձագանքը լիբանանահայ մամուլի էջերում (էջ 33-37)

8- Ժառանգություն

Ա. Սարիբէկ
Արհամարհանք (էջ 38)

9- Դաշնակցական բեմ

Պարգև Ավագեան
Պատիժը արդիւնք, արարքը պատճառ (էջ 39)

10- Ընկերական զրույցներ

Վրէժ-Արմէն
Ներուժէն՝ ո՛ւժ (էջ 40)

Լինել նախաձեռնող, չգնալ թելադրված օրակարգերի ետևից

Հայ մարդու համար այլևս զարմանալի չէ, որ յուրաքանչյուր օր լսելու է երկրի վարչապետի հերթական արտառոց մտքերը: Եթե իր կարգավիճակը և խոսքի արժեքը հասկացող երկրի ղեկավարը ձգտում է մշտապես հանգստության և կայունության զգացողություն ներշնչել հասարակությանը, ապա հոգեպես անհավասարակշիռ հայ ղեկավարը կարծես նպատակադրված է երկիրը պահելու անվերջանալի ջղագրգռության և տագնապի մեջ: Երկրի ղեկավարի ակնհայտորեն անհավասարակշիռ պահվածքն առավել սրվել է վերջին ամիսներին՝ հատկապես Գյումրու և Փարաքարի ավագանու ընտրություններից, ինչպես և հրապարակային միջոցառումներից հետո՝ ի պաշտպանություն արցախահայության իրավունքների, և ի տես ժողովրդի մեծամասնության մեջ ազգային տրամադրությունների վերարթնացման: Փաշինյանը հասկացավ, որ տարիներ շարունակ գործադրած իր բոլոր քարոզչական ջանքերն ու աճպարարությունները, վերազգային անհեթեթ գաղափարների տարածման փորձերը զուր են անցել: Բայց նրա համար շատ ավելի սարսափելի է այն բանի գիտակցումը, որ իրադարձությունների ընթացիկ հունով զարգացման պարագայում հին ու նոր բոլոր տեսակի ընտրակեղծարարությունների գործադրման դեպքում էլ չի կարողանալու գալիք ընտրություններում մոտենալ հաղթանակի անհրաժեշտ շեմին: Այս հարցում, որպես դաշնակիցներ սեփական քվեով չեն կարող աջակցել տարիներ շարունակ ձեռքի տակ փայփայած անձնական օգտագործման քաղաքական խմբակները: Ավագանիների վերոհիշյալ ընտրություններից հետո, երկրի վարչապետն ու իր թիմը մտնելով ընդդիմադիր դերի մեջ, դարձան շատ ավելի ագրեսիվ ու սադրիչ: Որպես այս շրջանի հատկանշական իրադարձություններ հիշենք կտրուկ և կոպիտ ոտնձգությունները Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու նկատմամբ, չդադարող բախումնային իրավիճակները խորհրդարանում, գործարար և բարեգործ Սամվել Կարապետյանի ինչպես և մի շարք ընդդիմադիր գործիչների ձերբակալությունները, մասնավորապես և դաշնակցական գործիչների դեմ ձեռնարկվող հետապնդումները: Դեռ որ վերջին պետական ու ազգային մասշտաբի խայտառակությունը ուժային կառույցների գրոհն էր հոգևոր կենտրոն Էջմիածնի վեհարանի վրա, ինչպես և երկու սրբազանների ձերբակալությունը: Այս իշխանության նախահարձակ և սադրիչ գործողությունները մտածել են տալիս, որ իրադարձությունների օրինաչափ զարգացումից վախեցած ավտորիտար ղեկավարը փորձում է, այսպես ասած, ոչ միայն քարտերը խառնել, այլև խաղասեղանը շուռ տալ,



ստեղծելով ոչ բնական իրավիճակ, երբ կարող է իրադարձությունների վրա ազդել իր սիրած մեթոդով՝ ուժային և պետական այլ լծակների անօրինական գործադրմամբ: Ասվածի փաստացի դրսևորումն է մտացածին հեղաշրջման հեքիաթը: Ինչպես անցած 7 տարիներին է բազմիցս կրկնվել աղմկոտ ձերբակալություններից ու ամպագոռգոռ մեղադրանքներից ինչ որ ժամանակ անց ամբաստանված մարդիկ սուսուփուս ազատ կարձակվեն, սակայն Փաշինյանն այդ ընթացքում հասած կլինի իր հետապնդած կոնկրետ խնդիրների իրականացմանը:

Նիկոլ Փաշինյանը լավ է հասկանում, որ բոլորի համար էլ, վաղ թե ուշ, իշխանության շրջանն ավարտվում է՝ եթե իհարկե միապետական դինաստիայի ժառանգորդ չէ: Համատարած հիասթափության և ատելության պայմաններում իր քաղաքական և բարոյական ժամանակը նույնպես սպառվել է: Ճիշտ է որ Արևմտյան կառույցները, իրենց վարկաբեկման գնով, անցնող տարիներին հովանավորել են Հայաստանի ղեկավարին՝ աչք փակելով այս իշխանության բռնապետական, հակաժողովրդավարական, անօրինական և կոռումպացված բնույթի վրա: Մեծ ցանկության դեպքում էլ այսուհետ նրանց համար դժվար է լինելու հանրության աչքին խայտառակված ղեկավարի ինքնավերարտադրությունը հովանավորելը: Պատահական չէ որ օտարերկրյա մի շարք լրատվամիջոցներ, որոնք ժամանակին թիկունք եղան Նիկոլ Փաշինյանին, այժմ քննադատում են նրան:

Փաշինյանը փորձում է ապացուցել, որ դեռ տիրապետում է իրավիճակին և պատրաստ է բավարարել արտաքին հովանավորների պահանջները: Նրա բիրտ պահվածքը, ուժային կառույցների միջոցով հարցեր լուծելը նպատակ ունեն համոզե-

լու ներսի ու դրսի լսարաններին, որ Հայաստանի միաձույլ իշխանությունն ամբողջովին ենթարկվում է իրեն և պատրաստ է կատարելու իր բոլոր քմահաճույքները: Նա բացահայտորեն խորացնում է Ռուսաստանի հետ դեպի խզում գնացող հարաբերությունները, իբրև թե Ռուսաստանի հավանական դավադրությունից փրկելով դեպի Արևմուտք նավարկող Հայաստանը: Փաշինյանի համար առանձնահատուկ պայքարի ճակատ է Հայ Առաքելական եկեղեցին: Եկեղեցու դեմ նրա պայքարը սկսվեց իշխանության գալու օրերից, ««Նոր Հայաստան՝ նոր կաթողիկոս» կարգախոսի ներքո»: Եկեղեցու դեմ ձեռնարկած ոտնձգությունները, սակայն, մշտապես հանդիպում են ժողովրդի բուռն հակազդեցությանը: Նոր իշխանությունը ի սկզբանե խրվեց ներքաղաքական և սրա կողքին բարդացող արտաքին քաղաքական գործընթացների մեջ և ստիպված եղավ շեղվել ազգային եկեղեցու դեմ ծրագրած պայքարի «կարևոր» ուղղությունից: Հիմա, սակայն, երբ ներսում ու դրսում շատ բան նա կորցրել է, իր համար սկզբունքային հարց է դարձել «հաղթանակ» տանելը ժողովրդի մոտ մեծ հեղինակություն վայելող և ազգին համախմբելու ունակ Մայր եկեղեցու նկատմամբ: Հաջողության դեպքում դրածոների ձեռքը հանձնելով ազգի դարավոր ավանդույթների հոգևոր հիմքը հանդիսացող եկեղեցու առաջնորդությունը, նա կկարողանա խարխլման տանել ազգային միասնականությունն ապահովող հայոց հոգեղեն պատյանը, տիրող աշխարհայացքը փոխարինել իր քարոզած գլոբալիստական դատարկաբանությամբ, սահմանադրական ճանապարհով վերացնել Հայ եկեղեցու գերակա կարգավիճակը, ինչպես նաև ձեռք բերել աղանդների բարեհաճությունը՝ հաջորդ ընտրություններում կրկին նիկոլականներին ձայն տալու համար:

Քաղաքական իշխող խմբի ղեկավարն այլևս չի կարողանում քողարկել, որ երկրի առջև ծառացած արտաքին և ներքին բազում ճակատագրական մարտահրավերների պայմաններում իրեն մտահոգող գլխավոր հարցը իշխանությունը չկորցնելն է: Տագնապալի մի քանի օրեր, ողջ հայ ժողովուրդը շունչը պահած հետևում էր Իրան-Իսրայել պատերազմի ընթացքին, շատ լավ գիտակցելով, որ եթե բարեկամ երկրում իշխանության ճգնաժամ առաջանա, Ադրբեջանն օգտվելու է առիթից ներխուժելու համար Սյունիք: Ի՞նչ պետք է աներ Հայաստանի նորմալ ղեկավարը այս պարագայում՝ ձեռք առներ համապատասխան ներքին միջոցառումներ և խոսեր այդ մասին ժողովրդի հետ, մեկներ ռազմաքաղաքական դաշնակից երկիր և փորձեր երաշխիքներ ստանալ Հայաստանի դեմ հնարավոր ագրեսիան կանխելու և տարբեր բնույթի ու մակարդակի աջակցություններ ստանալու վերաբերյալ: Գուցե նույնիսկ հնարավոր լիներ հենց Սյունիքի սահմանամերձ տարածքներում դաշնակից երկրի հետ անցկացնել զորավարժություններ (այս դեպքում կարևորը կլիներ ոչ թե դրանց մասշտաբը այլ ինքը երևույթը որպես նախազգուշական և զսպող գործոն): Գուցե և ուրիշ բաներ, բայց կարևորը որ ղեկավարը լիներ իր ժողովրդի հետ, այլապես ում ինչին է պետք ղեկավարը: Իսկ Հայաստանի վարչապետն արեց ճիշտ հակառակը՝ այն պայմաններում երբ Ադրբեջանն Իրանի դեմ Իսրայելին էր աջակցում, նա շարունակեց հարձակումները եկեղեցու դեմ, ձերբակալեց Սամվել Կարապետյանին և բազմաթիվ ընդդիմադիր գործիչների, մեկնեց Թուրքիա և անձնական աջակցության դիմաց թե ինչեր խոստացավ Հայաստանի կործանմանը ձգտող դարավոր թշնամու ագրեսիվ ղեկավարին՝ մնում է անհայտ, ինչպես, որ գաղտնի են մնացել Փաշինյանի իշխանության իրականացրած բոլոր բանակցությունները: Այս օրերին Եկեղեցու դեմ սանձազերծած փոթորիկը հավանաբար նաև նպատակ էր հետապնդում շեղելու մարդկանց ուշադրությունը Թուրքիա կատարած այցելությունից և ձեռքբերված դավադիր համաձայնություններից: Մյուս կողմից ակնհայտ են ճակատագրական այն պահանջները, որոնք թուրք-ադրբեջանական տանդեմը պարտադրում է

Հայաստանի իշխանություններին: Ուշադրություն դարձնենք, որ Թուրքիայի և Ադրբեջանի հետ մութ գործարքների մեջ խորանալուն զուգահեռ այսօրվա իշխանությունը, ի դեմս իր միանձնյա ղեկավարի, թուլացնում և մկրատում է Ռուսաստանի հետ առկա փոխհարաբերություններն ու կապերը: Հայկական էլեկտրացանցերի և գազամատակարարման համակարգի շուրջ շրջանառվող խոսակցությունները հենց այդ նպատակն են հետապնդում: Խելահեղություն են թվում պատմության ճակատագրական պահի առջև հայտնված երկրի ղեկավարության բացահայտ հարձակումներն ու սադրիչ քայլերը Ռուսաստանի նկատմամբ: Դժվար է մտածելը նույնիսկ, թե ինչ կպատահի Հայաստանի հետ, եթե իր հերթին Ռուսաստանը դիմի հակաքայլերի: Թեև այդ միջոցառումների թույլ ազդանշաններն արդեն առկա են ռուսական շուկա հայկական ապրանքների մուտքը դժվարացնելու ձևով: Մյուս կողմից, հունիսի 27-ին ԵԱՏՄ անդամ երկրների ներկայացուցիչների հերթական հավաքին, որին Նիկոլ Փաշինյանը մասնակցեց տեսակապով, Ռուսաստանի փոխարտգործնախարար Ալեքսեյ Օվերչուկը կրկին անդրադարձավ Եվրամիության ուղղությամբ մեր երկրի ղեկավարության ձեռնարկած քայլերին և կրկին շեշտեց. «Հայաստանը չի կարող միաժամանակ լինել թե՛ ԵԱՏՄ և թե՛ ԵՄ անդամ», «Դա կնշանակի, որ Եվրասիական տնտեսական միության ներքին շուկայում կհայտնվեն ապրանքներ, որոնք չեն համապատասխանում մեր պահանջներին: Այս հարցը մենք ներառել ենք Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի օրակարգում»: Ռուսաստանցի պաշտոնյայի խոսքով՝ ինքը պատրաստվում է այս խնդրի վերաբերյալ նամակ գրել Հայաստանի փոխվարչապետ Մհեր Գրիգորյանին:

«Ես տեղեկացնելու եմ նրան, որ այս գործողությունները հակասում են Եվրասիական տնտեսական միության նորմերին, և մենք քննարկելու ենք համապատասխան միջոցներ կիրառելու հարցը», ինչին որ անդրադարձան Հայաստանի բազմաթիվ լրատվամիջոցներ: Ակնհայտ է, որ Ռուսաստանը սկսում է ավելի ուշադիր ու գործնական հայացքով նայել Հայաստանի կողմը և, կանխատեսելի հաջողությունների հասնելով ուկրաինական ճակատում ու ամրապնդելով դիրքերն արտաքին հարաբերությունների մեջ, դեմքով շուռ է գալիս նաև Հայաստանի կողմը: Դատելով ուշադրության մեծացումից՝ ռուսական ղեկավարությունը այլևս չի ցանկանում հանդուրժել այն խաղը, երբ Հայաստանի վարչապետը սիրո երդումներ կտա Մոսկվայում, սակայն Հայաստան հասնելուց հետո իր թիմին և ձեռնասուն իշխանավորներին կհրահանգի շարունակելու հակառուսական գործունեությունը: Ռուսաստանին համակրող կամ չհամակրող, անգամ ատող հայերը արդյո՞ք լավ են պատկերացնում, թե տնտեսական, քաղաքական և այլ առումներով ինչ են նշանակում փոքր Հայաստանի այս խաղերը հսկա Ռուսաստանի հետ: Որքան էլ ցանկալի չէ այդ մասին խոսելը, բայց կարծես մենք չխրատվեցինք քսան թվականից հետո և հիմա համառորեն գնում ենք նոր փորձություններին ընդառաջ: Երբ

մենք կտրում ենք այն ճյուղը, որի վրա նստած ենք, ո՞րն է մեր անվտանգային, տնտեսական, էներգետիկ այլընտրանքը՝ Եւրոպան որը ոչինչ չի խոստանում, թե՞ գուցե Թուրքիան ու Ադրբեջանը: Իհարկե, Նիկոլ Փաշինյանը ամենալավ պատկերացնողն է այդ հեռանկարի, սակայն փորձելով բարձրացնել իր ուժերից վեր բեռ, նա ամբողջովին ձախողվել է արտաքին քաղաքականության մեջ, և այժմ չի կարողանում դուրս գալ իրեն պարտադրվող խաղից: Թշնամական գրագետ ու հետևողական ճնշման դիմաց չկարողանալով ծպտուն հանել, նա կարծես «ծեծված շան» իր բարդույթը փորձում է հաղթահարել աջ ու ձախ հաչալով ու կծոտելով սեփական բակում:

Մի քանի անգամ ժողովրդի մի մեծ հատվածի հիմարացնելուց հետո Փաշինյանին թվում է, որ ինքը կարող է անվերջ «ֆոռացնել» իր նշանակած երեք միլիոն վարչապետերին և, այն ժամանակ, երբ Ադրբեջանն ու Թուրքիան դրսևորում են մեծ հավակնություններ, երբ ադրբեջանական ուժերն ամրապնդվում են մեր երկրի տարածքում, ինքը հայտարարում է, թե Հայաստանը երբեք այսքան անկախ չի եղել, Հայաստանին ոչինչ չի սպառնում և անգամ չի խորշում ցինիկորեն հայտարարելու, թե. «Մենք ոչ թե կորցրել ենք Լեռնային Ղարաբաղը, այլ գտել ենք Հայաստանի Հանրապետությունը»: Ինչ ասես, եթե դեռ կան մարդիկ, ում համար այս խոտը հաճելի է, բարի ախորժակ իրենց, իսկ ով կարողանում է դատել ըստ իր տեսածի և համաձայն սեփական տրամաբանության՝ լավ են հիշում, թե անկախության որ տարիներին ենք մենք բանակի ու ժողովրդի ոգեկան միասնականության շնորհիվ եղել առավել անկախ և պաշտպանված, երբ ինչպես են խոսել հայ ղեկավարներն ադրբեջանցիների ու թուրքերի հետ ու մենք մշտապես չենք վախեցել պատերազմի հեռանկարից:

Նիկոլ Փաշինյանը, հաշիվ անելով զանգվածներին հլու ուղղորդելու իր հունարի վրա, հայտարարում է, թե եթե ինքը չլինի և գան ուրիշները, պատերազմ կլինի, երկիրը չի կառավարվի՝ կարճ ասած, կկործանվի: Այս երկրի յոթ տարեկանից մեծահասակները կարծում եմ կհիշեն, արդյո՞ք հենց այդպես էր Հայաստանի վիճակը նախքան Նիկոլի «հայտնությունը»: Փաշինյանը յոթ տարի շարունակ մանևրում է ստի ու ճշմարտության միջև և կազմակերպված քարոզչության միջոցով սևը ներկայացնում է սպիտակի տեղ: Ի հակառակ պատմական իրողությունների նա փորձում է համոզել, թե թուրանիզմն ու պանթուրքիզմը վտանգ չեն ներկայացնում. «Ինչ է եղել, ուզում են գնան գան մեր ճանապարհներով՝ թող գնան գան»: Այդպես աչքին թոզ փչելով՝ նա վաղը հանձնելու է Զանգեզուրը, որովհետև թշնամին եթե միայն գնալ-գալու խնդիր ունենար, Իրանի տարածքով էլ կարող էր գնալ-գալ, կամ նույնիսկ Հայաստանի տարածքով, սակայն առանց ճանապարհի գոտին ստանալու պահանջի: Անդրկովկասի վրա իշխելու, պանթուրքիզմի սահմաններն ընդլայնելու համար նա ցանկանում է, որ վերանա այն Հայաստանը, որն իրեն ենթակա չի լինի: Իր անվերապահ զիջումներով Փաշինյանը Հայաստանը վերածում է թուրքադրբեջանական գերիշխանության ենթակա տարածքի, որտեղ հայերը կարող են ունենալ դաշտում արածող կենդանու ազատությունը, քանի դեռ չեն փորձի հիշել պատմության, սեփական ինքնության, արժանապատվության և իրավունքների մասին: Այսօր Փաշինյանին քնքշորեն փարվող կթվորուհին, տաքսիստը, արվեստագետն ու մտավորականը փաստացի համաձայն են դառնալ դաշտում ազատ արածող այդ կենդանին:

Նիկոլ Փաշինյանը գիտի, որ իր ժամանակը կարճ է, ժամանակը փոխվում է արագորեն, անգամ Արևմուտքի գլոբալիստ առաջնորդներն են կորցնում իրենց ոտքի տակի հողը, ուր մնաց, կարողանան երաշխավոր լինել Նիկոլի վերարտադրությանը:

Իհարկե հաջորդ գարնանը նրանք երկու անգամ կգան Հայաստան՝ համաեվրոպական միջոցառումներ իրականացնելու և ուղղակի կամ անուղղակիորեն Նիկոլի քարոզչությունը կանեն ընտրությունների նախօրյակին և անորոշ ժամանակի համար հայ ժողովրդին եվրոպական ապագա կխոստանան:

Աշխարհաքաղաքական մեծ կռիվը ոչ միայն ավարտված չէ, այլև դեռ թափ է հավաքում, և այդ մեծ կռվի մեջ ոտատակ ընկած հայ ղեկավարը մտածում է երկիրն աճուրդի հանելու գնով իշխանությունը պահպանելու մասին և այժմվանից փորձում է ամայացնել իր ճանապարհը (անգամ ազգային հավատի և Մայր եկեղեցու դեմ պղծության գնով): Այնուամենայնիվ, հաջողության հասնելու ճանապարհին նրա գլխավոր դաշնակիցը մնում է ընդդիմադիր դաշտի պառակտված և անորոշ վիճակը: Այն ընդդիմության, որը մինչև այսօր չի կարողացել կազմակերպել երկար շնչի, ծրագրված ու հետևողական պայքար և կամա թե ակամա գնում է Նիկոլ Փաշինյանի կողմից անվերջ հրապարակ նետվող օրակարգերի ետևից: Երբ չկա ազգային միասնականություն, Փաշինյանը հրեշի պես մեկ-մեկ կուլ է տալու բարձրացող գլուխները, ինչպես վարվեց Սամվել Կարապետյանի, երկու Սրբազան հայրերի ու նաև այլ գործիչների հետ: Այս մարտավարությամբ էլ նա գնալու է դեպի առաջիկա ընտրություններ:

Կամ հայ ժողովուրդն իր մեջ ուժ կգտնի կասեցնելու այս գահավեժ ընթացքը, կամ Փաշինյանը ձեռք կգցի Հայաստանը վերջնական կապիտուլյացիայի տանող իր նոր մանդատը: ■

Ազգային կառույցների, մասնավորապես Հայոց եկեղեցու և ՀՅ Դաշնակցության նկատմամբ Փաշինյանական քաղաքականության հետքերով

Անի Մելքոնյան
Պատմաբան

Հայաստանում 2018 թ. տեղի ունեցած, այսպես կոչված, «թավշյա հեղափոխությունից» հետո, ինքնահռչակ «ժողովրդի վարչապետը» Հայաստանը հայտարարեց «ժողովրդավարության բաստիոն» և, չնայած դրան, լայն արշավ սկսվեց քաղաքական մրցակիցների, նախկին իշխանության կողմնակիցների և պարզապես փաշինյանական իշխանության տեսակետը չկիսողների դեմ:

Իրավիճակն ավելի բարդացավ 2020 թ. պատերազմում Նիկոլ Փաշինյանի դավաճանությունից հետո, երբ սկիզբ առավ ժողովրդական ընդվզումների լայն ալիքը փաշինյանական իշխանության դեմ:

Մի շարք առարկայական ու ենթակայական պատճառներով ժողովրդական մի քանի շարժումները չհասան իրենց հիմնական նպատակի իրականացմանը, Հայաստանը էլ ավելի խորն ընկղմվեց քաղաքական ճգնաժամի մեջ:

2023 թ. Արցախի հայաթափումից հետո, փաշինյանական վարչակազմը սկսեց իր հակահայկական քաղաքականությունը վարել ավելի բացահայտ, ավելի տեսանելի և ավելի ակնհայտ, բոլոր հարվածներն ուղղելով ազգային արժեքների, և դրանք պաշտպանող կառույցների՝ մասնավորապես Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու և Դաշնակցության դեմ:

Հակաեկեղեցական սրացումներն ավելի սաստկացան, երբ Բագրատ Սրբազանի առաջնորդությամբ սկսվեց «Տավուշը հանուն հայրենիքի» կամ, ինչպես ժողովուրդն է անվանում, «Սրբազան» շարժումը, որի մասին խոսելու առիթ ունեցել ենք, հետևաբար չենք կրկնվի, ասենք միայն, որ եկեղեցու դեմ հարձակումների առաջին փուլում կեղտոտ արշավ իրականացնողները սկսեցին հայոց եկեղեցուն մեղադրել հարկեր չվճարելու մեջ, ինչը հերքվեց ՊԵԿ-ի հրապարակած տվյալներով, երբ պարզ դարձավ, որ Հայոց եկեղեցին ՀՀ հազար խոշոր հարկատուներից մեկն է[1]:

Ամեն ինչ այսքանով և հայոց կաթողիկոսի մուտքը Սարդարապատ խոչընդոտելով չավարտվեց, հակաեկեղեցական արշավը նոր թափ հավաքեց 2025 թ.:

Մայիսի 26-ին Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ Վեհափառը՝ Շվեյցարիայում մասնակցեց եկեղեցիների համաշխարհային խորհրդի կողմից կազմակերպված «Կրոնական Ազատություն. հայկական հոգևոր, մշակութային և պատմական ժառանգության պահպանումը Արցախում/Լեռնային Ղարաբաղում» խորագրով միջազգային համաժողովին, որտեղ հայտարարեց, որ 2020 և 2023 թվականներին Թուրքիայի ռազմական աջակցությամբ Ադրբեջանի կողմից Արցախի նկատմամբ իրականացված ագրեսիայի ու ոճրագործությունների հետևանքով Արցախը հայաթափված է, Հայաստանի Հանրապետության սահմանային կենսական նշանակություն ունեցող զգալի տարածքներ բռնազավթված են, իսկ խաղաղության պայմանագրի կնքման գործընթացում ներկայացվում են նորանոր պահանջներ: Այս ամենի կողքին Ադրբեջանը պատանդառված է պահում Արցախի քաղաքական ղեկավարների, քաղաքացիական անձանց և ռազմագերիների՝ նրանց նկատմամբ իրականացնելով ցուցադրական, շինծու դատավարություն, որը խախտում է միջազգային իրավական նորմերը[2]:

Այնուհետև Ամենայն Հայոց կաթողիկոսը նշում է, որ «Ադրբեջանի իշխանությունները շարունակում են անտեսել միջազգային հանրության կոչերը, հրաժարվում իրագործել Եվրախորհրդարանի 2022 թվականի. «Լեռնային Ղարաբաղում մշակութային ժառանգության ոչնչացման մասին» N2582 բանաձևի պահանջները, ինչպես և մերժում է Արցախի հայկական հուշարձանների վիճակի գնահատման ուղղությամբ փաստահավաք առաքելություն իրականացնելու ՅՈՒՆԵՍԿՕ-ի նախաձեռնությունը»[3]: Վեհափառը ասվածին հավելում է, որ Ադրբեջանի հակահայկական քարոզչությանը միացել է նաև Կովկասի մահմեդականների վարչության նախագահ Ալլահշուքյուր Փաշազադեն: Վերջինս մայիսի մայիսի 22-ին հայտա-

Հայ գերիների դատավարությունը Բաքվում

րարել էր, թե իբր Հայաստանում և տարածաշրջանում տասնյակ դարեր գործող հայկական սրբավայրերը՝ անգամ 1700-ամյա Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարը, գտնվում են «պատմական ադրբեջանական հողերում» և հայերը, իբրև, «յուրացրել են» այդ տարածքները[4]:

Հայոց եկեղեցու դեմ ուղղված Ալլահշուքյուր Փաշազադեի ատելության խոսքին ու Կովկասի մահմեդականների վարչության կողմից «Երևանի մասնաճյուղ» «ղազիյաթ» ստեղծելու որոշմանը հաջորդեցին Նիկոլ Փաշինյանի և նրա իշխանության լայնածավալ արշավը եկեղեցու և Ամենայն Հայոց կաթողիկոսի դեմ:

Փաստորեն, համերաշխություն հայտնելով Երևանում «ղազիյաթ» ստեղծելու Ադրբեջանի հոգևոր առաջնորդի գաղափարին, Նիկոլ Փաշինյանը ձեռնամուխ եղավ հայ ժողովրդից մահմեդականներ կերտելու իր «առաքելությանը», որի նախերգանքը մայիսի 29-ին արված. «Ես ձեզ պաշտոնապես ասում եմ՝ մեր եկեղեցիները չուլանացված են, չուլանացվա՛ծ»[5] արտահայտությունն էր, որը զայրույթ առաջ բերեց նույնիսկ իրենց աթեիստ համարող հայերի շրջանում: Դրան հաջորդեց Փաշինյանի ֆեյսբուքյան էջում Սրբազանների հասցեին գռեհիկ բառապաշարով անպատշաճ գրառումը, որը կրկնելն անգամ ամոթ ու անպատվություն է ցանկացած բարոյական մարդու համար:

Այնուհետև, Հայաստանի վարչապետի աթոռին սոսնձված անձը՝ հիշեց, որ անցյալում սուտ լուրեր հորինող ու տարածող դեղին մամուլի խմբագիր էր եղել, և այդ ոճով սկսեց Հայոց կաթողիկոսին անուղղակի մեղադրել «կուսակրոնության ուխտը խախտելու» և «զավակ ունենալու» մեջ:

Բարձրաստիճան հոգևորականների հասցեին հայհոյախառն գրառումների (որոնց չենք անդրադառնա, գրառում կատարողի մակարդակին չիջնելու համար) և կաթողիկոսին ուղղված մեղադրանքների վերաբերյալ հայոց եկեղեցու հոգևոր խորհուրդը շատ զուսպ, բայց կարևոր շեշտադրումներով հայտարարություն տարածեց. «Հայաստանի վարչապետը պետական այրին անհարիր բառապաշարով, վիրավորանքներով և մեղադրանքներով հերթական արշավն է սկսել ընդդեմ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու՝ օրենքից վեր դասելով իր անձը: Հայհոյախառն, անվայել խոսույթներով հախուռն հրապարակումները զուրկ են բարեկրթության տարրական նորմերից, ոտնահարում են մարդու հիմնարար իրավունքները, կոպտորեն վիրավորում հավատացյալների կրոնական զգացմունքները և սքողվում կեղծ սրտացավության հիմնավորումներով: Ի վերջո այս ամենին հետևեց իշխանության բռնի փոփոխության մոգոնված մեղադրանքով Բագրատ Գալստանյան և Միքայել Աջապահյան Սրբազանների ինչպես նաև մի շարք ընդդիմադիր գործիչների ձերբակալությունը: Սրբապղծության հասնող աննախադեպ բռնություն էր մեծաթիվ ուժայինների կողմից Էջմիածնի Մայր տաճարի վեհարանի վրա գրոհը Աջապահյան Սրբազանին ձերբակալելու նպատակով:

Եկեղեցամարտ այս կեցվածքը ակնհայտորեն թելադրված է քաղաքական նպատակներով և փորձ է նսեմացնելու ազգային կյանքում և միջազգային շրջանակներում հարգանք վայելող Հայոց Եկեղեցու և եկեղեցականաց հեղինակությունը, լռեցնելու Եկեղեցու ձայնը և նվազեցնելու նրա հանրային ազդեցությունը:

Կառավարության ղեկավարի հակաեկեղեցական պահվածքը, ազգային արժեքների և Եկեղեցու դեմ նախաձեռնած գործընթացները հոի են կործանարար հետևանքներով և սպառնալիք՝ հայոց պետականությանը, մեր ժողովրդի միաբանությանը թե՛ հայրենիքում և թե՛ սփյուռքում: Այսպիսի գործողությունները պառակտում են հասարակությունը, տկարացնում են ազգի ոգին և հայրենանվիրումի բարձր գիտակցությունը հատկապես առկա մարտահրավերների պայմաններում: Նման դատապարտելի ձեռնարկումները սպասարկում են արտաքին հայատյաց ուժերի նկրտումները՝ որոշակիորեն կապակցվելով ադրբեջանական քարոզչամեքենայի կողմից հայ ժողովրդին և Հայ Եկեղեցուն ուղղված զրպարտությունների և կեղծ մեղադրանքների հետ:

Հայոց Եկեղեցին, գիտակից իր հանձնառություններին, անշեղորեն շարունակելու է հոգեփրկչական և ազգապահպան առաքելությունը՝ ընդդիմանալով ազգավնաս ու կործանարար ընթացքներին և մշտապես հետամուտ լինելով պետության ու ազգի գերակա շահերի, մեր սրբազան արժեքների պաշտպանությանը: Եկեղեցու հարցերը լուծվում են եկեղեցական կարգերի ու կանոնների համաձայն և դուրս են պետական և քաղաքական գործիչների իրավասությունից: Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին մեկ ամբողջություն է իր հավատացյալ զավակներով և զինվորագրյալ հոգևորականներով՝ ի գլուխ ունենալով ազգընտիր Ամենայն Հայոց Հայրապետին: Կոչ ենք ուղղում իրավասու պետական մարմիններին՝ կասեցնել վարչապետի այս անօրինական և անհեռատես քաղաքականությունը:

Հարկ չկա Եկեղեցին ներքաշելու արհեստական օրակարգերի մեջ և մղելու հակադարձման գործողությունների:

Այս նոր փորձության հանդիման հորդորում ենք մեր Սուրբ Եկեղեցու հավատավոր զավակներին լինել միաբան ու միասնական, առ հայրենին և Սուրբ Եկեղեցին հավատարմությամբ ու զորեղ հավատքով հաղթահարել մեր ժողովրդի առջև ծառացած բոլոր մարտահրավերները և երբեք թույլ չտալ մեր ազգային հիմնասյուների սասանումը: Թող այս մերժելի մեքենայությունները պատճառ չդառնան հիասթափության և գայթակղության...»[6]:

Իհարկե, Հայաստանի վարչապետի աթոռին հայտնվածը սա չհասկացավ և շարունակեց իր իսկ հորինած կեղծիքը իրականության տեղ հրամցնել հանրությանը.

«Գարեգին Բ-ն խախտել է իր իսկ կողմից կամավորությամբ ստանձնած կուսակրոնության ուխտը և զավակ ունի: Սա փաստ է, և եթե Գարեգին Բ-ն փորձի հերքել, անհրաժեշտ ձևաչափով դա կապացուցեմ:

Ըստ այսմ, համաձայն Հայ Առաքելական Եկեղեցու Կանոնագրքի, Գարեգին Բ-ն չէր կարող լինել եպիսկոպոս, արքեպիսկոպոս, չէր կարող ընտրվել և չի կարող լինել Կաթողիկոս. Կտրիճ Ներսիսյանը պետք է ազատի Վեհարանը»[7], և որքան էլ, որ տեղեկացված մարդիկ փորձեցին բացատրել, որ մեղադրանքներն անհիմն են, և որ պետության ղեկավարը իրավունք չունի, որոշելու ո՞վ պետք է լինի կաթողիկոս, որ կաթողիկոսն ընտրվում է ազգային եկեղեցական ժողովի կողմից, միևնույն է, իրեն «հայոց եկեղեցու հավատավոր զավակ» հռչակած ինքնակոչ «ժողովրդի վարչապետը» իր տգետների թիմով, մնաց նույն հակաեկեղեցական դիրքերում, իսկ նպատակը հայ ժողովրդին իր եկեղեցուց կտրելն ու քրիստոնեական հավատքից հնարավորինս հեռացնելն է, Երևանում «ղազիյաթ» ստեղծելու նպատակ ունեցող Փաշազադեի գործը հեշտացնելու համար:

Հայոց կաթողիկոսին և Մայր Աթոռ Սբ. Էջմիածնին իրենց զորակցությունը հայտնեցին Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունը, Պոլսի հայոց պատրիարքարանը և մի շարք այլ նվիրապետական աթոռներ,

Գարեգին Բ Վեհափառը
Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի համաժողովում. Շվեյցարիա, 26.05.2025

հայոց կաթողիկոսի դեմ ամենաստոր միջոցներով արշավ սկսած քաղաքական թիմին իր պատասխանը տվեց նաև հայ ժողովուրդը, որը կեսգիշերն անց հավաքվեց Զվարթնոց օդանավակայանում դիմավորելու և իր աջակցությունը հայտնելու Արաբական Միացյալ Էմիրություններից վերադարձող Ամենայն Հայոց կաթողիկոսին: Վեհափառը, դիմելով ժողովրդին, ասաց. «Մեր խորը գոհունակությունն ենք ուզում հայտնել և մեր գնահատանքը ձեզ, որ այս ուշ ժամին համախմբվել եք այստեղ: Գիտենք, որ դուք եկել եք այստեղ՝ ձեր վրդովմունքն արտահայտելու վերջին օրերին հանրապետության վարչապետի կողմից թույլ տրված, եկեղեցու՝ մեր և եկեղեցականության հասցեին արտահայտությունների առնչությամբ:

Սիրելիներ, գիտենք, որ այդ արտահայտությունները՝ հնչեցված վարչապետի կողմից, համընդհանուր վրդովմունք են առաջ բերել մեր ժողովրդի զավակաց մոտ՝ ի սփյուռս աշխարհի: Հավատում ենք, որ Աստծո ողորմածությամբ և օգնականությամբ, ձեզ հետ միասին, խոհեմորեն, առանց ավելորդ հուզականության, ընդվզումների, պիտի կարողանանք հաղթահարել այս դժվարությունները: Ամո՛ւր մնացեք ձեր հավատքի և առ եկեղեցին ունեցած ձեր սիրո և հավատարմության մեջ: Հավատում ենք, որ հաղթելու ենք բոլոր դժվարությունները, կերտելու ենք մեր զավակների վաղվա պայծառ օրը, Աստված պահապան մեր ժողովրդին, այսօր և հավիտյանս»[8]: Իր զսպվածության և շրջահայացության շնորհիվ փաստորեն Վեհափառը կանխեց այն, ինչին այդքան շատ ձգտում է Հայաստանի վարչապետի աթոռին հայտնվածը՝ քաղաքացիական բախումները և ներքին արյունահեղությունը, ինչը միակ բանն է, որ վերջին 7 տարիներին Նիկոլ Փաշինյանին չի հաջողվում անել, չնայած մեծ ցանկությանը:

Հունիսի 17-ին իշխանություն-եկեղեցի հարաբերությունների վերաբերյալ իր կարծիքն էր հայտնել ռուսաստանահայ հայտնի գործարար և բարերար

Սամվել Կարապետյանը, նշելով. «Մի փոքրիկ խմբակ, մոռանալով հայոց պատմությունը, հայ եկեղեցու հազարավոր տարիների պատմությունը, հարձակվել է հայ եկեղեցու վրա, հայ ժողովրդի վրա: Ես միշտ եղել եմ հայոց եկեղեցու կողքին ու հայ ժողովրդի կողքին: Եթե քաղաքական գործիչներին չհաջողվի, ապա մենք մեր ձևով ենք միջամտելու եկեղեցու դեմ արշավին»[9]- վերջինիս այս հայտարարությունը խուճապի մատնեց սեփական ստվերից վախեցող «ժողովրդի վարչապետին», որն իր ձեռքում գործիք դարձած իրավապահներին ուղղորդեց ձերբակալելու Սամվել Կարապետյանին, այդպիսով կոպտորեն ոտնահարելով ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված ազատ խոսքի իրավունքը:

Հունիսի 17-ի լույս 18-ի գիշերը, մոտավորապես ժամը 04:00-ին Սամվել Կարապետյանը բերման ենթարկվեց, նրա նկատմամբ երկամյա կալանավորման որոշում կայացվեց: Ձերբակալման ժամանակ դիմելով առանձնատան մոտ հավաքված մարդկանց՝ Կարապետյանը հայտարարել է, որ աջակցում է եկեղեցուն. «Ես եկեղեցու կողքին եմ, մեր ժողովրդի կողքին, թքած ունեմ իրենց վրա էլ, իրենց Էլեկտրական ցանցի վրա էլ, ամեն ինչ լավ է լինելու: Ժողովուրդը, մեկ է, իր խոսքն ասելու է, իրենք հասկանալու են»[10], փաշինյանական իշխանության կողմից միամիտներին խաբելու համար առաջ քաշված հերթական կեղծ թեզը ՀԷՑ-ի պետականացումն է, ինչը գրեթե անհնար է, նախ ֆինանսական մեծ ծախսերի պատճառով, հետո էլ այն կարող է սեփականության իրավունքի խախտման համար միջազգային դատական ատյաններում Հայաստանին պատասխանատվության առաջ կանգնեցնել, բացի այդ, անգամ ամենամիամիտ մարդու համար է պարզ, որ Փաշինյանի սիրելի օլիգարխ, ՔՊ-ական պատգամավոր Խաչատուր Սուքիասյանը, (որի ձեռքում կենտրոնացված է Հայաստանի հարստության առյուծի բաժինը) երբեք թույլ չի տա, որ ՀԷՑ-ը պետականացվի….

Սամվել Կարապետյանին ձերբակալելու հաջորդ օրը հայտնի դարձավ, որ Փաշինյանը իր հովանավոր Էրդողանի կողմից կանչվել է պատմական Կ. Պոլիս (Ստամբուլ), որտեղ մեկնելու օրը՝ հունիսի 20-ին, նա տվեց քաղաքական բռնաճնշումների ու ձերբակալությունների նոր փուլի մեկնարկը:

Նախ՝ «Սրբազան պայքար» տելեգրամյան ալիքը հայտարարություն տարածեց. «Հարգելիներ, հայտնում ենք, որ իրավապահ մարմիններն այս պահին իրականացնում են «Սրբազան Պայքարի» կողմնակիցների լայնամասշտաբ ապօրինի ձերբակալություններ:

Քաղաքական հետապնդումների այս ալիքի պատճառն անհասկանալի է: Փաստենք, որ այն մեկնարկել է Փաշինյանի՝ Թուրքիայում գտնվելու պահին»[11], կարճ ժամանակ անց ՀՅԴ Հայաստանի ԳՄ-ն հայտարարություն տարածեց. «Քիչ առաջ ապօրինի ձերբակալություններ և խուզարկություններ են իրականացվել ՀՅԴ մարզային կառույցների պատասխանատու ընկերների նկատմամբ: ՀՅԴ անդամների նկատմամբ քաղաքական հետապնդումների այս նոր փուլը մեկնարկել է Փաշինյանի՝ Թուրքիա կատարած այցին զուգահեռ: Անկախ զարգացումներից և բռնաճնշումների ծավալներից, փաստում ենք. որևէ բռնաճնշում չի կարող մեզ լռեցնել, այսպիսի գործելաոճն, ի վերջո, ծնելու է համարժեք հակազդեցություն»[12]: Իհարկե ազգային ամեն ինչի դեմ պայքարող ու Էրդողանին հաճոյանալ փորձող փաշինյանական վարչակազմի կողմից դաշնակցականների նկատմամբ բռնաճնշումները նորություն չեն վերջին 7 տարիների համար, և զարմանալի ու անսպասելի էլ չէ, քանի որ հայ իրականության մեջ հիմնականում Դաշնակցությունն է Թուրքիայի կոկորդին կանգնած այն ոսկորը, որը խանգարում է նրան կուլ տալ Հայաստանը:

Կատարված աշխատանքի այսպիսի հաշվետվությամբ Փաշինյանը ներկայացավ Էրդողանին, որի վերաբերյալ թուրքական կողմը հայտարարություն է տարածել. «Փաշինյան-Էրդողան հանդիպմանը քննարկվել է Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման ընթացքը, ընդգծվել երկխոսության շարունակականության և կոնկրետ արդյունքների հասնելու կարևորությունը: Մտքեր են փոխանակվել Հայաստան-Ադրբեջան խաղաղության գործընթացի, ինչպես նաև ՀՀ կառավարության «Խաղաղության խաչմերուկ» նախագծի շուրջ:

Երկու երկրների ղեկավարները վերահաստատել են պատրաստակամությունը՝ շարունակելու ուղիղ կապերն ու երկխոսությունը»: Այսքանը ՀՀ կառավարության հայտարարությունն է: Թուրքիայի նախագա-

հի մամուլի ծառայության հաղորդագրության առաջին կետով ասվում է, որ քննարկել են Բաքվի և Երևանի միջև խաղաղ կարգավորման, ինչպես նաև հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հարցերը: Էրդողանը շեշտել է Ադրբեջանի և Հայաստանի միջև խաղաղության բանակցությունների ընթացքում ձեռքբերված պայմանավորվածությունների կարևորությունը: Նա հայտարարել է, որ «Թուրքիան կշարունակի ամեն հնարավոր աջակցություն ցուցաբերել այդ ջանքերին: Հանդիպման ժամանակ քննարկվել են նաև Թուրքիայի և Հայաստանի միջև հարաբերությունների կարգավորման գործընթացի շրջանակներում ձեռնարկվելիք հնարավոր քայլերը[13]»: Մի քանի կցկտուր խոսք թուրքական կողմից, իսկ Հայաստանի իշխանական շրջանակներում, վախեցած լռություն, որին կարող է հաջորդել մեծ փոթորիկը: Իրան-Իսրայել պատերազմի պայմաններում, երբ Սյունիքի «միջանցքի» հարցում հայկական շահերը պաշտպանող (իր իսկ շահերից ելնելով) միակ երկիր Իրանը զբաղված է Իսրայել-ԱՄՆ տանդեմի դեմ իր գոյության իրավունքը պաշտպանելով, Հայաստանի համար կարող է հերթական ցեղասպանության իրավիճակը ստեղծվել:

Այն, որ Հայաստանն առաջիկա ամիսներին ավելի ծանր մարտահրավերների առջև է կանգնած լինելու, փաստում է նաև Փաշինյանի ջղագրգիռ կեցվածքն ու անգամ նրա «կնոջ» և ողջ թիմի՝ իրենց քննադատող հասարակ քաղաքացիների նկատմամբ ատելության ու թշնամանքի հրահրումը…: Այս ամենը, իհարկե, պայմանավորված է, ոչ թե նրանով, որ իշխող ռեժիմն անհանգստացած է Հայաստանի ճակատագրով, որն ինքն ամեն վայրկյան ավելի խորն անդունդն է գլորում, այլ սեփական ճակատագրով, որովհետև որքան վատանում է երկրի վիճակը, այնքան Փաշինյանը կորցնում է իր լեգիտիմությունն ու աջակիցներին՝ մնալով միայն իր կամակատարը դարձած ոստիկանական բիրտ ուժի հույսին, որով էլ առայժմ երկրի ներսում կարողանում է պահել իշխանությունը՝ լավ հասկանալով, որ այսպես երկար շարունակվել չի կարող: Միաժամանակ արտաքին ասպարեզում էլ է երբեմնի «ժողովրդավար» Փաշինյանը կորցնում իր դեմքը, մնալով միայն Թուրքիայի ու Ադրբեջանի աջակցության հույսին, սակայն այդ աջակցությունն էլ, անկախ թուրքական կողմի կամքից, կարող է ինչ-որ պահի ավարտվել, պայմանավորված Իրան-Իսրայել պատերազմի ընթացքով և հետևանքներով... Այս ամենի գիտակցումն էլ Փաշինյանին մղում է էլ ավելի խորացնել բռնաճնշումները, ապօրինություններն ու հաշվեհարդարները քաղաքական ընդդիմախոսների նկատմամբ՝ առանց այդ էլ ամեն ինչ կորցրած Հայաստանին վերադարձնելով 1990-ականների բռնապետական շրջան:

Այս իրավիճակում Հայաստանի ժողովրդի և ընդդիմադիր ուժերի (մասնավորապես՝ ՀՅԴ-ի կամ «Հայաստան» դաշինքի) առջև ծանր խնդիր է դրված պաշտպանել Հայաստանի ժողովրդավարական կարգերը բռնապետի վերածված Փաշինյանից և հնարավորինս արագ իշխանափոխության միջոցով ազատել Հայաստանը նրա տիրապետությունից՝ այդպիսով հնարավորություն ստանալով պաշտպանել Սյունիքն ու Հայաստանի մնացորդացը: Հակառակ դեպքում՝ Փաշինյանի պաշտոնավարումը կհանգեցնի Հայաստանի պետականության լուծարմանը, որի նշույլներն արդեն երևում են ինչպես Հայաստանում 300.000 ադրբեջանցիների վերաբնակեցման ծրագրով, այնպես էլ Երևանում «ղազիյաթ» ստեղծելու ադրբեջանական նպատակին ու Էջմիածինը «ադրբեջանական» հռչակելու քաղաքականության հետ փաշինյանական վարչակազմի համերաշխությամբ...

Մոտենում է, այն անխուսափելի օրը, երբ հայ ժողովուրդն ի՛նքը պետք է որոշի, ուզո՞ւմ է, որպես հայրենիք ու պետություն ունեցող ազգ իր տեղն ունենալ արևի տակ, թե՞ թույլ է տալիս լուծարել Հայաստանի Հանրապետությունը և վերածվել որևէ երկրի կազմում գոյատևող կրոնական համայնքի: ■

Հղումներ

1. https://www.pastinfo.am/hy/news/2025/06/20/%D5%A5%D5%AF%D5%A5%D5%B2%D5%A5%D6%81%D5%AB/1935695
2. https://armenia.news-pravda.com/armenia/2025/05/27/18043.html
3. Նույնը
4. https://www.azatutyun.am/a/kovkasi-mahmedakanneri-varchoutyouny-erevani-masnachyough-e-steghtsoum/33421146.html
5. https://168.am/2025/05/29/2222336.html
6. https://www.panorama.am/am/news/2025/06/02/%D5%84%D5%A1%D5%B5%D6%80%20%D4%B1%D5%A9%D5%B8%D5%BC%20%D5%B0%D5%A1%D5%B5%D5%BF%D5%A1%D6%80%D5%A1%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6/3132807
7. https://a1plus.am/hy/article/488463
8. https://www.hetq.am/hy/article/174870
9. https://newsarmenia.am/am/news/armenia/ekeghetsu-koghqin-em-tqatc-vonem-irents-vra-el-irents-eltsantsi-vra-el-samvel-karapetyan/
10. Նույնը:
11. https://t.me/srbazan_payqar/5881
12. https://www.yerkir.am/hy/article/2025/06/20/294714
13. https://yerkir.am/hy/article/2025/06/20/294743

Օգտագործված նյութերի ցանկ

1. https://www.pastinfo.am/hy/news/2025/06/20/%D5%A5%D5%AF%D5%A5%D5%B2%D5%A5%D6%81%D5%AB/1935695
2. https://armenia.news-pravda.com/armenia/2025/05/27/18043.html
3. https://www.azatutyun.am/a/kovkasi-mahmedakanneri-varchoutyouny-erevani-masnachyough-e-steghtsoum/33421146.html
4. https://168.am/2025/05/29/2222336.html
5. https://www.panorama.am/am/news/2025/06/02/%D5%84%D5%A1%D5%B5%D6%80%20%D4%B1%D5%A9%D5%B8%D5%BC%20%D5%B0%D5%A1%D5%B5%D5%BF%D5%A1%D6%80%D5%A1%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6/3132807
6. https://a1plus.am/hy/article/488463
7. https://www.hetq.am/hy/article/174870
8. https://newsarmenia.am/am/news/armenia/ekeghetsu-koghqin-em-tqatc-vonem-irents-vra-el-irents-eltsantsi-vra-el-samvel-karapetyan/
9. https://t.me/srbazan_payqar/5881
10. https://www.yerkir.am/hy/article/2025/06/20/294714
11. https://yerkir.am/hy/article/2025/06/20/294743

Ադրբեջանի Հանրապետության անդամակցությունը ՆԱՏՕ-ին. Անգլոսաքսոնական կարգերի հաջորդ քայլը Կովկասում

Ահմադ Քազեմի
Եվրասիայի հարցերով ավագ գիտաշխատող (Իրան)

2023 թվականի սեպտեմբերի Ղարաբաղյան երրորդ պատերազմը հանգեցրեց Ղարաբաղի անկմանը և այս տարածաշրջանում Ադրբեջանի Հանրապետության գերիշխանության հաստատմանը: Լուրջ խոսակցություններ սկսվեցին ՆԱՏՕ-ին Ադրբեջանի անդամակցության հնարավորության շուրջ, հատկապես բրիտանական, ամերիկյան և կանադական վերլուծական կենտրոններում: Սրա հիմնական պատճառն այն է, որ Ղարաբաղյան երրորդ պատերազմով, ինքնահռչակ Ղարաբաղի Հանրապետության կործանումով և Ադրբեջանի Հանրապետության ողջ տարածքում Բաքվի գերիշխանության հաստատմամբ վերացավ ՆԱՏՕ-ին Ադրբեջանի անդամակցության կարևորագույն խոչընդոտը: Որովհետև, համաձայն ՆԱՏՕ-ի կանոնադրության 5-րդ հոդվածի, այն երկրները, որոնք ունեն անջատողական շրջաններ, կենտրոնական իշխանության վերահսկողությունից դուրս գտնվող շրջաններ և ռազմական հակամարտություններ, չեն կարող դառնալ ՆԱՏՕ-ի անդամ: Ուստի մինչև 2023 թվականը Ղարաբաղի ինքնավար մարզի շուրջ հակամարտությունը խոչընդոտ հանդիսացավ Ադրբեջանի՝ ՆԱՏՕ-ին անդամակցելու համար, որն այժմ վերացվել է: Նման պայմաններում, նկատի ունենալով Ադրբեջանի արևմտամետ մոտեցումները, հարց է առաջանում՝ ինչպիսի՞ն է ՆԱՏՕ-ին Ադրբեջանի անդամակցության հեռանկարը: Այս առումով կարելի է նշել վեց կետ.

Առաջին. Հարավային Կովկասի բոլոր երեք երկրները համագործակցում են ՆԱՏՕ-ի հետ տարբեր մակարդակներով: Ադրբեջանի Հանրապետությունը Վրաստանից հետո ՆԱՏՕ-ի հետ համագործակցության առաջատար երկիրն է: Բաքվի համագործակցությունը ՆԱՏՕ-ի հետ դրսևորվում է հետևյալ կերպ՝ անդամակցություն ՆԱՏՕ-ի «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրին (PFP) (1994 թ. մայիսի 4), ՆԱՏՕ-ի հետ Անհատական համագործակցության ծրագրին (2004թ.), Եվրատլանտյան համագործակցության խորհրդին, ՆԱՏՕ-ի Խորհրդարանական վեհաժողովին, Էներգատարների անվտանգության ապահովման ծրագրին, այդ թվում՝ բնապահպանական համագործակցության քողի ներքո, ինչպես նաև մասնակցելով ՆԱՏՕ-ի ռազմական առաքելություններին, այդ թվում՝ Կոսովոյում (1999 թ.), Աֆղանստանում (2002 թ.) և Իրաքում, անցկացնելով վերապատրաստման համատեղ ուսումնաառազմական ու կիբեր դասընթացներ, համատեղ զորավարժություններ և Բաքվում «ՆԱՏՕ-ի օրեր» հատուկ ամենամյա ծրագրերի միջոցով: Այնպես որ, 1994 թվականից ի վեր Ադրբեջանի և ՆԱՏՕ-ի միջև անցկացվել են մեկ տասնյակից ավելի զորավարժություններ Ադրբեջանի Հանրապետությունում և երբեմն առանց հայտարարության Կասպից ծովում տարբեր անվանումներով, ինչպիսիք են՝ «Վճռական համագործակցություն 2001», «Տարածաշրջանային արձագանք 2009», «Արագ արձագանքման զորավարժություններ», «Փայլող թուր», «Կոլեկտիվ գործընկերություն», «Ձմեռային վահան», «Բաքու 2020» և այլն: Ղարաբաղյան երկրորդ պատերազմից մեկ տարի անց Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը մասնակցել է Բրյուսելում ՆԱՏՕ-ի Հյուսիսատլանտյան խորհրդի նիստին (2021 թ.) և հանդիպել նրա գլխավոր քարտուղար Յենս Ստոլտենբերգի հետ: Սա ՆԱՏՕ-ի անդամ երկրների, այդ թվում՝ Թուրքիայի հետ Ադրբեջանի Հանրապետության լայնածավալ ռազմական համագործակցությունից առանձին գործընթաց է:

Երկրորդ. ՆԱՏՕ-ի տեսանկյունից 2023 թվականից հետո Ադրբեջանի Հանրապետությունը ՆԱՏՕ-ին անդամակցելու համար հարմար տարբերակ է համարվում շնորհիվ Կովկասում և Կասպից ծովում իր աշխարհաքաղաքական դիրքի, Իրանի և Ռուսաստանի հետ հարևանության, ԱՄՆ-ի CENTCOM-ի և EUCOM-ի գործընկեր հանդիսացող Իսրայելի հետ ռազմավարական համագործակցության, ՆԱՏՕ-ի անդամ հանդիսացող Թուրքիայից կառուցվածքային ռազմական կախվածության, Իրանի հետ անհամաձայնության և պաշտոնական Թեհրանի հետ պարբերաբար առճակատման գնալու ձգտման, Եվրոպայի

ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Սթոլթենբերգ - Իլհամ Ալիև

Վլադիմիր Պուտին - Իլհամ Ալիև

էներգակիրների ապահովման հարցում դերակատարության, հատկապես ուկրաինական պատերազմից հետո, Կովկասից ռուս զինվորականներին վտարելու գործում արդյունավետ դերակատարության, ներառյալ Գաբալայի բազայի և ռուս սահմանապահների հարցը, Ռուսաստանի հետ կայուն համագործակցության փոխարեն արևմտականության գերադասման, և որպես արդյունք՝ ռուսակենտրոն հավաքական անվտանգության համակարգերին, այդ թվում՝ ՀԱՊԿ-ին միանալուց հրաժարման: Ուկրաինայի հետ համագործակցության և նրան ցուցաբերած գործնական աջակցության, հատկապես որ անդամակցության իրագործմամբ ՆԱՏՕ-ի կողմից Ադրբեջանի Հանրապետությունում բալիստիկ հրթիռներ որսացող համակարգերի տեղակայման հարցը՝ որպես Իրանի և Ռուսաստանի դեմ ուղղված միջոց, ավելի օպերատիվ ընույթ կստանա և կնվազեցնի հրթիռները դիտարկելու և որսալու ժամանակը՝ համեմատած Թուրքիայի Քյուրեչիկ քաղաքում գտնվող ՆԱՏՕ-ի ռադիոտեղորոշիչ կայանի հետ:

Երրորդ. Այնուամենայնիվ, ինչպես փաստում են որոշ արևմտյան վերլուծական կենտրոններ և փորձագետներ, ինչպիսին է Ջորջ Մոնաստրիակոսը, ՆԱՏՕ-ին Ադրբեջանի անդամակցության նախագիծը պետք է դիտարկել «թյուրքական ՆԱՏՕ-ի» գաղափարի իրականացման շրջանակում, որպես «թյուրքական աշխարհ ստեղծելու» բրիտանական դավադրության բաղկացուցիչ մաս, որի հիմնական նպատակը կլինի զսպել Իրանին, Չինաստանին և Ռուսաստանին, և Կենտրոնական Ասիայում ստեղծել թյուրքական բուֆերային գոտի Չինաստանի և ՆԱՏՕ-ի միջև: Այս տեսանկյունից ՆԱՏՕ-ին Ադրբեջանի Հանրապետության անդամակցության շնորհիվ ՆԱՏՕ-ի սահմանները Ռուսաստանի հետ կավելանան մոտ 300 կիլոմետրով, իսկ Իրանի հետ՝ ավելի քան 700 կիլոմետրով, ինչը ՆԱՏՕ-ին է՛լ ավելի հասանելի կդարձնի Կասպից ծովն ու Կենտրոնական Ասիան՝ Չինաստանի վրա ճնշում գործադրելու համար՝ հող պատրաստելով Ուզբեկստանի և Ղազախստանի առանցքի շուրջ Կենտրոնական Ասիայի երկրների ՆԱՏՕ-ին անդամակցության համար՝ նպատակ ունենալով ավարտին հասցնել «թյուրքական ՆԱՏՕ-ի» ստեղծման գաղափարը:

Չորրորդ. ՆԱՏՕ-ն, Անգլիայի առանցքով, տեղյակ լինելով Թուրքիայի նեոօսմանյան և պանթյուրքիստական հետաքրքրությունների մասին, ՆԱՏՕ-ին Ադրբեջանի անդամակցությունը որպես տարածաշրջանում «թյուրքական ՆԱՏՕ»-ի ստեղծման գաղափարի մաս, համարում է մեծ արտոնություն Բաքվի և Անկարայի համար: ՆԱՏՕ-ի տեսանկյունից սա կարող է արդյունավետ միջոց լինել Շանհայի համագործակցության կազմակերպությանը Թուրքիայի անդամակցությունը կանխելու համար, միևնույն ժամանակ, դա կարող է վերջ դնել Կիպրոսի հինգ տասնամյա ճգնաժամին՝ ստանալով Թուրքիայի համաձայնությունը Կիպրոսի ՆԱՏՕ-ին անդամակցելու վերաբերյալ, առաջարկելով Թուրքիային դուրս գալ Հյուսիսային Կիպրոսից՝ «թյուրքական ՆԱՏՕ-ի» առաջանորդը դառնալու, Արևելյան միջերկրածովյան գազային ֆորումում Անկարայի մասնակցության և Եվրամիությանն անդամակցության գործընթացը դյուրացնելու դիմաց:

Հինգերորդ. Ի տարբերություն Վրաստանի, որը 2008 թ. պաշտոնապես դիմեց ՆԱՏՕ-ին անդամակցելու համար և քիչ անց բախվեց Հարավային Օսիայի, Ռուսաստանի ներխուժման և, ի վերջո, ՆԱՏՕ-Վրաստան հանձնաժողովի ապարդյուն ստեղծման ճգնաժամին, Ադրբեջանը մինչև 2023 թվականը փորձել է ՆԱՏՕ-ի հետ իր հարաբերությունների ընդլայնման գործընթացն առաջ տանել առանց որևէ սկանդալի: ՆԱՏՕ-ի հետ Ադրբեջանի համագործակցության դիագրամը վերընթաց միտում ունի, իսկ Բաքուն ունի ՆԱՏՕ-ին անդամակցելու այլ լուրջ դրդապատճառներ ևս: ՆԱՏՕ-ին անդամակցելը կարող է նվազեցնել Եվրոպայի կողմից մարդու իրավունքների հարցերի քննադատությունը, քանի որ Արևմուտքի աշխարհընկալմամբ ՆԱՏՕ-ն ներկայացվում է որպես ժողովրդավարություն կերտող կազմակերպություն:

Այսպիսով, կարող է իրագործվել նաև ադրբեջանական ինքնության (Azerbaijancholig) վերափոխումը՝ անցնելով թուրքական ինքնությանը (Turkcholig), ինչը նշանակում է ոտնահարել Հեյդար Ալիևի սկզբունքները և երկրի սահմանադրությունը՝ ի դեմս «թուրքական ՆԱՏՕ»-ի ծրագրում Բաքվի դերակատարության: Միևնույն ժամանակ, ՆԱՏՕ-ին անդամակցելով՝ Բաքուն կթուլացնի Երևանի կողմից ռևանշի հնարավորությունը հետփաշինյանական ժամանակաշրջանում՝ Ղարաբաղի հարցի և 120.000 ղարաբաղահայության արտաքսման պատճառով: Հատկապես, որ Հայաստանը մի կողմից, գիտակցելով Բաքվի ՆԱՏՕ-ին մերձենալու ուժեղացող մոտեցումն ու դրա հետևանքները, իսկ մյուս կողմից՝ օգտվելով Կովկասում Ռուսաստանի սխալներից, փորձում է հետ չմնալ ՆԱՏՕ-ի հարցում: Այս տեսանկյունից Եվրամիությանը միանալու և ՆԱՏՕ-ի հետ համագործակցելու Հայաստանի ցանկությունը նույնպես դիտվում է որպես «թյուրքական ՆԱՏՕ-ի» ստեղծումը կանխելու նախահարձակ քայլ: Այս գործընթացի ուժեղացումը կարող է կրկնել ՆԱՏՕ-ին երկու հակադիր բևեռների՝ «Հունաստանի և Թուրքիայի» անդամակցության փորձը, այս անգամ «Ադրբեջանի և Հայաստանի» անդամակցությամբ, ինչը ևս մեկ հարված կլինի Մոսկվայի, Թեհրանի և Պեկինի համար:

Վեցերորդ. Նկատի ունենալով նախորդ պարբերությունը, կարելի է ասել, որ Ռուսաստանին և Իրանին խաբելու Ադրբեջանի ռազմավարությունը իրականացման լուրջ փուլում է: Ադրբեջանի Հանրապետությունը, ինչպես երևաց նաև Իլհամ Ալիևի օգնական Հիքմեթ Հաջիևի՝ Իրան կատարած այցի ժամանակ, փորձում է այնպես ներկայացնել, թե Ադրբեջանի կողմից ոչ մի սպառնալիք չի կարող լինել Իրանի դեմ: Մյուս կողմից, Բաքուն, ներկայումս փոխանցելով ռուսական գազի մի մասը և օգտվելով Մոսկվայի և Երևանի հարաբերություններում առկա լարվածությունից, փորձում է հանդես գալ որպես կովկասյան տարածաշրջանում Ռուսաստանի դաշնակից: Սա այն դեպքում, երբ Ադրբեջանի Հանրապետությունը, գործնականում խախտելով 2020 թվականի Մոսկվայի համաձայնագիրը՝ 2023 թվականին Ղարաբաղի վրա հարձակվելով, որն ի վերջո հանգեցրեց Ղարաբաղից ռուս խաղաղապահների դուրսբերմանը, ոչ միայն զրկեց Մոսկվային խաղաղապահ առաքելության հնգամյա երկարաձգման միջոցով Ղարաբաղում երկարաժամկետ ներկայությունից, այլև հենց Ռուսաստանի մասնակցությամբ վերացրեց ՆԱՏՕ-ին Բաքվի անդամակցության ամենակարևոր խոչընդոտը: Այս խաբեության ռազմավարության խորությունը կարելի էր հասկանալ այն ժամանակ, երբ մի կողմից՝ Մոսկվան բարձր գին արժեցող պատերազմի գնաց Ուկրաինայի դեմ՝ հակազդելու ՆԱՏՕ-ի ընդլայնմանը Արևելյան Եվրոպայում, իսկ մյուս կողմից՝ Կովկասում, ընկնելով «Բաքու-Անկարա-Լոնդոն» եռյակի ծուղակը, մեծապես ուժեղացրեց ՆԱՏՕ-ի ընդլայնման հեռանկարն այս տարածաշրջանում՝ նպաստելով ՆԱՏՕ-ին անդամակցության խոչընդոտի վերացմանը Բաքվի համար: Այդ կարևոր պատճառով է, որ ՆԱՏՕ-ն Անգլիայի առանցքայնությամբ որևէ արդյունավետ քայլ չձեռնարկեց 2023 թվականին Ղարաբաղի բնիկ հայերի էթնիկ զտումների դեմ և նույնիսկ Անվտանգության խորհրդի նիստում պաշտպանեց Ադրբեջանին, քանի որ նրանց համար ՆԱՏՕ-ում Արևմուտքի նկատմամբ երեք տասնամյակ հավատարմություն ցուցաբերած Բաքվի անդամակցության ամենակարևոր խոչընդոտի վերացումն ավելի կարևոր է, քան Ղարաբաղում հայ փոքրամասնության իրավունքների հարցը, կամ քրիստոնյա աշխարհի հետ համերաշխությունը: Բաքուն, 1992 թ. և 2001 թ. միանալով Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպությանը և Եվրոպայի խորհրդին, իսկ 1997 թ. հիմնադրելով ՎՈՒԱՄ-ի դաշինքը, խուսափելով ռուսամետ կառույցներին միանալուց, ինչպիսիք են Եվրասիական մաքսային միությունը և Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունը, ցույց է տվել, որ, չնայած մի շարք մարտավարական և հատվածական գործողություններին, իր հիմնական առաջնահերթությունն ու ուղղվածությունը Արևմուտքն ու ՆԱՏՕ-ն են: Այնպես որ պաշտոնական տվյալներով՝ Ադրբեջանը ՆԱՏՕ-ի հետ համագործակցում է տարեկան ավելի քան երկու հարյուր միջոցառումների, այդ թվում՝ «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի և անհատական համագործակցության շրջանակներում: Հետևաբար, թվում է, որ ապագա հեռանկարում Ադրբեջանի անդամակցությունը ՆԱՏՕ-ին՝ «թյուրքական ՆԱՏՕ-ի» գաղափարի իրականացման նպատակով, կլինի Կովկասում անգլո-սաքսոնական ճակատի ամենակարևոր քայլը՝ հակաիրանական, հակառուսական և հակաչինական նոր կարգեր հաստատելու համար, որն ի տարբերություն Վրաստանի, Ուկրաինայի, Ֆինլանդիայի և Շվեդիայի փորձի, տեղի կունենա արագ և անակնկալ կերպով: ■

https://ahmadkazemi.com/?p=9211&lang=hy

Թվում է, թե կասպյան խավիարասերների ժամանակներն ավարտվում են

Վալերիա Օլյունինա

Ամենամեծ զզվանքն առաջացնում են ադրբեջանամետները, Իլհամի ռուս եղբայրներն իրենց հարեմային սիրով և հարստանալու անհագուրդ ծարավի վտանգավոր խառնուրդով- https://t.me/armrusforever/9146 (23-ը մայիսի 2025 թ.)

Բազմիցս Հայաստան և Արցախ այցելած ռուս լրագրող, Վ.Բ. Արծրունու անվան սևծովյան-կասպյան տարածաշրջանի քաղաքական և սոցիալական հետազոտությունների ինստիտուտի առաջատար գիտաշխատող, «Наша среда» (Մեր միջավայրը) կայքէջի գլխավոր խմբագիր Վալերիա Օլյունինան տելեգրամ ալիքում գրում է.

«Ինձ երբեմն վիճակվել է մասնակցել որոշ եվրասիական միջոցառումների: Ընդ որում, իմանալով, որ ես աջակցում եմ Հայաստանին՝ ինձ խնդրում էին գտնել ինչ-որ «ադեկվատ հայերի» այդ «կլոր սեղանների» համար: Այսինքն՝ նրանց, ովքեր կարող էին խոսել Դուգինի (Դուգինի դստերը սպանեցին ուկրաինացիները՝ ռումբ տեղադրելով մեքենայում) եվրասիականության մասին՝ թեքված դեպի թուրքամետություն և Անկարա վազվզոցի մասին՝ բանակցելու «սիրելի, հարգելի գործընկերների» հետ: Այն բանից հետո, երբ նրանք սպանել էին մեր դեսպաններին ու սպաներին: Կամ՝ Մեծ Թուրանի մասին, որում հայերը պետք է ներառվեն, որպեսզի ընդմիշտ անհետանան ասպարեզից: Ադրբեջանցիներն այդտեղ հետևում էին երկու հոետորաբանության.

«Վատ ՆԱՏՕ, վատ գլոբալիզմ»:

«Ռուսաստանը հենց թուրանն է»:

«Նրանց ադեկվատ հայեր» ես չունեի, բայց կային այնպիսիք, ովքեր կատաղի պաշտպանում էին մեր քաղաքակրթությունը, մինչ Դուգինը լիզում էր օսմանների հետույքը, քանի դեռ իր դերը չէր փոխել, պատմուճան հագել և ռուս երիտասարդությանը կոչ արել շուրջպար բռնել ու ատել Արևմուտքը:

Ինքը՝ Դուգինը, ոչ Արեւմուտքն էր ատում, ոչ Թուրքիան: Եվ երբեք շուրջպար չէր պարել, մածնաբրդոշ չէր կերել: 1990-ականներին նա Կուրեխինի հետ բեմադրեց զանազան միստերիաներ բրիտանացի հետախույզ և օկուլտիստ Քրոուլիի հիշատակին, իսկ թուրքերի հետ, բուռն խնջույքներից արբշիռ, միաձուլվել էր, ըստ երեւույթին, այդպես պոկելով Թուրքիան ՆԱՏՕ-ից:

Եվ ինչ պոկեց: Դուգինի վաստակը ընդամենը «պոկելու» պատրանքն էր «Վաթան» կուսակցությանը, որին թույլատրվել էր աշխատել դուգինականների հետ: Ընդ որում, Փերինչեքները, թե հայրը՝ Դողուն, թե որդին՝ Մեհմեդը, կատաղի հայատյաց են: Եվ ռուսներին շոյելու համար գլխով էին անում, թե իբր «Ղրիմը ձերն է»:

Դողու Փերինչեքին՝ հենց նրան, ում հետ տասնամյակներով աշխատել էր Դուգինը, 2012-ի հունվարին Էրդողանը 16 տարվա բանտարկության դատապարտեց: Բայց պայմանավորվեցին: Կասկած չկա, որ Փերինչեքների կուրատորները նույնն են, ինչ նրանք, ովքեր թիկունքից խփում են ռուսներին: Եթե այդպես չլիներ, Դողուն, որ այդքան ատում էր Ամերիկան, ազատ չէր արձակվի:

ՌԴ-ում հինգերորդ շարասյունը բաղկացած է տարբեր ուժերից: Բայց դեռ ինչ-որ կերպ կարելի է հասկանալ, թե ինչով են առաջնորդվում արյունոտ փահլավայի թուրքամետ սիրահարները:

Օսմանյան կայսրությունը քաղաքակրթություն է, սակայն գոյաբանական թշնամի մեզ համար:

Ամենամեծ զզվանքն առաջացնում են ադրբեջանամետները, Իլհամի ռուս եղբայրներն իրենց հարեմային սիրով և հարստանալու անհագուրդ ծարավի վտանգավոր խառնուրդով»: Այսուհանդերձ, թվում է, թե թավ մորուքով պաճուճված կասպյան խավիարասերների ժամանակներն ավարտվում են: ■

Դաշնակցական անմահ նահատակը՝ Սարգիս Զէյթլեան (Առեւանգման քառասունամեակին առիթով)

Տիգրան Ճինպաշեան
Ազգային, կրթական, կուսակցական գործիչ

28 մարտ 1985-ի առաւօտուն, «Համազգայինի» Նշան Փալանճեան ճեմարանի մօտակայքը, ճեմարանի մէջ հաստատուած դէպի «Համազգայինի» տպարան ճամբուն վրայ, անծանօթներու կողմէ առեւանգուեցաւ (իր ընկերակցին՝ Կարօ Գոլանճեանին հետ) Հ.Յ.Դ Բիւրոյի անդամ եւ «Ազդակ-Շաբաթօրեակ-Դրօշակ» շաբաթաթերթի խմբագիր Սարգիս Զէյթլեան:

Ո՞վ էր Սարգիս Զէյթլեան:

Ծնած էր 1930-ին, Մուսա լեռան Խտրպէկ գիւղը: Մուսա լեռցիներու երկրորդ գաղթականութեան՝ 1939-ին ծնողներուն հետ փոխադրուած է Լիբանանի Պէքաա դաշտավայրի Այնճար կոչուած շրջանը, որ ճախճախոտ, անբնակ տափաստան մըն էր: Սկիզբը վրանաքաղաք, ապա մէկ սենեականոց բնակարաններով Այնճարի մէջ երբ 1943-ին կը բացուի «Հառաջ» վարժարանը, Սարգիս Զէյթլեան կ'աշակերտէ անօր մինչեւ 1946: 1946-ին իբրեւ սան կ'ընդունուի Երուսաղէմի «Ժառանգաւորաց» վարժարանը, ուր կմնայ մինչեւ 1950-ի Հունիս ամիսը: Նոյն տարուան Հոկտեմբերին կ'ընդունուի «Համազգայինի» Հայ ճեմարանը (հետագային՝ Նշան Փալանճեան ճեմարան, այժմ՝ Մելանքթոն եւ Հայկ Արսլանեան ճեմարան): Ճեմարանը, որուն տնօրէնը՝ Լեւոն Շանթ մահացած է 1951-ին եւ փոխարինուած Սիմոն Վրացեանով, Սարգիս Զէյթլեան կ'աւարտէ 1953-ի Հունիսին: 1951-էն սկսել ճեմարանի մէջ հաստատուած Հայագիտական դասընթացքին երկու տարի (1952-1954) հետեւելէ ետք (դասախօսներէն մէկը Կոստան Զարեանն է), Սիմոն Վրացեանի յանձնարարութեամբ կը մեկնի Գահիրէ (Եգիպտոս), իբրեւ ուսուցիչ Գալուստեան ազգային վարժարանին: Ազգային կը կոչուին Հայ Եկեղեցւոյ հովանաւորութիւնը վայելող դպրոցները, ընդհանրապէս տարրական (մինչեւ 6-րդ դասարան):

Սարգիս Զէյթլեան 1954-էն 1958 չորս կրթական տարեշրջան Հայոց պատմութիւն կը դասաւանդէ Գալուստեան վարժարանին մէջ: Կապի մէջ է Հ.Յ.Դ. Եգիպտոսի օրգան «Հուսաբեր» օրաթերթի խմբագրութեան հետ, որուն կ'անդամակցի 1955-ի Հոկտեմբերէն սկսեալ: Խմբագիր Վահան Նավասարդեանի մահէն ետք (24 Հունիս 1956), 1958-ին կ'դառնայ խմբագիր «Հուսաբեր»ի: Այս պաշտօնին վրայ պիտի մնայ մինչեւ 1963, երբ կը վերադառնայ Այնճար (Լիբանան):

Իր ուսուցչական և խմբագրական աշխատանքներուն առընթէր Սարգիս Զէյթլեան կծաւալէ հասարակական բուռն գործունէութիւն, իբրեւ անդամ եւ ներկայացուցիչ Գահիրէի Հ.Յ.Դ. կոմիտեին:

Այնճարի մէջ 1963-էն 1965, երկու տարեշրջան տնօրէնն է «Հառաջ» վարժարանին, որուն մակարդակը կը

հաջողի բարձրացնել երկրորդականի (աւագ դպրոց): Միաժամանակ ներկայացուցիչն է Հ.Յ.Դ. «Կարմիր Լեռ» կոմիտեին:

Երբ 1 Հունիս 1965-ին «Ազդակ» օրաթերթը, որ սեփականութիւնն էր Հայկ Պալեանի և 1927-էն ի վեր կը ճանչցուեր իբրեւ կիսապաշտօնական օրկանը Հ.Յ. Դաշնակցութեան, կը դառնայ Հ.Յ.Դ. Լիբանանի կեդրոնական կոմիտեութեան պաշտօնաթերթը, Սարգիս Զէյթլեան կը հրաւիրուի իբրեւ խմբագիրներէն մեկը «Ազդակ»ի: 1966-ի ամրան աւարտին կը նշանակուի «Համազգային» ընկերութեան վարիչ-քարտուղար: Միաժամանակ կը դասաւանդէ ճեմարանի մէջ:

Սարգիս Զէյթլեան Հ.Յ.Դ. Լիբանանի կեդրոնական կոմիտէի անդամ կը դառնայ 1968 մայիսին, կեդրոնական կոմիտէի անդամակցութիւնը կը շարունակուի մինչեւ 1972 (կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ 1969-ի Դեկտեմբերէն սկսեալ):

Սարգիս Զէյթլեան ՀՅԴ Բիւրոյի անդամ կ'ընտրուի 1972 Դեկտեմբերին, 20-րդ Ընդհանուր ժողովին: Կը վերընտրուի 1978-ի 21-րդ եւ 1981-ի 22-րդ Ընդհանուր ժողովներուն: Լիբանանի կեդրոնական կոմիտէի եւ Բիւրոյի անդամակցութեան տասնեօթ տարիները բեղուն գործունէութեան շրջան մը հանդիսացան Մամլոյ դիւանի ստեղծումէն մինչեւ «Դրօշակ»ի խմբագրու-

թիւն, այդ տարիները լիքն են հասարակական, ազգային եւ կուսակցական գործունէութեամբ: 1975-ին սկսուած Լիբանանի քաղաքացիական տարօրինակ պատերազմը (ուրիշներու պատերազմը Լիբանանի հողին վրայ) խլած է իր ճիգերուն մեծագոյն մասը եւ անակնկալօրէն աւարտած 1985-ի մարտին:

Գոյութիւն ունի դաշնակցական գործիչներու վաստակը գնահատելու դաշնակցական աւանդութիւն մը, երբ ողջ են եւ գիտակից ըլլալով իրենց կատարածին ոչ ընթացիկ, ոչ սովորական նկարագրին, կը խորշինք գովաբանելէ, նոյնիսկ գնահատելէ: Մենք աւելի կը քննադատենք, քան կը գնահատենք: Հ.Յ. Դաշնակցութեան բարոյական շքեղ կառոյցին պարտադրանքն է ասիկա: Դաշնակցականը կամաւոր զինուոր է ու իր հանդիսաւոր երդումով յանձն առած է «բոլոր միջոցներով» ծառայել Հայաստանի ու հայութեան ազատագրութեան դատին: Երբ դաշնակցականը իր հնարաւորութիւններուն առաւելագոյնը կը նուիրաբերէ որոշապէս հաւատարիմ եղած կ'ըլլայ իր երդումին:

Մարդկային տկարութիւնները, կողմնակցական պայքարները, մէկը շատ սիրելու եւ զայն չափազանցուած կերպով գնահատելու, ուրիշ մը չհաւնելու մարդկային մղումները կրնան պատճառ դառնալ, որ արժանաւորը արդարօրէն չգնահատուի, իսկ նուազ արժանաւորը՝ անտեղիօրէն փառաբանուի: Կը խուսափինք խոտելի այս երեւոյթէն ու մարդոց վաստակը չենք գնահատեր իրենց ողջութեան: Մահը կը վերցնէ արգելքը: Իր ծառայութեան ընթացքը աւարտող հանգուցեալը կը ստանայ արժանի գնահատանք, իր արժանիքները վեր կ'առնուին, կ'արժեւորուի իր վաստակը:

Սարգիս Ջէյթլեանի պարագան այս տեսակէտէն եզակի եղաւ սակայն: Առեւանգուելով 28 Մարտ 1985-ին անծանօթներու կողմէ, ան վերածուեցաւ հետազօտման պարագայի մը, որուն մասին վախցան վկայելու նոյնիսկ ականատեսները: Հաւանական գիտակները պահուըտեցան սուտ տեղեկութիւններու ետին, կազմակերպողներն ու գործադրողները գաղտնիութեան չքմեղանքով պաշտպանութիւն գտան:

Մօտ մէկ ու կէս տարուան հակասական տեղեկութիւններէ, վերիվայրումներէ, հաղորդագրութիւններէ, «հարցաքննութիւններու» հրապարակումէն եւ անուանարկումի տգեղ փորձերէն ետք՝ «Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն-Յեղափոխական շարժում անգոյ կազմակերպութեան անունով կարճ հաղորդագրութիւն մը, 23 Հոկտեմբեր 1986-ին հանրութեան կը հաղորդէր, որ Սարգիս Ջէյթլեան ենթարկուած է «մահապատիժի»: Ոչ մէկ խօսք իրէն ընկերացող եւ իր հետ առեւանգուած Կարօ Գոլանճեանի մասին, որուն հետքը անհետ կորած է:

Այնուհետեւ լռութիւն տիրեց: Տեղեկութիւնը ստուգելու ու ի հարկին դիակները գտնելու փորձերը ձախողութեան դատապարտուեցան:

Ստացուած հազուագիւտ տեղեկութիւններու հրապարակումը, պաշտօնական ամբաստանութիւնները զանց առնուեցաւ, չվնասելու համար ճշմարիտ արդիւնքի մը հնարաւորութեան:

Ծնողներու եւ եղբայր քոյրերու հետ, կեդրոնում՝ Սարգիսը

Սակայն ապարդիւն:

Չենք կրնար փակուած համարել հարցը. Սարգիս Ջէյթլեան երկար տարիներ սպասեց իր արժանապատիւ հուղարկաւորութեան, որ տեղի չունեցաւ. սպասեց իր վիթխարի վաստակին գնահատման ու արժեւորման: Անիմաստ է ոստիկանական ու դատական հետաքննութիւններու ոճով փաստարկութիւններ կատարել: Սակայն փաստը կը մնայ փաստ: Լիբանանի խռովված կեանքը հանդարտեցաւ, առեւանգեալներ վերադարձան տուն, սպաննուածներու աճիւններ յանձնուեցան ընտանիքներուն, սակայն տասնեակներով ուրիշներու ճակատագրին մասին ստոյգ, շօշափելի, իրական փաստեր չփոխանցուեցան ու անոնք տարաբախտաբար կը պակսին մինչեւ այսօր:

Լիբանանի Քաղաքացիական պատերազմը աւարտեցաւ պատերազմի իշխաններու համաձայնութեամբ, ոչ հաղթական ոչ պարտեալ սկզբունքի հիման վրայ. սկզբունք մը, որ եթէ վէրքերը արագօրէն դարմանելու հնարաւորութիւն կ'ընձեռէր, սակայն, միւս կողմէ բացայայտ ոճիրներ ծածկելու հնարաւորութիւն կը ստեղծէր նաեւ: Չի խօսուիր հարիւրաւոր ու հազարաւոր ոճիրներու մասին, ընդհանուր ներման օրէնքը կը ծածկէ բոլորը լռութեան շղարշի մը տակ: Չի խօսուիր նաեւ մեր ընկերներու առեւանգման ու սպանութեան մասին: Լիբանանի պետութիւնը ինքզինք

Երուսաղէմի «Ժառանգաւորաց» վարժարանի մէջ, ձախէն աջ՝ Պօղոս Մնապեան, Սարգիս Զէյթլեան, Յակոբոս Քեշիշեան

զրկած է ոճրագործները յայտնաբերելու ու պատժելու իրաւական հիմքէն:

Ո՞վ գործեց ոճիրը: Ո՞վ ծրագրե՛ց զայն: Լիբանանի մէջ վխտացող գաղտնի սպասարկութիւնն՝ը, թրքակա՞ն սպասարկութիւնները, խորհրդային սպասարկութիւնն՝ը, ուրիշն՝ը: Ի՞նչ դեր խաղացին եղածին մէջ լիբանանեան կողմեր, որոնք իրենց մարդկային հնարաւորութիւնները ի սպաս դրին արտաքին ուժերու եւ, իրենց հայրենիքի քանդումին զուգահեռ, յաճախ մութ ու անխոստովանելի արարքներու անձնատուր եղան:

Որքա՞ն հիմնական եղաւ դերը «Գաղտնի Բանակ» կոչուած համախմբումին, իբրեւ թէ Հայաստանի ազատագրութեան նուիրուած, հայանուն մարդոց կողմէ ստեղծուած, սակայն Հայաստանի ազատագրութեան եւ հայութեան նպատակներու ծառայութենէն հեռու, այլ տարբեր եւ խորթ նպատակներու ծառայութեան լծուած այդ խմբակին, որ խոովեց մեր կեանքը եւ իր ներքին գալարումներով մեծամեծ վնասներ հասցուց այն նպատակին, որուն ենթադրաբար կը ծառայէր:

Այն մութ ուժերը, որոնք իրագործեցին թէ՛ Սարգիս Զէյթլեանի առեւանգումն ու ահաբեկումը, թէ մեր այլ ընկերներու առեւանգումներն ու ահաբեկումները, տակաւին չեն յայտնաբերուած ու չեն վճարած իրենց ոճիրներուն գինը: Պիտի գա՛յ օրը, երբ ամբողջական լոյս պիտի սփռուի կատարուածին վրայ եւ պիտի բացուին մութ ծալքերը: Այն ատեն պէտք է նաեւ հնչէ արդար հատուցման ժամը:

Նահատակութիւնը դաշնակցականին ճակատագրին մաս կը կազմէ, եւ նահատակներու արիւնն է, որ իրական կը դարձնէ դաշնակցական երդումին իմաստը, «իսկ եթէ հարկ ըլլայ՝ նաեւ կեանքիս գնով»ը: Կը վկայենք, որ Զէյթլեան ծառայեց Հայաստանի եւ հայութեան ազատագրութեան դատին իր բոլոր միջոցներով, մինչեւ իսկ՝ իր կեանքին գնով: Սարգիս Զէյթլեանի հետաքրքրութեան ողջ աշխարհը եղած են Հայաստանն ու հայութիւնը, հայ գրականութիւնն ու Հայոց պատմութիւնը, հայ մշակոյթն ու Հայ Դատը: Զանազան փոփոխութիւններով հանդերձ, իր աշխատանքային ասպարէզը միշտ կը մնայ դպրոց-մամուլ-կուսակցութիւն եռանկիւնին մէջ: Մտաւորականը եւ հրապարակախօսը մասամբ կը վարագուրեն կազմակերպական ազդու եւ ներգործօն աշխատանք տանող այս ընկերոջ անցեալը: Հաստատենք, սակայն, որ իր ներկայութիւնը տիրական եղաւ թէ՛ լիբանանեան եւ թէ՛ համակուսակցական բեմին վրայ, ամբողջ քսանամեակ մը: Երկու հիմնական ուղղութիւն Սարգիս Զէյթլեանի կազմակերպական կեանքին մէջ կ՚արժէ առանձնացնել իբրեւ տիրական իրագործում այդ քսանամեակի ընթացքին:

Լիբանանի մէջ, ուր մեր ժողովուրդը համախումբ կ՚ապրէր հայահոծ շրջաններու մէջ, ներքին տագնապներ ունէինք այն ժամանակ: Մեր կեանքը կը խոովէին վնասակար տարրեր, ցեցեր: Սարգիս Զէյթլեանը այդ ցեցերէն եւ այդ վնասակար տարրերէն մեր իրականութիւնը մաքրելու գծով վճռական եւ շնորհաշատ աշխատանք տարաւ: Հայ մարդու արժանապատուութիւնը խոցող, ժողովուրդը շահագործող տարրերու մաքրագործումին ընկերացաւ Դաշնակցութեան շարքերու բիւրեղացման կարեւոր ճիգ մը: Հազիւ Կեդրոնական Կոմիտէի անդամ դարձած, Սարգիս Զէյթլեան իր ընկերներուն հետ միասին լծուեցաւ շարքերու բիւրեղացման գործին: Սարգիս Զէյթլեանի կազմակերպական կեանքին մէջ ամէնէն նշանակալի իրողութիւններէն մէկը Լիբանանի Երիտասարդական Միութեան կազմակերպումն է: Չունէինք երիտասարդական միութիւն Լիբանանի մէջ: Երիտասարդական միութիւններ կային քանի մը գաղութներու մէջ, Ամերիկաներու մէջ, երիտասարդական միութիւն եղած էր նաեւ Եգիպտոսի մէջ: 1972 թուականէն սկսեալ, երբ բազմաթիւ առիթներով Լիբանանի պատանեկան միութիւնները վերակազմակերպելու, զանոնք բարելաւելու գծով աշխատանք կը տանէինք, մինչեւ այսօր՝ ականջիս մէջն է իր պատգամը, 1973-ին երիտասարդական միութիւն ստեղծելու մասին: Լիբանանի ՀՅԴ երիտասարդական միութիւնը ստեղծուեցաւ ա՛յն պատկերացումով, ա՛յն գաղափարով, որ ի՛նք կը թելադրէր: Լիբանանի երիտասարդական միութեան օրինակը շուտով դարձաւ համատարած, աշխարհի չորս ծագերուն, եւ այսօր մենք երիտասարդական համահայկական շարժում ունինք, ծրագրուած ու կանոնակարգուած գործունէութեամբ, որուն մտայղացումը կը պարտինք Սարգիս Զէյթլեանին:

Սարգիս Ջէյթլեանի կուսակցական գործունէութեան սկզբնաւորումը մասամբ զուգադիպեցաւ Լիբանանի համար շատ պայծառ մէկ ժամանակաշրջանին: 70-ական թուականներու սկիզբը, մինչեւ 1975, երբ տակաւին քաղաքացիական պատերազմը չէր սկսած, Լիբանանի հայկական կեանքը այնքա՛ն եռուն էր, որ մենք մէզ փոքրիկ Հայաստանի մէջ կը զգայինք: Եկաւ պատերազմը, եւ այդ պատերազմի ժամանակ մեր ակումբները, մեր կազմակերպութիւնները, մեր միութիւնները, մեր մշակութային աւանդները, ինչ որ կրցեր էինք տարիներու ընթացքին կուտակել, յառաջացաւ պահպանելու, այդ բոլորը Հայաստանի՛ն համար պահպանելու պարտաւորութիւնը: Օրուան պահանջին համապատասխանող քաղաքականութիւն պէտք է մշակուէր ու այստեղ եւս «Դրական չէզոքութիւն» անուան տակ մշակուած քաղաքականութեան պահպանման մէջ մեծ եղաւ Սարգիս Ջէյթլեանի ներդրումը: Դրական չէզոքութիւնը չէր նշանակեր, որ հայութիւնը անտէր պիտի մնար: Ու ամէն անգամ, որ հայկական թաղամասերու պաշտպանութեան հարց ծագեցաւ, ամէն անգամ որ առհասարակ հայ մարդոց ինքնապաշտպանութեան ապահովութեան եւ անվտանգութեան խնդիր դրուեցաւ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան առջեւ Լիբանանի քաղաքացիական պատերազմի տեւողութեան, Սարգիս Ջէյթլեանը գտանք պատնէշի վրայ, անխոնջ ներկայութեամբ, ակումբներէն ներս մնայուն կերպով հսկող՝ երիտասարդներու գործին: Տագնապի ծանր պահերուն ան յանձնառու ղեկավարն էր, որ իր տունը նստած հրահանգներ չէր ղրկեր, այլ անձնապէս կ՚առաջնորդէր գործը:

Այդ տարիներուն կը զուգադիպի նաեւ գաղափարական բիւրեղացման աշխատանքը: Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը իր ծրագիրը շատո՞նց, շատոնց չէր վերանայած, իսկ շատ գաղափարաբանութիւններ վերարժեւորուած էին: Մերձաւոր Արեւելքի մէջ պաղեստինեան դիմադրութիւնը ներգործօն ազդեցութիւն ունէր մեր երիտասարդութեան վրայ, ձախակողմեան գաղափարներ անդադար կը տարածուէին մեր գաղութներուն մէջ: Խորհրդային Միութեան ազդեցութիւնը կը զօրանար Մերձաւոր Արեւելքի մէջ, ուր պաղեստինեան դիմադրութեան զօրավիգ կանգնելու քօղին տակ, ան թափանցած էր այդ երկիրները ու կը հալածէր մեզ: Այս բոլորը պատճառ կը դառնային, որ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը մտածէր իր ազգային գաղափարաբանութիւնը վերանորոգելու մասին: Շատ դիւրին էր օրուան տրամադրութիւններուն տուրք տալ եւ բոլորովին ձախ թեքումով ծրագիր մը մշակել: Սակայն Դաշնակցութիւնը որդեգրեց չափաւոր ու հաւասարակշռուած գաղափարական ուղղութիւն: Սարգիս Ջէյթլեան հոս եւս ունեցաւ կարեւոր ներդրում:

Ըսուեցաւ, որ Սարգիս Ջէյթլեան, մէկնելով իր հրապարակային ելոյթներէն, միայն ազգային մտածողութեան ջատագով էր, ոմանք նոյնիսկ ազգայնական որակեցին զինք: Ասիկա բազմաթիւ թիւրիմացութիւններու դուռ բացաւ. կարծուեցաւ, որ Սարգիս Ջէյթլեան տարբեր կը մտածէր իր ընկերներէն, թէ ինքը ուղղութիւն մը կը ներկայացնէր Դաշնակցութեան մէջ, մինչդեռ ուրիշներ՝ տարբեր թեւ կը ներկայացնէին: Կը մոռցուի, որ Դաշնակցութիւնը միշտ այդպէս եղած է. այս կուսակցութիւնը եղած է դաշնակցութիւնը այլազան մտածողութիւններու, այլազան գաղափարներու: Ազատ մտածողութեան եւ ազատ գաղափարներու համադրութեան վայրն է Դաշնակցութիւնը, այն քուրան է, որուն մէջ կուգան մտնելու տեսակաւոր միտքեր, գաղափարներ, մտածումներ: Այդ միտքերն ու գաղափարները կը համադրուին ու անոնցմէ կը ծնի մտածողութիւն մը, ըմբռնողութիւն մը, որ կը դառնայ դաշնակցական գաղափարաբանութիւն, դաշնակցականութիւն: Իրենց ժողովներուն մէջ դաշնակցականները ինչ ալ ըսեն իրարու, ինչ տեսակէտ ալ պաշտպանեն ոչ մէկ նշանակութիւն ունի. իրենց ըսածը, իրենց պաշտպանածը վաղը կեանքի մէջ մէ՛կ խօսք է, մէ՛կ ձայն է, այն խօսքն է, այն մտածումն է, այն գաղափարն է, որ ժողովը որոշած է, որ Ընդհանուր ժողովը որոշած է, որ շրջանային ժողովը որոշած է, որ համապատասխան մարմինը որոշած է: Սարգիս Ջէյթլեան այս ընդհանուր կանոնէն, այս ընդհանուր օրինաչափութենէն դուրս չի գար, չի զատորոշուիր: Իր անունին կը կապեն, մեկնելով իր խմբագրականներէն, հայկական արեւելում յորջորջուած ուղղութիւն մը, մոռանալով որ այդ խմբագրականները Դաշնակցութեա՛ն խօսքն են. «Ազդակ-Շաբաթօրեակ-Դրօշակ»ի իւրաքանչիւր խմբագրական կը ներկայացնէ Բիւրոյի տեսակէտը, կը ներկայացնէ Դաշնակցութեան Ընդհանուր ժողովի տեսակէտը:

Սիմոն Վրացեանի դագաղի առջև դամբանական ասելիս

Ի՞նչ է հայկական արեւելումը: Դաշնակցութիւնը 70-ական թուականներուն կու գար անդրադառնալու, որ եթէ Արեւելքէն մենք ոչ մէկ յոյս կրնայինք ունենալ, որովհետեւ մեր հայրենիքին մէջ տիրող համայնավար վարչաձևը կաշկանդուած էր ու ազգային մտածողութեան չէր հաւատար, ազգային մտածողութիւնը կը դրժէր, կուսակցութիւն մըն էր այնտեղ իշխողը , որ կ'ուզէր համաշխարհային պրոլետարիայի հարցերը լուծել: Արեւմուտքը եւս տրամադիր չէր մեր հարցերու նկատմամբ բարեացակամ վերաբերմունք ունենալու, որովհետեւ Արեւմուտքն անդադար դարպասելով Թուրքիան՝ Արեւելքի դէմ իր պայքարին մէջ, նաեւ կը վնասէր մեր Դատին, թոյլ չէր տար, որ Հայկական Հարցը, Ցեղասպանութեան խնդիրը, հայկական պահանջատիրութիւնը, ամբողջական Հայաստան ստեղծելու գաղափարը, հայ ժողովուրդի տարագիր զանգուածներուն իրենց մայր հայրենիքին մէջ, ամբողջական հայրենիքին մէջ համախմբուելու, բնական, արդար իրաւունքը կենսագործուի: Կը նշանակէր, որ հայ ժողովուրդը ո՛չ կրնար Արեւելքէ՛ն բան մը ակնկալել ի նպաստ իրեն, ոչ ալ՝ Արեւմուտքէն: Ուրեմն կը մնար, որ իր քաղաքականութիւնը անկախ ըլլար, եւ հիմնուէր միայն ու միմիայն հայ ժողովուրդի գերագոյն շահերուն վրայ: Ա՛յս է հայկական արեւելումը: Հայկական արեւելումի ըմբռնողութեան մէջ Հայ Դատի հետապնդումը իր բոլոր դրսեւորումներով, իր այլազան երեսներով՝ քաղաքականով, քարոզչականով եւ նաեւ գործնական այլ դրսեւորումներով, կը դառնար առաջնահերթ, կը դառնար հիմնական: Այսինքն՝ Դաշնակցութիւնը կ'սէր՝ «Հայ Դատը, Հայաստանը, մեր իրաւունքները ամէն բանէ վեր»: Ահավասիկ այս մտածողութիւնն էր, եւ այս մտածողութեան կիրարկումն էր, որ Սարգիս Զէյթլեանի գաղափարկան ամբողջ աշխատանքին եւ վաստակին ողնայարը կազմեցին: Հայ ազատագրական պայքարի գաղափարախօսութիւնը ոսկի թելի պէս կ'անցնի իր ամբողջ հրապարակագրութեան մէջէն: Անկախութեան գաղափարը, անկախութեան անհրաժեշտութիւնը, համոզումը, որ առանց անկախութեան անկարելի է ազգ պահպանել, որ առանց անկախութեան անկարելի է ազգի իրաւունքներուն տիրանալ, առանց անկախութեան անկարելի է իսկական մշակոյթ ունենալ կրկնեց ու կրկնեց եւ անդադար պնդեց, որ պահանջատիրութիւնը հիմքն է Դաշնակցութեան ընելիքին: Միաժամանակ, երբ աջէն ու ձախէն Դաշնակցութեան ստեղծած աւանդը կասկածի կ'ենթարկէին, Սարգիս Զէյթլեան պաշտպանեց այդ աւանդը ընդդէմ համայնավարութեան, բայց նաեւ պաշտպանեց ընդդէմ նորելուկ խմբաւորումներուն, որոնք սփիւռքականութեան գիւտը ըրած էին եւ Հայ Դատը մոռանալու, Հայաստանը մոռանալու, Սփիւռքը մնայուն հայրենիք դարձնելու անհեթեթ գաղափարներ առաջ կը նետէին:

Սարգիս Զէյթլեանի հրապարակագրութեան մէջ Հայաստանը մշտական ներկայութիւն էր: Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը 1972-ի Ընդհանուր ժողովէն սկսեալ որոշած էր, որ իր անկախ քաղաքականութեան, առանց արեւելումի քաղաքականութեան ծիրին մէջ, Խորհրդային Միութեան միջազգային քաղաքականութեան նկատմամբ հրապարակային քննադատութիւններ պիտի չընէ: Այսինքն՝ եթե Խորհրդային Միութիւնը Ամերիկայի հետ այս կամ այն տարակարծութիւնը դրսեւորէր, անիկա մեզի վերաբերող խնդիր պիտի չհամարէինք մենք: Սակայն Խորհրդային Միությունը պիտի քննադատէինք ամէն անգամ որ Հայաստանի իրաւունքը, ամէն անգամ որ Հայ Դատը, ամէն անգամ որ հայութեան իրաւունքները խնդրոյ առարկայ կը դառնային: Այս գիծը Սարգիս Զէյթլեան պահպանեց մինչեւ ծայր, մնայուն կերպով, անդադար գրելով Հայաստանի մէջ տիրող յոռի երեւոյթներուն մասին, անդադար քննադատելով Խորհրդային Միութեան հակահայ քաղաքականութիւնը, Հայ Դատը ժխտող քաղաքականութիւնը: Երբ Հայաստանէն արտագաղթ սկսաւ, Սարգիս Զէյթլեանի ձայնը բարձրացաւ, որովհետեւ կը վտանգուէր հինգ-վեց դարէ ի վեր առաջին անգամ ըլլալով Հայաստանի եւ Հայաստանի անմիջական շրջակայքին մէջ հինգէն վեց միլիոն հայութեան համախմբումը: Խորհրդային Հայաստանը երեքուկէս միլիոն հայութիւն իր մէջ կը պարփակէր, ու այդ հայութեան թիւին վրայ գուրգուրալը, այդ հայութիւնը այնտեղ պահպանելը, շատ հիմնական, ռազմավարական նշանակութիւն ունէր: Ի՞նչ պիտի ըսէր այսօր Սարգիս Զէյթլեանը,

եթէ ողջ ըլլար, աւելի քան մէկ միլիոնի հասնող հայութեան Հայաստանը լքելուն առիթով: Ինչպե՞ս պիտի հակազդէր այս ողբերգութեան, երբ իրեն համար 15 հազարին, 50 հազարին դուրս գալը արդէն տագնապ կը ստեղծէր: Սարգիս Զէյթլեանի համար տագնապ էր նաեւ, երբ խորհրդային ընդհանրական հանրութիւն ստեղծելու գաղափարներով, ռուսերէնը անարգել կը տարածուէր Հայաստանի մէջ եւ տարուէ տարի ռուսական դպրոցները կ'ավելնային, երբ Հայաստանի հայ աշակերտութեան առնուազն մէկ երրորդը ռուսական դպրոց կը յաճախէր: Ռուսերէնը սկսեր էր հիմնական համարուիլ, որովհետեւ առանց անոր պաշտօնի չէին ընդուներ Հայաստանի մէջ: Հակառակ անոր, որ Խորհրդային Հայաստանի Սահմանադրութիւնը կը նշէր, որ Հայաստանի պետական լեզուն հայերէնն է, բայց եւ այնպէս ի՜նչ ծնողներ, գրողներ, մտաւորականներ իրենց զաւակները կ'առաջնորդէին ռուսական դպրոցներ: Ահաւասիկ մէկ նիւթ, որուն առիթով Սարգիս Զէյթլեան գրեց բազմաթիվ անգամներ, մայրենի լեզուի գերիշխանութեան հրամայականը անդադար շեփորելով:

Հայրենիք-Սփիւռք յարաբերութիւններու երեւոյթը եւս իր ուշադրութենէն բնաւ չվրիպեցաւ. Հայաստանը հիմնական էր, սակայն Սփիւռքը եւս պէտք էր զօրացնել: Հայաստանի եւ Սփիւռքի միջեւ կապերն էին, յարաբերութիւններն էին, փոխադարձ այցելութիւններն էին, որոնք ոգեկան հայրենիք պէտք է յառաջացնէին: Բայց Սարգիս Զէյթլեան մասնաւորաբար լուսարձակի տակ առաւ Խորհրդային Սփիւռքի կացութիւնը, այդ կորսուած բազմութիւնները: Արտասահմանի մէջ մենք ճիգ կը թափէինք եկեղեցի կառուցելու, դպրոց ստեղծելու, միութիւններ ստեղծելու, իսկ ո՞վ կը զբաղէր ինչ կ'ընէին այն հայութեան համար, որ Ռուսաստանի մէջ Խորհրդային Միութեան անծայրածիր տարածքին սփռուած էր գրեթէ ամէն տեղ: Այդ բազմութիւնները զրկուած էին ազգային ապրումի ամէն միջոցէ՝ թերթէ, եկեղեցիէ, մշակոյթէ:

Սարգիս Զէյթլեան ըսաւ, որ Խորհրդային Հայաստանի կառավարութիւնը եթէ իրապէ՛ս հայ ժողովուրդի ճակատագրով մտահոգուած է, իրաւունք չունի անտեսելու ներքին կոչուած Սփիւռքը: Խորհրդային Միութեան կառուցուածքը այնպէս էր, որ Հայաստանի իշխանութիւնները ոչինչ կրնային ընել Հայաստանի սահմաններէն դուրս սփռուած այս հայութեան համար:

Սարգիս Զէյթլեան նոյնիսկ հօդուածներ ու խմբագրական գրեց Երեւան քաղաքի օդի մաքրութեան մասին: Հայաստանը ներկայ էր դաշնակցական մարդու ամենօրեայ կեանքին մէջ, իր հոգեխառնութեան մէջ: Դուրսը ապրող մարդ, ինքզինք տարագիր զգացող մարդ՝ ան Հայաստանով կ'ապրեր, Հայաստանն կը համարէր հայ մարդուն մշտական եւ հիմնական արժէքը: Հայաստանի մէջ որեւէ երեւոյթ, ազգային որեւէ աղէտ, որեւէ թշուառութիւն կը տխրեցնէր զինք, որեւէ հաղթանակ՝ կը ոգեւորէր:

Սարգիս Զէյթլեան

Մենք մեր նպատակներու իրագործման համար, դժբախտաբար, Հայաստանի իշխանութիւններէն, Հայաստանի մտաւորականութենէն մեծ սպասումներ չէինք կրնար ունենալ. այդպէս էր կեանքի ճշմարտութիւնը: Ուրեմն Սփիւռքը պիտի ստանձնէր Հայ Դատի հետապնդման եւ նաեւ Հայաստանի անկախացման գործընթացի հիմնական դերակատարութիւնը: Եւ որպէսզի ատիկա կարողանար ընել, Սփիւռքը պէտք էր կազմակերպել, ներքին ճակատը պէտք է հզօրանար, հայկական դրամագլուխը պէտք է համախմբուէր հայ մարդու ձեռքը եւ ի սպաս դրուէր Հայ Դատի հետապնդման: Տնտեսական հզօր հիմք պէտք է մենք կարողանայինք ստեղծել, մեր պայքարին հաւաքական բնոյթը պէտք է կարողանայինք շեշտել, մէկ կողմ դնելով բոլոր երկրորդական խնդիրները, բոլոր լուսանցքային պայքարները: Համայնավարութիւնը եւ մեր թշնամիները լուսանցքային պայքարներ ստեղծելով մեզ կը շեղէին մեր հիմնական նպատակէն, կը շեղէին Հայ Դատի հետապնդման գլխաւոր գործէն: Նոր մտաւորականութիւն պէտք էր ստեղծել, որովհետեւ մտաւորական առաջին սերունդը անհետանալու վրայ էր: Գործող մարդոց պակաս կար, մտաւորականութեան պակաս կար, գործիչի պակաս կար. երիտասարդութիւնը պէտք էր կազմակերպել, հայեցի՛ կրթութեան պէտք էր մղում տալ: Ու նաեւ պէտք էր պայքար մղել, որպէսզի զանազան գաղութներու մէջ ապրող մեր երիտասարդները, մեր բազմութիւնները չտարուէին տեղական մտածողութեամբ, տեղական ապրումներով, մանրուքներով, երկրորդական խնդիրներով: Համայնական գաղափարներու տէր դառնային, մտածէին Հայաստանի

մասին, մտածէին Հայ Դատի մասին, մտածէին հայ ժողովուրդի ապագային մասին: Պէտք էր զօրացնել Սփիւռքը, եւ Սարգիս Ջէյթլեան Սփիւռքի զօրացման, ընդհանրապէս հայ ժողովուրդի զօրացման պահանջով, «Բազմանդամ ընտանիք՝ զօրաւոր հայրենիք» խորագրով խմբագրական կը գրէր: Սփիւռքը պիտի զօրանար Հայ Դատի պայքարին համար: Յեղասպանութեան ճանաչման եւ Հայ ժողովուրդի պահանջատիրութեան համար նոր պայքարը, որ նաեւ գործնական դրսեւորումներ ունէր, արդէն սկսէր էր անհանգիստ դարձնել մեր գլխաւոր թշնամին՝ թուրքը, որ կը հարուածէր արդէն, իսկ Սարգիս Ջէյթլեան «Եղէգները պիտի չխոնարհին» կը պատգամէր: Այո՛ եղեգ է հայութիւնը, այո՛, ան ազազուն կրնայ ըլլալ, բայց ճակատը բա՛ց իր պայքարը պիտի շարունակէ, պիտի չխոնարհի եւ պիտի երթայ մինչեւ ծայր, մինչեւ ամբողջական յաղթանակ: Եւ այսպէս է, որ ան ծառացաւ թրքական հակահայ արշաւին դէմ, Հայաստանի անկախութեան պահանջը շեփորելով, խօսեցաւ հողերու ամբողջականութեան՝ Սեւրի դաշնագրին արժեւորման մասին, Հայ Դատով ըմբռնուող, հասկցուող բոլոր տեսակի երեւոյթներու մասին:

Սարգիս Ջէյթլեանի մտածողութեան մէջ ընկերվարութեան հարցը հայ ժողովուրդի ամբողջական ազատագրութեան ապագայ հանգրուանի հարց էր:

Բացատրելով աջի ու ձախի, ընկերվարականի եւ ոչ ընկերվարականի, ազատականի եւ ոչ ազատականի խնդիրները հայ մամուլի էջերուն մէջ, Սարգիս Ջէյթլեան անդադար կրկնեց, որ հայ մարդը ամբողջական ազատագրութեան չի կրնար հասնիլ, նոյնիսկ եթէ վաղը քաղաքական ազատութիւն ունենայ, նոյնիսկ եթէ վաղը համախմբուի իր ամբողջական հայրենիքին մէջ, եթէ իբրեւ ընկերային էակ նաեւ ազատ չըլլայ: Էապես եւ խորապէս ընկերվարական մարդ էր Սարգիս Ջէյթլեան եւ այդ ընկերաարական պայքարի ժամանակաւոր ստորադասումը ազգային պահանջատիրութեան մարտավարական գործնական մտահոգութիւններու արդիւնք էր:

Սարգիս Ջէյթլեան իր հարաբերութիւններու մէջ խստաբարոյ մարդու համբաւ ունէր: Կը կարծուեր, որ դժուար կը զիջի իր մտածումներէն եւ իր գաղափարներէն: Յաճախ մտածուած է, թե իր տեսակէտը անպայման պարտադրել կ՚ուզէ քաղաքական կեանքի մէջ, եւ նաեւ՝ կուսակցական ընթացիկ կեանքին մէջ: Այս տպաւորութիւնը չէր համապատասխանէր իրականութեան: Ժողովներուն ընթացքին Սարգիս Ջէյթլեան ընկերական, զիջող եւ համադրել գիտցող մարդ էր: Երբ որոշումը կայացած էր, անոր գործադրութեան ատեն անզիջող էր, աներեր վճռականութիւն կը ցուցաբերէր: Իրեն համար հիմնականը այն էր, որ Դաշնակցութիւնը հասնէր իր նպատակներուն:

Իր քաղաքական հաւատամքը հիմնուած էր մարտավարական գործնապաշտութեան վրայ: Սարգիս Ջէյթլեան 1973-ին կը գրէր. «Մնաց, որ Դաշնակցութիւնը սկզբունքօէն եւ այլապէս, երբեք դէմ չէ եղած եւ դէմ չէ նաեւ ներկայիս, ձա՛խ կուսակցութեանց կամ պետութեանց հետ գործակցութեան: Եւ եթէ ցարդ հնարաւոր չէ եղած նման գործակցութեան մը հաստատումը, գլխաւոր պատճառը համայնավարութիւնն է, անոր գործ դրած ազդեցութիւնն ու ճնշումներն են առաւելաբար, եւ ոչ թէ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, այսպէս կոչուած, յետադիմական նկարագիրը: Ճշմարտութիւնը Հայ Յեղափոխական Դաշնակցութեան համար ա՛յն է, որ Դաշնակցութեան գոյութեան ու գործունեութեան առանցքը հայ ժողովուրդի գերագոյն շահերուն հետապնդումն է: Եւ այդ հիման վրայ միայն կարելի է ըմբռնել ու բացատրել անոր գործելակերպն ու գործակցութիւնը, ինչպէս նաեւ՝ անոր պայքարները:

Ահաւասիկ Սարգիս Ջէյթլեան մարդը, Սարգիս Ջէյթլեան դաշնակցականը, Սարգիս Ջէյթլեան գաղափարի մարտիկը եւ պայքարողը, ա՛յն, որ իր կարճատեւ կեանքին ընթացքին ոչինչ խնայեց իր ժողովուրդին համար, այն որ իր գործած բոլոր վայրերուն մէջ բոլորանուէր ծառայութեան օրինակ եղաւ Դաշնակցութեան նպատակներուն ի սպաս, Հայ Դատին ի սպաս, հայութեան համար, Հայաստանի՛ համար: Սեւ օր մը, մութ ուժեր, թերեւս հայանուն, գտան, որ ա՛յս տեսակ ուժ մը վտանգ է: Այո՛ վտանգ էր իրենց նպատակներուն համար, վտա՛նգ էր Հայ Դատի հետապնդման աշխատանքներուն հակադրուած ուժերուն համար: Վերջ տուին Սարգիս Ջէյթլեանի կեանքին, կասեցուցին անոր գործունէութիւնը, կարծելով որ այդ միջոցով կրնան կոտրել Հ.Յ. Դաշնակցութեան կորովը, ընկրկում յառաջացնել անոր ընթացքին մէջ: Մոռցան սակայն, որ նահատակները առաջնորդ կը դառնան յետնորդներուն եւ նահատակութեամբ անմահութեան պսակը կը վաստկին:

ՀՅ Դաշնակցութեան 25-րդ Ընդհանոր ժողովին բանաձեւումով՝ «Սարգիս Ջէյթլեանը է՛ր եւ կը մնայ մեր արժանաւոր ընկերը, որ նահատակուած է Հայ Յեղափոխական Դաշնակցութեան վարած պայքարի պատնէշին վրայ՝ հակադաշնակցական մութ ուժերու ձեռքով (իր ընկերակից Կարօ Գոլանճեանի հետ միասին) առեւանգուելով եւ տմարդի կերպով ահաբեկման ենթարկուելով: Պայքարողի խրոխտ կեցուածքով, դաշնակցականի գաղափարական սքանչելի տիպարով, եւ դաշնակցական մտքի դրօշակրի փայլուն դիմագծով, ինչպէս նաեւ իր գործով եւ օրինակով, Սարգիս Ջէյթլեան այլեւս մաս կը կազմէ դաշնակցական անմահ նահատակներու փաղանգին:

Միսաք Թոռլաքյանը ազգային-ազատագրական պայքարի գործիչ և վրիժառու (մաս առաջին)

Հայկազուն Ալվրցյան
Արևմտահայոց հարցերի ուսումնասիրության կենտրոնի տնօրեն, բանասիրական գիտությունների դոկտոր

«Կիլիկիայի շրջանի Թոռլաքեանները մէկէ աւելի հերոսներ են տուած Դաշնակցութեան փառքի դաշտին: Միսաքը անոնց հարազատ, կրտրիճ յաջորդներէն է»[1]:

Առաջին աշխարհամարտի նախօրյակին

Միսաք Թոռլաքյանը ծնվել է 1888 թ. նոյեմբերի 12-ին Տրապիզոնի գավառի Կյուշանա գյուղում: Սովորել է տեղի դպրոցում: Մ. Թոռլաքյանը դեռևս պատանեկան տարիքից բուռն հետաքրքրություն է դրսևորում ազգային-հեղափոխական գործի նկատմամբ: Նրա հայրական տունը եղել է դաշնակցական գործիչների հավաքատեղի: Այդ հավաքների ազդեցությամբ աստիճանաբար պատանի Միսաքն ամբողջությամբ տարվում է ազգային-ազատագրական պայքարի գաղափարներով: 17 տարեկանում կազմակերպում է վեց հոգուց բաղկացած հայ վրիժառուների մի խումբ, որը ահաբեկում է մատնիչներին և դավաճաններին: 1910 թ. հնազանդեցնում է հայերին ճնշող լազերին, մասնակցում է Տրապիզոնի և Կովկասի միջև զենքի փոխադրության գործին: Մոտ 3 տարի ծառայում է Օսմանյան բանակում, բայց հրամանատարության խտրական քաղաքականության պատճառով թողնում է ծառայությունը:

1913 թ. աշնանը, վերադառնալով հայրենի գյուղ, անդամակցում է Դաշնակցությանը, որի գաղափարները նրան հարազատ էին դեռևս պատանեկան տարիներից: Համագյուղացիները նրան ընտրում են թաղական խորհուրդի անդամ և գյուղապետի օգնական, ինչը նրա կուսակցական-հանրային գործունեության համար լավ պայմաններ էր ստեղծում: Համայնքի գործերին զուգահեռ՝ Ռոստոմի անմիջական ղեկավարությամբ ընկերների հետ մասնակցում է գաղտնի ճանապարհներով Կովկասից զենքի ներկրման աշխատանքներին:

Մինչև առաջին աշխարհամարտի սկսվելը Թոռլաքյանը, իր կուսակից և համախոհ ընկերների հետ, ՀՅԴ Սարափի կոմիտեի ղեկավարությամբ, բուռն գործունեություն է ծավալում շրջանում՝ շեշտը դնելով հիմնականում ինքնապաշտպանության համար անհրաժեշտ աշխատանքների, հայերի նկատմամբ թշնամաբար տրամադրված թուրք կամ լազ պաշտոնյաների ու ավազակների և սրանց աջակից հայ դավաճանների և մատնիչների ոչնչացման վրա, ինչի պատճառով մշտապես հետապնդվել է թուրքական իշխանությունների կողմից:

1914 թվականի հուլիսի 28-ին սկսված Աշխարհամարտի առաջին իսկ օրերին կայսրության ողջ տարածքում հայտարարվում է 18-35 տարեկանների զորահավաք: Զորակոչվում են նաև բավականաչափ հայեր, սակայն քիչ չէին ծառայությունից խուսափողները, որոնք կամ թաքնվում էին իրենց բնակավայրերում, կամ բարձրանում լեռները: Զորահավաքն արդյունավետ անցկացնելու նպատակով ոստիկանությունը կազմակերպում էր թաքնվածներին հայտնաբերելու և լեռները բարձրացածներին հետապնդելու ու ձերբակալելու գործողություններ: Վախի ազդեցության տակ զորակոչից խուսափողների թիվն աստիճանաբար կրճատվում է: Իշխանությունների հաջորդ քայլը լինում է թուրքերին հայերի դեմ գրգռելու և թշնաբար տրամադրելու քարոզչությունը, ազդեցիկ հայերի նկատմամբ հալածանքներն ու ճնշումները. հատկապես «...խիստ հետապնդում սկսաւ կուսակցական ղեկավարներու և աչքի զարնող ազգայիններու դէմ»[2]:

Նախապատրաստական աշխատանքները

Դաշնակցության Յոմուրիայի շրջանի ղեկավարությունը, գյուղապետերն ու ազդեցիկ մարդիկ լավ էին հասկանում, որ իշխանությունների հետ զինված բախումն անխուսափելի էր, ուստի ամեն ջանք ու հնարավոր միջոց գործադրում էին նախապատրաստվելու համար: Զենքի ու զինամթերքի հայթայթումը, ինքնապաշտպանական և կազմակերպական աշխատանքները գնալով ավելի ու ավելի շատ դրամա-

Միսաք Թոռլաքյան

կան միջոցներ են պահանջում: Մ. Թոռլաքյանն ու իր ընկերները, որոնք գրեթե բոլորն էլ փախել էին բանակից, որոշում են ինչ-որ լուծում գտնել նաև այս հարցի համար: Ամենահարմար և համեմատաբար քիչ վտանգավոր ճանապարհը պետական դրամի հափշտակումն էր: Ուսումնասիրելով դրամ տեղափոխող փոստային կառքերի երթևեկության ուղիները և ժամանակացույցը՝ աշնան մի օր հարձակվում են նման մի կառքի վրա և բռնագրավում բավականաչափ մեծ գումար, որից մի փոքր մաս բաժանում են հարձակման մասնակիցներին, կարիքավորների ընտանիքներին, իսկ հիմնական մասը հատկացնում զենք և զինամթերք հայթայթելուն:

ՀՅԴ Կոմիտեն և հեղինակավոր մի քանի ընկեր միանշանակ չեն ընդունում այս քայլը և հրավիրում են ժողով՝ հարցը քննելու և գործողության մասնակիցների արարքին գնահատական տալու համար: Ժողովի մասնակից Հ. Հովակիմյանը հիշում է. «Ամբողջ գիշեր մը վիճեցանք և մեղադրեցինք ձեռնարկին հինգ ղեկավարները նոյնիսկ վիրավորական փոխադարձ արտայայտութիւններով: Միհրդատ Մազլումյան ու ես խիստ յարձակողական դիրք բռնած էինք: Անոնց կողմէ Միսաքը ամբողջ գիշեր բառ մը չհանեց բերնէն. ընկողմանած՝ կը դիտէր ու կը լսէր և երբեմն դէմքի և ձեռքի շարժումներով ըսել կ'ուզէր կարծես, թէ աւելորդ է ձեր զայրոյթը, եղածը եղած է և լաւ է որ եղած է, քանի որ հիմա դրամ ունինք»[3]:

Մ. Թոռլաքյանը, նախքան որևէ քայլ կատարելը, նախ համոզվում էր դրա անհրաժեշտության մեջ: Թեև նա հաստատակամ էր իր տեսակետը պաշտպանելու հարցում, սակայն սակավախոս էր: Այս մասին վկայում են նրա ընկերները: Դրա լավագույն ապացույցներից մեկն էլ այս միջադեպն էր, որը լայն արձագանք է գտնում ժողովրդի և պաշտոնեության շրջանում: Փոստային կառքի վրա հարձակման մեղադրանքով ձերբակալվում են շատերը, որոնցից ոչ մեկն էլ, ըստ էության, գործին մասնակից չէր: Այս գումարից մի մաս էլ հատկացվում է այդ և զորակոչից խուսափելու պատճառով ձերբակալվածներին ազատելու համար:

Իշխանություններն ամենուր որոնում են հափշտակված դրամի հետքերը, սակայն որևէ արդյունքի չեն հասնում: Իսկ դրամը իշխանությունների քթի տակ ծառայում էր այն նպատակին, ինչի համար ձեռք էր բերվել՝ զենք հայթայթելուն. «Թեև այդ օրերուն շատ դժուար էր դրամով զէնք գտնելը, բայց դարձեալ որոշ յաջողութիւններ ձեռք ձգուեցան»[4]:

Հալածանքներն ու ճնշումները թերևս առավել խիստ էին հույների նկատմամբ. «Սանթայի յոյներու երթևեկութիւնը դէպի քաղաք գրեթէ դադրած էր: Թուրքերը ճամբան տեսած յոյները կը կողոպտէին կամ կիներն ու աղջիկները կը բռնաբարէին: Մեր հանած թռուցիկ խումբն էր, որ պաշտպանի դեր ստանձնեց այդ խեղճերուն հանդէպ»[5], որից հետո նրանց նկատմամբ իշխանությունների վերաբերմունքը մեղմանում է:

Յոմուրիայի շրջանի գյուղական համայնքների ղեկավարները՝ ազգային մարմինները և Դաշնակցության Սարափի կոմիտեն, ամեն ջանք գործադրում էին՝ պատերազմի հետևանքով անդորրը կորցրած շրջանի գյուղերի բնակչության կյանքի բնականոն ընթացքը պահպանելու համար. «Ազգային և կուսակցական վերին մարմիններու հրահանգներն ու խորհուրդները լիովին կը գործադրուէին»: Դժվարությամբ հաստատված անդորրը, սակայն խախտվում է, երբ Օսմանյան կայսրությունը մտնում է պատերազմի մեջ. իրավիճակը կարճ ժամանակաընթացքում կտրուկ փոխվում է: Սովի ուրվականը շուտով մտնում է շրջանի գյուղերը, և սկսվում են թալանն ու սպանությունները:

ՀՅԴ Սարափի կոմիտեն ավազակային խմբերի դեմն առնելու և ինքնապաշտպանության գործը «...կարգի դնելու համար կազմեց զինուորական մարմին մը, որուն կը մասնակցէին հետևեալ դաշնակցականները. – Արշակ Յովակիմեան, Աբրահամ Յովակիմեան, Միսաք Թորլաքեան, Համբար Չեփնեան, Յարութիւն Սիմաւոնեան, Միհրդատ Մազլումեան»[6]:

Զինվորական մարմինը կազմում է շրջանի զինատեսակների և ռազմամթերքի մանրամասն ցուցակը, զինյալ ուժերը՝ թվով 300 մարդ, բաժանում խմբերի, հստակեցնում սրանց թիվն ու կառուցվածքը, նշանակում խմբապետներ, ճշտում դիրքերը, որոշում վտանգի կամ զինված բախումների ժամանակ ժողովրդին ապահով տեղերում կենտրոնացնելու կարգը: Ուշագրավ է, որ գրեթե բոլորը զինված էին հիմնականում հինգհարվածանի մարտական հրացաններով և մաուզեր տեսակի ատրճանակներով (տասնոցներով): Կային նաև այլ ատրճանակներ և ծխարձակ հրացաններ: Այս զենքերի մեծ մասը

ներկրվել էր Բաթումից, որի մեջ առանցքային էր Թոռլաքյանի խմբի դերը:

Պետք է ասել, որ մինչև ինքնապաշտպանական կռիվների սկսվելը Յոմուրիայի մարտական կառույցը թե՛ զինյալների թվով, թե՛ զենքի քանակով, թե՛ մարտական դիրքերի և պաշտպանական կառույցների թվով ու որակով Տրապիզոնի նահանգում բացառիկ էր: Այս բոլոր աշխատանքների մեջ հատկապես աչքի էր ընկնում Մ. Թոռլաքյանը, ով, բացի բնատուր ունակություններից, երեքամյա զինվորական ծառայության ընթացքում, որպես հրետանայի զորքերի տասնապետ, բավականին փորձ էր ձեռք բերել, ինչն օգնում էր տեղանքի, դիրքերի, մարտական ուժի ճիշտ գնահատման և տեղաբաշխման գործում: Ի դեպ, երբ հայ ազդեցիկ մարդկանց և որոշ հոգևորականների միջոցով նահանգապետ Ջեմալ Ազմին կեղծ խոստումներով և հավաստիացումներով կարողացավ ինքնապաշտպանության պատրաստված հայերի միասնությունը պառակտել, այդ ժամանակ հատուկ հանձնարարությամբ Կովկաս մեկնած Մ. Թոռլաքյանի բացակայության հետևանքով առաջացած վիճակի մասին ՀՅԴ Սարափի կոմիտեի անդամ Հ. Հովակիմյանը գրում է. «Միսաքին բացակայութիւնը ճակատագրական նշանակութիւն ունեցաւ գործի ձախողութեան մէջ»[7]:

Մ. Թոռլաքյանի խմբին տրված կարևոր հանձնարարությունը

1915 թ. ապրիլի երկրորդ կեսին նահանգի իշխանություններն սկսում են հայկական գյուղերի խուզարկությունները: Ապրիլի 19-ին շրջապատում են Տրապիզոն քաղաքի հայկական թաղերը և գավառի բոլոր հայկական գյուղերը: Թեև հայտնաբերած զենքի թիվը մեծ չէր՝ մի քանի հին հրացան և ատրճանակ, սակայն փախուստի մեջ գտնվող զինվորական մարմնի անդամ Հ. Սիմավոնյանի տունն այրում են, գույքը՝ բռնագրավում, իսկ կնոջը՝ անպատվում:

Լարումը հասնում է գագաթնակետին: Մ. Թոռլաքյանն ընկերների հետ պատրաստվում է պատժել չարագործներին. «Ճիշտ մեկնելու պահին, սակայն, Արշակ Յովակիմեանը Թորլաքեանին տուն կը հասնի, Պոլսէն և Կարինէն ստացած սև լուրերով և գոյժերով և ատով ալ ընդհարումը տեղի չունեցաւ»[8]: Պոլսից ստացված նամակը տեղեկացնում է, որ «Ազատամարտ»-ի խմբագրակազմը և բազմաթիվ մտավորականներ աքսորվել են ներքին գավառներ: Շատերը խոշտանգվել և տանջամահ են արվել: Իշխանը[9], Վռամյանը[10] և ուրիշ նշանավոր ազգային-կուսակցական դեմքեր սպանվել են: Վանը ապստամբել է: Ավազանի[11] Կենտրոնական կոմիտեին հանձնարարվում է այս լուրերը շտապ հասցնել Բաթումի և Թիֆլիսի մարմիններին:

Ավազանի Կենտրոնական կոմիտեն Սարափի կոմիտեին հրահանգում է, ամեն վտանգ արհամարհելով և դրամական միջոցներ չխնայելով, կատարել հանձնարարությունը: Մ. Թոռլաքյանի խումբը, երկ-

Բաթում

շաբաթյա պատրաստություններից հետո իրենց ծանոթ Իսմայիլ անունով մի թուրքից 130 ոսկով գնում է նավակ և 30 ոսկի էլ վճարելով որպես ուղեկցողի, մայիսի 13-ի գիշերը ծովով ուղևորվում է Բաթում: Հինգ օր անընդհատ թիավարելով և հաղթահարելով բազմաթիվ դժվարություններ ու վտանգներ՝ վերջապես տեղ են հասնում:

Դեպի Սուխում

Հանձնարարությունը կատարելուց հետո դիմում են Թիֆլիսի Ազգային կոմիտեին՝ Տրապիզոն վերադառնալու համար, սակայն մերժում են ստանում, որովհետև օր օրի ճանապարհներն ավելի վտանգավոր էին դառնում: Թոռլաքյանի հուշերում կարդում ենք. «Մեզի կը թելադրէին կամաւորական բանակներուն մէջ մտնել»[12]: Որոշ տատանումներից հետո նրանք ծառայության են մտնում Իշխան Արղությանի[13] հրամանատարությամբ ձևավորվող կամավորական գնդում:

Երբ գունդը պատրաստ էր ճակատ մեկնելու, լուր է ստացվում, որ ռուսական զորքերը և հայկական կամավորական գնդերը Վանից նահանջել են: Մեկնումը հետաձգվում է: Սպասողական վիճակը տևում է շաբաթներ, ինչը բացասաբար է անդրադառնում զինվորների տրամադրության վրա: Շուտով սկսվում են բողոքներ, ի հայտ են գալիս անհնազանդության նշաններ: Որոշները հրաժարվում են մարտական պարապմունքներից: Իրավիճակը վերահսկողության տակ պահելու համար գնդի զինվորների հետ հանդիպում է Ռոստոմը և բացատրական զրույցներից հետո վերականգնում կարգ ու կանոնը:

Մ. Թոռլաքյանը որոշում է անգործ մնալու փոխարեն իր ընկերոջ՝ Կապիտանի (Գրիգոր Հրապյան) հետ մեկնել Սուխում, ուր բնակվում էին բազմաթիվ համշենահայեր, նրանցից կազմել մի խումբ և անցնել Տրապիզոն:

Թեև Մալխասն[14] ու Իշխան Արղությանը դեմ են լինում Մ. Թոռլաքյանի և նրա ընկերոջ՝ Սուխում մեկնելու մտադրությանը, սակայն նրանք, այնուամենայնիվ,

Սուխում

որոշում են մեկնել: Երկար ու ծանր է լինում այս ճանապարհորդությունը. Միսաքը հիվանդանում է Թիֆլիսում, ամբողջովին չապաքինված՝ մի կերպ հասնում են Սուխում: Տեղի ՀՅԴ կոմիտեի աջակցությամբ նրանք կազմում են 11 հոգուց բաղկացած մի խումբ[15], որը դեկտեմբերի 30-ին ուղևորվում է Բաթում, Միսաքը մի քանի ընկերներով նրանց է միանում հինգ օր անց:

Վերադարձ Տրապիզոն՝ գաղտնի հանձնարարությամբ

Բաթումում նրանք Ռուսական զորքերի հրամանատար զորավար Լյախովին են ներկայանում իրենց փաստաթղթերով: Լյախովը նրանց ընդունում է, տալիս թուրք զինվորի նոր հանդերձանք, զենք, հեռադիտակներ և անհրաժեշտ այլ պարագաներ: Այդ պահից սկսած՝ նրանք ռուսական բանակի հետախույզներ էին, ինչը Տրապիզոնում գործելու համար լայն հեռանկարներ էր բացում:

Երբ խումբը պատրաստ էր մեկնելու, «Պաթումի Դաշնակցութեան կոմիտէն մեզի յանձնեց երեք փակ ծրարներ, մէկը ուղղուած Տրապիզոնի յունաց մետրոպոլիտին, միւս երկուքն ալ՝ յոյն վաճառականներու»[16]:

Զորավար Լյախովի կողմից Մ. Թոռլաքյանի խմբին տրված առաջին հանձնարարությունն էր՝ մանրամասն տեղեկություններ ձեռք բերել Տրապիզոն քաղաքի պաշտպանական ուժերի, զորքի տեղադիրքի, հրամանատարների, հրետանու, ռազմական պահեստների վերաբերյալ:

Երբ Խումբը տեղ է հասնում և թռուցիկ կերպով ծանոթանում շրջանի կացությանը, առաջին տպավորությունն այն է լինում, որ ոչ մի հայ չի մնացել նահանգում. «Միսաքին խումբին մեծ մասը կը յուսալքուի տեսնելով ամայացած գիւղերը և անոնց թուրք մուհաճիրներով լեցուիլը[17], ասով ալ կ'եզրակացնեն թէ ծրագրուած ինքնապաշտպանութիւնը ձախողած է և Հայուն հետքն իսկ չէ մնացած»[18]: Հիասթափությանը գումարվում են ցուրտն ու քաղցը, և շատերը որոշում են վերադառնալ Բաթում, «Բայց Միսաքին վճռականութեան շնորհիւ»[19] իրավիճակը շուտով փոխվում է: Նա ծանոթ թուրքերի միջոցով տեղեկանում է, որ բազմաթիվ զինված հայեր, նրանց հետ՝ նաև կանայք, երեխաներ և ծերեր, բարձրացել են լեռները կամ քաշվել են անտառները:

Մ. Թոռլաքյանը կապեր է հաստատում հայ խմբապետների հետ, որոնք արդեն թուրքերի դեմ մի քանի հաղթական կռիվներ էին մղել: Ընկերներին տեղեկացնում է իր խմբի՝ Տրապիզոն գալու և դարձյալ Բաթում վերադառնալու մասին. «Խորհուրդ տուինք, որ բոլորս ալ իրարու հետ կապ պահենք մեր նամակին մէջ գրուած հասցէով, որպէսզի մեր երկրորդ գալուն կարենանք զիրար անմիջապէս գտնել և եթէ կարելի ըլլայ, բոլորը տեղափոխել Ռուսաստան»[20]:

Շուտով հաստատվում են այդ կապերը, և տեղի է ունենում հին ընկերների հանդիպումը, որի ժամանակ էլ ուրվագծվում են համագործակցության և փոխօգնության ծրագրերը: Դեպքերի ականատեսն ու մասնակիցը գրում. «Միսաքի խումբին մեր մէջ երևալը մեծ ոգևորութիւն առաջ բերաւ և փախստականները ցնծութեան արցունքներով ընդունեցին զիրենք: Արդարև իրենք էին, որ 1915 Մայիս 13ին, իրենց կեանքին գնով Արևմտահայերուն բնաջնջման գոյժը տարին Կովկաս, իսկ այժմ դարձեալ անարգելով մահը, վերադարձան իրենց ծննդավայրին լեռները»[21]:

Մ. Թոռլաքյանի հետախուզական խումբը բավականին արդյունավետ է գործում. բոլոր տեղեկությունները ժամանակին հասնում են ռուսական զորքի հրամանատարությանը: Այս գործին զուգահեռ՝ Մ. Թոռլաքյանը հանդիպումներ է ունենում լեռներում ու անտառներում ապաստանած հայ զինյալ խմբերի հետ, նրանց աջակցում իր տեղեկություններով և խորհուրդներով: Վստահելի թուրքերի օգնությամբ կազմակերպում է հայերի անվտանգ տեղափոխությունը Ռուսաստան. «Առաջին հերթին որոշեցինք Սիւրմենէէն փրկել այն միամիտ հայ տղաքը, որոնք հաւատալով թուրքերուն, յանձնուել էին անոնց»[22]: Այս գործում նրանց մեծ օգնություն են ցույց տալիս ազգությամբ թուրք Շնքեթ բեյը և նրա որդին՝ Հյուսեին բեյը:

Տրապիզոնի ափամերձ ջրերում մերթընդմերթ երևում էին ռուսական ռազմանավեր, որոնց, ըստ պայմանավորվածության, Թոռլաքյանը փոխանցում էր հավաքած տեղեկությունները: Հանդիպումները տեղի էին ունենում նախօրոք պայմանավորված վայրերում՝ հիմնականում գիշերները: Այս նավերն ահ ու սարսափ էին տարածում Տրապիզոնի շրջակա գյուղերի թուրք բնակչության մեջ: Դրանից լավագույն կերպով օգտվում էր Մ. Թոռլաքյանը:

Բացի հույներից և բարեկամաբար տրամադրված մի քանի թուրքից՝ աստիճանաբար մեծանում էր Թոռլաքյանին աջակցող այն թուրքերի թիվը, որոնք հույս ունեին վերջինիս երաշխավորությամբ ռուսների ժամանումից հետո անվտանգ ապրել իրենց տներում: Թոռլաքյանը բոլոր օգտակար թուրքերին տալիս էր նման երաշխիք: Օրեցօր նրանց թիվը շատանում է: Թոռլաքյանն իր հուշերում գրում է. «Մեր իշխանությունը այնքան զօրաւոր էր, որ տղաքը ազատօրէն մեր ցանկացած թուրք գիւղը կը մտնէին, պահանջներ

կը ներկայացնէին և մեզի միանալու առաջարկներ կ՚ընէին, զէնք ու փամփուշտ կը պահանջէին: Թուրքերը յօժար կամքով մեր պահանջներուն գոհացում կու տային»[23]:

Մ. Թոռլաքյանի ազդեցությունն աստիճանաբար տարածվում է նաև զինվորականների վրա. «Թուրք զինուորները, որոնք կը ծառայէին մեզի, ամեն երեկոյ կու գային նոր հրահանգներ և նոր *բարոյաներ* (գաղտնաբառ, նշանաբառ – Հ.Ա.) ստանալու համար»[24]:

Առաջին կռիվները

Մ. Թոռլաքյանի մասնակցությամբ խոշոր կռիվներից առաջինը թերևս Ծինկիլա գյուղի անհավասար կռիվն է, որին մասնակցում էին հայերի բարեկամ, ազգությամբ թուրք Շնքեթ բեյը և նրա որդի Հյուսեինը: Շնքեթի և իշխանությունների միջև օրեցօր խորացող տարաձայնություններին ավելանում են նաև հայերի ու հատկապես Մ. Թոռլաքյանի հետ նրա բարեկամական հարաբերությունների մասին տարածվող լուրերը, իսկ թուրք զինվորականների, ժանդարմների և Թոռլաքյանի խմբի միջև գաղտնի կապերի մասին լուրերն առավել չափազանցված են հասնում իշխանություններին:

Իշխանությունները որոշում են մի հարվածով վերջ տալ և՛ Թոռլաքյանի խմբին, և՛ Շնքեթ բեյին ու նրա մարդկանց: Զինվորականության շրջանում իր ունեցած կապերի միջոցով Թոռլաքյանը տեղեկանում է այս որոշման մասին և ձեռք առնում համապատասխան միջոցներ: Եվ որոշված օրը թուրքական զորաջակատն աննկատ մոտենում է գյուղին՝ Շնքեթ բեյին և նրա ընտանիքի անդամներին ձերբակալելու համար: Սակայն Թոռլաքյանի նշանակած հայ պահակները լուրը հասցնում են հրամանատարին, ով ընկերների հետ իսկույն շտապում է Շնքեթի տուն, ուր արդեն հավաքվել էին նաև խմբի մյուս անդամները: Մ. Թոռլաքյանը, սակավաթիվ մարտիկներին ճիշտ կերպով դասավորելով, ստեղծում է հուսալի պաշտպանություն, միևնույն ժամանակ սուրհանդակներ ուղարկում լեռներում ամրացած հայկական խմբերին: Կռիվը տևում է երկու օր: Երկրորդ օրվա գիշերը՝ լուսադեմին մոտ, հայ մարտիկներն աննկատ հեռանում են դեպի Կալաֆկա գյուղին հարող լեռները: Այդ կռվում թուրքերը տալիս են մոտ 50 զոհ: Հայերը և նրանց կողքին կռվող Շնքեթն ու մի քանի թուրքեր տալիս են մեկ զոհ՝ Շնքեթի որդի Հյուսեին բեյին: Ուշագրավ է Շնքեթի խոսքը որդու մահվան լուրն առնելիս. մի քանի րոպե անշարժ մնալուց հետո ասում է. «Հիւսէինիս մեռնելուն համար խիղճս չի տանջուիր, որովհետև ան գողութեան, աւազակութեան և կամ սրիկայութեան զոհ չէ, այլ մեռաւ իր նպատակներու համար, որ էր պաշտպանել հայերը և թոյլ չտալ, որ զանոնք կոտորուին»[25]:

Հաջորդ անհավասար մեծ և երկարատև կռիվը տեղի է ունենում Կալաֆկա գյուղի մերձակայքում: Նախորդ կռվում Թոռլաքյանի խումբը, հայերի բարեկամ Շնքեթ բեյի տան վրա հարձակված ժանդարմական ջոկատին ջախջախելով և փախուստի մատնելով, գերում է երկու ժանդարմի, որոնց միջոցով նահանգապետ Ջեմալ Ազմիին մի հեգնական-անարգական նամակ ուղարկում՝ ժանդարմների անորակ զենքի և նրանց երկչոտության մասին[26]: Նահանգապետը, որ անարգված էր զգում Ծինկիլայի կռվի խայտառակ պարտության պատճառով, այս նամակից հետո որոշում է հայերի դեմ ձեռնարկել մի մեծ արշավանք: Նա այդ նպատակի համար կազմում է 2500 հոգուց բաղկացած մեծ զորաջոկատ, որից 800-ը՝ զինվորներ, 300-ը՝ ժանդարմներ, իսկ 1400-ը՝ բանտերից և այլ վայրերից հավաքած քրեական հանցագործներ:

1916 թ. փետրվար ամիսն էր: Հասկանալով իշխանությունների կողմից առաջիկայում սպասվող հակահայկական լայնածավալ պատժիչ գործողությունների անխուսափելիությունն ու ընդգրկումները՝ Մ. Թոռլաքյանը մի քանի ընկերներով գնում է Սյուրմենե և որոշ ժամանակ անց վերադառնում այնտեղի մարտական խմբերի հետ:

Յոմուրիայի մարտական ուժերը բաժանված էին երկու խմբի: Նահանգապետը իր զորաջոկատը նույնպես բաժանում է երկու մասի և 1500 հոգի ուղարկում Շանայի[27] ուղղությամբ՝ Թոռլաքյանի հրամանատարության տակ գտնվող խմբի դեմ, իսկ մյուս մասը՝ 1100 հոգի ուղարկում է Տրապիզոնից հարավարևմուտք ուղղությամբ, որտեղ հայկական ուժերի երկրորդ խումբն էր: Այս խմբի մեջ էին նշանավոր ֆիդայիներ Հովհաննես Ֆնտքյանը, Ներսես Ֆնտքյանը, Երվանդ Ֆնտքյանը, Սարգիս Ֆնտքյանը, Մարտիրոս Թոփալյանը, Գասպար Առաքելյանը, Համբար Ռահանյանը և ուրիշներ:

Այս ճակատում երեք օր տևած անհավասար կռվից հետո թուրքերը, տալով մոտ 30 զոհ, հեռանում են կռվի դաշտից և գնում միանում իրենց զինակիցներին, որոնք կռվում էին հայկական մյուս խմբի դեմ, ուր նաև Թոռլաքյանն էր իր ընկերներով[28]: Թուրքական ողջ զինուժը կենտրոնանում է այս ճակատում՝ որը ձգվում էր Արակուլա անտառի ափամերձ երկայնքով: Հայերը, որ նախապես դիրքավորվել էին Արկուլա անտառում, երեք օր հետո գիշերով աննկատ դուրս են գալիս անտառից և նոր դիրքեր գրավում: Կարծելով, որ հայերը շարունակում են մնալ անտառի դիրքերում, թուրքերը չորս օր անընդհատ անտառը պահում են կրակի տակ՝ վախենալով մոտենալ հայկական դիրքերին. «…միայն հինգերորդ օրը 300 հոգի նոր օգնական ուժ ստանալով և համոզուելով մեր բացակայութեան, անտառ մտան: Մենք Կալաֆկայի սարը մեր դիրքերը պատրաստած, կը նկատէինք թշնամիին թուփերու և քարերու հետ մղած «հերոսական» պայքարը»[29]:

Օրեցօր թուրքական զորաջոկատը համալրվում էր նորանոր ուժերով. նահանգապետն ամեն սպանված հայի համար խոստացել էր 100 ոսկի: Շրջակա բնակավայրերից «100 ոսկիի անունը լսելով, խումբ առ խումբ սկսան գալ և միանալ մեր վրայ յառաջացող երկու հազար հինգ հարիւրին, որ շուտով դարձաւ, ըստ իրենց՝ թուրքերու բերած լուրերուն, մօտ հինգ հազարանոց խուժան մը»[30]:

Երկու շաբաթ տևած այս կռիվների վերջին օրերին թուրքերն իրենց գերազանցող թվով լուրջ ճնշում են գործադրում հայկական դիրքերի վրա: Ամենակարևոր դիրքերի պատասխանատվությունը դրված էր ամենախիզախ խմբապետների՝ Արշակ Թերզյանի և Սյուրմենեցի Արշակի վրա, որոնց հետ էին նաև Վեցմատ Պետրոսը, Յամուգյան Մովսեսը և Բարունակ Թոռոլաքյանը՝ Համշենի ապագա ազգագրագետը, որ տակավին պատանի արդեն թրծված և քաջ մարտիկ էր: Սակայն կռվի թեժ պահին երկու Արշակները լքում են ճակատը՝ հսկայական ուժին դիմադրելը համարելով անիմաստ: Հենց այս հանգամանքից էլ օգտվում են թուրքերը և սեղմում օղակը հայկական խմբերի շուրջ:

Ամբողջ օրը տևած կատաղի հրացանաձգությունը դադարում է մութն ընկնելուց հետո: Հայկական փոքրաթիվ ուժերը՝ քսաներկու հոգի, որոշում են աննկատ դուրս գալ պաշարման օղակից՝ հաջորդ օրը նշված վայրում հանդիպելու պայմանով: Նրանք բաժանվում են երեք խմբի: Յուրաքանչյուր խումբ իր հետ պետք է տաներ քառասունչորս կանանց, երեխաներին և ծերերին, որոնց նույնպես բաժանում են երեք խմբի: Որոշվում է նահանջել թուրքական գյուղերի կողմից դեպի Արկուլա անտառը, «…որ աւելի յարմար վայր մըն էր մեր ինքնապաշտպանութեան համար»[31]: Երբ բոլոր խմբերը բարեհաջող հասնում են նշված վայրը, պարզվում է, որ մոտ հինգ հազարանոց թուրքական զորաջոկատի դեմ երկու շաբաթ տևած կռիվներում հայերը ոչ մի զոհ չեն տվել. «Ընդհակառակը, յետոյ իմացանք որ կռուի վերջին օրուան ահռելի մարտի ժամանակ, անոնք ունեցած են քսաներկու սպաննուած և մօտ ութսուն վիրաւորներ»[32]:

Երբ թուրքերը պարզում են, որ հայերը հեռացել են դեպի Արկուլա անտառը, այն տարբեր կողմերից հրդեհում են՝ նրանց բոցերի մեջ ոչնչացնելու նպատակով: Հայկական խմբերը, որ քաջածանոթ էին անտառին և նրա քարայրներին ու նրանից դուրս գալու կածաններին, կարողանում են դժվարությամբ, բայց առանց կորուստների դուրս գալ այրվող անտառից: Արկուլայի բոցերը տարածվում են ծովեզերքի բոլոր անտառներում և դրանք դարձնում հրո ճարակ:

Նահանգապետի նախաձեռնած այս՝ թերևս ամենամեծ կռիվն ավարտվում է թուրքերի կատարյալ պարտությամբ, որոնք տալիս են բազմաթիվ զոհեր և վիրավորներ: Կռիվների մեջ քաջությամբ և տոկունությամբ աչքի են ընկնում շատերը, որոնց մեջ համարձակությամբ և հրամանատարական կարողություններով առանձնանում են Միսաք Թոռոլաքյանը և խմբապետ Գաբրիել Մատիլյանը. «Առանց թերագնահատելու կամ գերագնահատելու մեր մարտիկներուն ցուցաբերած յանդգնութիւնը, կորովը և արի կեցուածքը, պիտի ըսենք, որ Միսաք և Գաբրիէլ, իբրև ղեկավարներ, բացառիկ դեր խաղացին այդ օրհասական պահերուն…»[33]:

Թեև հայ մարտիկների փամփուշտներ խիստ նվազել էին, սակայն նրանք ճակատը չեն լքում և լուսաբացին սպասում են թշնամու նոր հարձակման: Նրանք տեղյակ չէին, որ ռուս-թուրքական ճակատում իրավիճակը կտրուկ փոխվել էր. անտառների հրդեհվելու օրը ռուսական զորքը գրավել էր Ռիզեն և շարժվում էր հայկական դիրքերի ուղղությամբ: Թուրքական կառավարությունը տեղի բոլոր ուժերը, այդ թվում՝ հայերի դեմ կռվողներին, ուղարկել էր ռուսների առաջընթացը կասեցնելու:

Ռուսական զորքի առաջընթացը, սակայն, չի հաջողվում կասեցնել: Ռիզեից հետո նրանք նվաճում են Սյուրմենեն, իսկ ապրիլի 15-ին մտնում են Տրապիզոն:

Մարտական խմբերի խորհրդաժողովը որոշում է մի խումբ ուղարկել Կովկաս, որի կազմում ընդգրկվում է նաև Մ. Թոռոլաքյանը[34], ով այդ խմբի առաքելության մասին գրում է. «Մեր նպատակն էր այդ խումբին միջոցաւ երկրի տիրող կացութեան մասին թարմ տեղեկութիւններ յայտնել կուսակցութեան և կապեր ստեղծել տեղւոյն հայկական բեկորները փրկելու համար»[35]:

Որոշվում է նաև տեղում թողնել քսան հոգուց բաղկացած մի խումբ, իսկ մյուսներին տեղափոխել Մաճկայի հունական գյուղերի մերձակա անտառները, ուր ավելի անվտանգ էր, և ապրուստի հարցն էլ հեշտ էր լուծելը, մանավանդ որ նախօրոք այնտեղ էր ուղարկվել մի մեծ զինված խումբ:

Նախապատրաստական աշխատանքներից հետո մարտի սկզբին Թոռոլաքյանի խումբը ճանապարհ է ընկնում դեպի ճակատի առաջնագիծ, որտեղից պետք է անցներ Կովկաս: Շատ դժվարություններ հաղթահարելով, ճանապարհին մի քանի թուրք ջարդարարների ոչնչացնելով և նրանց առևանգած հայ կանանց ազատելով՝ խումբը մոտենում է ռազմաճակատի գծին: Այստեղ նույնպես նրանց սպասում էին դժվարություններ, քանզի ռուս սպաները ճակատի այն կողմից եկածներին չէին վստահում: Վերջապես նրանց հաջողվում է փարատել կասկածները և տեղացի գյուղացիների տարազով փոքր-ինչ ազատություն ձեռք բերել, որից հետո անցնում են Շանա և այրում ջարդարար Իսմայիլ բեյի և հայերի կոտորածներին մասնակից այլ թուրքերի 125 տուն: Հաջորդ օրը, դարձյալ բազմաթիվ դժվարություններ հաղթահարելով, կարողանում են մտնել Տրապիզոն[36]:

Մ. Թոռոլաքյանը՝ Քաղաքների միության աշխատակից

Ռուսական զորքի հետ Տրապիզոն է գալիս նաև Բաթումում գործող Տրապիզոնցիների հայրենակցական միության Կոմիտեն[37] (հանձնախումբը), որը ստեղծվել էր Բաթումի Ս. Փրկիչ եկեղեցու ավագ քահանա Մեսրոպ Մելյանի նախաձեռնությամբ և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հովանավորությամբ և աջակցությամբ[38]: Ռուսական զորքերի հրամանատար զորավար «Վլադիմիր Լյախովը պաշտոնապես արտոնում է Հայկական կոմիտեի գործունեությունը Տրապիզոնում: Գեներալը թույլատրում է կոմիտեին՝ տնօրինել հայերին պատկանող գույքը, ըստ հայեցողության՝ վարձով տալ, ստանալ վարձակալման

Գյումուշխանեցի Ավո (Ավետիս Պիզյան)

գումարը, ինչպես նաև ունենալ իր առանձին պահակախումբը գույքը հսկելու համար»[39]:

Մ. Թոռլաքյանն ու Հ. Չեփնյանը դիմում են քաղաքների միության լիազոր Տիգրան Աղամալյանին և ստանում նույն միության ծառայողների վկայականներ, որոնցով լիազորություն են ստանում հավաքելու նահանգի գյուղերում և քաղաքներում թուրքերի մոտ մնացած հայկական բեկորները:

Նոր կարգավիճակում Մ. Թոռլաքյանի առաջին գործն է լինում քրոջն ազատելը մի թուրք ջարդարարից, ով տեղահանության օրերին առևանգել էր նրան և բռնի կերպով պահում էր որպես կին: Ոճրագործ թուրքը, տեղեկանալով Մ. Թոռլաքյանի՝ իրենց գյուղ գալու մասին, քրոջը թաքցնում է ծնողների տանը, իսկ ինքը փախչում է անհայտ ուղղությամբ: Նրա ծնողների մոտից ազատելով քրոջը և տեղավորելով Շանայում՝ հորեղբոր որդու՝ Բարունակի տանը, Միսաքը սկսում է բարեկարգել հայրական տունը, հավաքում և գյուղի գերեզմանատանը հողին է հանձնում պապի ոսկորները, որից հետո գնում է տեսնելու հռչակավոր ֆիդայի Գյումուշխանեցի Ավոյին[40], ում ծանր հիվանդությունը գամել էր մահճին: Նա շատ է ուրախանում Մ. Թոռլաքյանին տեսնելով և խնդրում է, որ Միսաքը որոնողական աշխատանքների մեջ ուշադրություն դարձնի իր հարազատներին. «Գիտեմ, որ այս հիւանդութենէն պիտի չկրնամ ազատիլ, բայց կ'ուզեմ որ հարազատներէս մէկը գոնէ տեսնեմ»[41]: Եվ իրոք՝ այդ հիվանդությունը ճակատագրական է լինում Ավոյի համար:

Մ. Թոռլաքյանը գործընկերների հետ հինգ օրվա ընթացքում տարբեր տեղերից հավաքում է քսանհինգ հայ՝ հիմնականում երեխաներ և երիտասարդ կանայք: Այդ ընթացքում նրանք հայտնաբերում են հայերի թալանին և կոտորածներին մասնակից թուրք ոճրագործների և նրանց ոչնչացնում: Փրկած երեխաներին և կանանց հասցնելով Տրապիզոն՝ նրանք շարունակում են թուրք ոճրագործների հայտնաբերման, ոչնչացման կամ նրանց ռուսական դատարաններին հանձնելու գործը:

Որոշ ժամանակով դադարեցնելով խմբի գործունեությունը՝ նա Հայկազուն Խանդանյանի և Երվանդ Կամսզյանի հետ փոքր-ինչ հանգստանալու և կազդուրվելու նպատակով անցնում է Բաթում, այնտեղից՝ Թիֆլիս, ուր հանդիպում է Ռոստոմին: Այնուհետև նրանք մեկնում են Գանձակ, որտեղից անցնում են Սոչի և Սուխում, ուր բնակվում էին բազմաթիվ համշենահայեր:

Այս փոքր արձակուրդից հետո նրանք վերադառնում են Տրապիզոն, ուր Միսաքն աշխատանքի է անցնում ռուսական բանակի հակահետախուզական բաժնում. «Այդ պաշտօնը վերցուցի վրաս ոչ թէ աշխարհակալ ռուսերուն ծառայելու նպատակով, այլ որովհետև ատով դիւրութիւն կը գտնէի թրքական գիւղերը մտնելու, խուզարկութիւններ կատարելու և անոնց թաքցուցած հայ բեկորները հաւաքելու, ինչպէս նաև թուրք այդ ոճրագործներէն վրէժ լուծելու: Եւ մեկնեցայ գիւղերը»[42]:

Շարունակելի

Հղումներ

1 Մալխաս, Ապրումներ, Ա հատոր. Թեհրան, 1982, էջ 91:
2 Թոռլաքյան Մ., Օրերուս հետ, Պեյրութ, 2001, էջ 222:
3 Յովակիմեան Յ. (Արշակունի), Պատմութիւն հայկական Պոնտոսի, էջ 345:
4 Նշվ., աշխ., էջ 344:
5 Թոռլաքյան Մ., նշվ. աշխ., էջ 222-223:
6 Յովակիմեան Յ. (Արշակունի), նշվ. աշխ., էջ 346:
7 Նշվ. աշխ., էջ 351:
8 Նշվ աշխ., էջ 347:
9 Վանա Իշխան (Նիկոլ Պողոսյան) ծնվել է 1883 թ. Արցախում, ազգային-ազատագրական շարժման գործիչ, ֆիդայի: ՀՅԴ կուսակցության անդամ: Դավաղրաբար սպանվել է 1915 թ. Շատախի գավառում:
10 Արշակ Վռամյան (Օնիկ Դերձակյան), ծնվել է 1871 թ. Կոստանդնուպոլսում, հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ, ՀՅԴ կուսակցության անդամ: 1908 թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո Պոլսում ընտրվել է Օսմանյան խորհրդարանի երեսփոխան: 1915 թ. ապրիլի 17-ին դարձել է դավաղրության զոհ:
11 Տրապիզոնի նահանգի ՀՅԴ Կենտրոնական կոմիտեի ծածկանունը:
12 Թոռլաքյան Մ., նշվ. աշխ., էջ 250:
13 Հովսեփ Արղության, ծնվել է 1863 թ. Սանահինում, 1925 թ. վախճանվել է Փարիզում: Հայ ազգային-ազատագրական շարժման նշանավոր դեմքերից է: Արղության-Երկայնաբազուկները ծագում են Ջաքարյան արքայատոհմից: Ռուսական կայսրության գրանցված ազնվական գերդաստաններից էին: Հայտնի է նաև

Իշխան Արղության անունով: Եղել է կուսակցական, պետական և ռազմական գործիչ: Դաշնակցության հիմնադիրներից է: 1890 թ. կուսակցության որոշմամբ անցնում է Տրապիզոն և ուսուցչությանը զուգահեռ՝ զբաղվում կուսակցական կառույցի ստեղծման աշխատանքներով: Նույն տարում ձերբակալվում է և հանձնվում ցարական իշխանություններին: Աքսորվում է Քիշինև: Շուտով ազատվում է և անցնում Պարսկաստան, ուր ղեկավարում է Թավրիզի Դաշնակցության զինագործարանի աշխատանքները: Մասնակցել է Խանասորի արշավանքին, եղել է հրամանատարի՝ Վարդանի տեղակալը: Արշավանքից հետո նրան կոչել են նաև Խանասորի Իշխան: Առաջին աշխարհամարտի ժամանակ ղեկավարում է Հայկական 7-րդ կամավորական գունդը: 1918 թ. ամռանը մեկնում է Արցախ՝ զսպելու Ադրբեջանի ոտնձգությունները: 1919 թ. ընտրվում է Հայաստանի Հանրապետության խորհրդարանի անդամ, նույն տարվա օգոստոսին նշանակվում է ՀՀ դեսպան Պարսկաստանում: 1922 թ. անցնում է Փարիզ, ուր և վախճանվում է 1925 թ. հոկտեմբեր ամսին:

14 Արտաշէս Յովսէփեան, կուսակցական ծածկանունը՝ Մալխաս: Ծնվել է 1877 թ. Տրապիզոնում: Նշանավոր ազգային-կուսակցական գործիչ: Հիմնադիրն է Տրապիզոնի ՀՅԴ «Խարիսխ» պաշտոնաթերթի: Միացել է հայ կամավորական շարժմանը և մարտնչել Հայաստանի անկախության համար մղվող կռիվներին: Ընտրվել է Առաջին Հանրապետության Խորհրդարանի պատգամավոր: Հայտնի արձակագիր է. հեղինակն է քառահատոր «Զարթօնք» վեպի, «Ապրումներ» խորագրով հուշագրության: Մահացել է 1962 թ. Բեյրութում:

15 Խմբի անդամներն էին, բացի Մ. Թոռլաքյանից, Սյուրմենեցի Արշակը, Գրիգոր Հրապյանը (Կապիտան), Արամ Մինասյանը, Սարգիս Էքշյանը, Մեսրոպ Մավյանը, Լևոն Չամուրճյանը, Համբարձում Չեփնյանը, Փիլիպպոս Չեփնյանը, Օհանջան Կակոյանը և մի հույն՝ «որոշ նկատառումներով»: Խմբի կազմության և ուղևորության մասին մանրամասն տե՛ս Մ. Թոռլաքյանի նշվ. աշխ., էջ 257-259: Նաև Յ. Յովակիմեանի նշվ. աշխ., էջ 371:

16 Թոռլաքյան Մ., նշվ. աշխ., էջ 261:

17 Կառավարության որոշմամբ կայսրության այլ նահանգներից, հատկապես Բալկաններից տեղահանված և աքսորված հայերի տներում բնակեցված մուսուլմաններ:

18 Յովակիմեան Յ. (Արշակունի), նշվ. աշխ., էջ 372:

19 Նույն տեղում:

20 Թոռլաքյան Մ., նշվ. աշխ., էջ 271:

21 Յովակիմեան Յ. (Արշակունի), նշվ. աշխ., էջ 373:

22 Թոռլաքյան Մ., նշվ աշխ., էջ 278:

23 Նշվ. աշխ., էջ 285:

24 Նույն տեղում:

25 Նշվ. աշխ., էջ 289-290:

26 Այս կռվի մասին, բացի Մ. Թոռլաքյանից, որ տեղեկացնում է երկու տողով (տե՛ս նրա նշյալ գիրքը, էջ 291), տեղեկություններ է հայտնում նաև Հ. Հովակիմյանը. այդ ժամանակներին «Մեր տղաները զինաթափ կ՚ընեն և ազատ կը ձգեն, Ճեմալ Ազմիին նախատական նամակ մը տանելու պայմանով», Պատմութիւն հայկական Պոնտոսի, էջ 374:

27 Շանա գյուղը գտնվում էր Շանա գետի ծովահայաց կողմում: Համանուն գյուղախմբի նշանավոր գյուղերից էր: Ուներ երկու թաղամաս: Գյուղախմբի մյուս գյուղերն էին Կյուշանան, Ծինկիլան, Սարայլարը, Կալաֆկան և Ապիոնը, «որոնց մեջ, շնորհիվ իր աշխարհագրական դիրքի ու զուտ հայաբնակ լինելուն, առանձնահատուկ տեղ էր գրավում Կյուշանա գյուղը», որը նշանավոր Թոռլաքյան տոհմի հայրենի գյուղն էր: Այս գյուղախմբի մասին մանրամասն տե՛ս Բարունակ Թոռլաքյան, «Համշենահայերի ազգագրությունը», Երևան, 1981, էջ 43-46:

28 Այս կռվի մասին մանրամասն տե՛ս Մ. Թոռլաքեան, Օրերուս հետ, Պէյրութ, 2001, էջ 2941-301: Յ. Յովակիմեան, Պատմութիւն հայկական Պոնտոսի, Պէյրութ, 1967, էջ 373-376:

29 Թոռլաքեան Մ., Օրերուս հետ, էջ 292: Ըստ Յ. Յովակիմեանի՝ այդ թիվն ավելի քան 4000 էր, տե՛ս նշվ. աշխ էջ 375:

30 Թոռլաքեան Մ., Նույն տեղում:

31 Նշվ., աշխ., էջ 298

32 Նույն տեղում 298:

33 Յովակիմեան Յ., Պատմութիւն հայկական Պոնտոսի, Պէյրութ, 1967, էջ 376:

34 Խմբին մաս էին կազմում նաև հայտնի ֆիդայիներ Գաբրիել Մատիլյանը, Սյուրմենեցի Արշակը, Արամ Մինասյանը Լևոն Չամուրճյանը, Մովսես Եմուքյանը, Մելքոն Գալուստյանը, Բարունակ Թոռլաքյանը, Համբարձում Չեփնյանը, երկու Պետրոս Օղաբաշյանները (Փալաբեղ և Վեցմատ):

35 Թոռլաքյան Մ., նշվ. աշխ., էջ 300:

36 Այս արկածալից և վտանգավոր ճանապարհորդության մանրամասն նկարագրությունը տե՛ս Մ. Թոռլաքյանի նշյալ գրքում, էջ 302-313:

37 Կոմիտեի անդամներն էին Հմայակ Ֆետվաճյանը, Միհրդատ Էմիրյանը, Արշակ Գասպարյանը, Տիգրան Եսայանը և Մկրտիչ Դայեցին:

38 Այս հայրենակցական միության գործունեության մասին մանրամասն տե՛ս Ռ. Սահակյան, Արևմտյան Հայաստանի ռազմաքաղաքական և վարչատնտեսական իրավիճակը (1914 թ. հուլիս - 1917 թ. փետրվար), Երևան, 2015, էջ 344-363:

39 Նշվ աշխ. Էջ 349, հեղինակը հղում է ՀԱԱ, ֆ.968, ց. 1, գ. 7, թ. 11:

40 Ծնվել է 1867 թ. Գյումուշխանե քաղաքում: Արհեստով կլայագործ էր, որ սովորել էր հորից: 1890 թ. ծխախոտի մաքսանենգության պատճառով ծագած մի ընդհարման ժամանակ սպանում է թուրք պաշտոնյայի, որից հետո դառնում է փախստական: Շատ չանցած միանում է Քեռու (Արշակ Գավաֆյան) և Կայծակ Առաքելի (Տիգրան Աբաջյան) հայդուկային խմբին: 1895 թ. համիդյան ջարդերից հետո Կայծակ Առաքելի հետ ծպտված անցնում է Բաքու: 1899 թ. ընդգրկվում է ՀՅԴ Արևելյան բյուրոյի և «Զրաբերդ» Կենտրոնական կոմիտեի որոշմամբ Խլաթի և Բիթլիսի շրջանում գործող Աղբյուր Սերոբի (Սերոբ Վարդանյան) խումբը համալրելու նպատակով կազմավորված «Շանթ» մարտախմբի կազմում, Սեբաստացի Մուրադի (Մուրադ Խրիմյան) և Սեպուհի (Արշակ Ներսիսյան) հետ ընդգրկվում խմբի Ջինվորական խորհրդի կազմում: 1899 թ. հոկտեմբերի 24-ին 83 հոգուց բաղկացած զինատար խումբը, որի կազմում էր նաև Ավոն, Կարսից Տարոն անցնելիս Ալաշկերտի Խաստուր գյուղում շրջապատվում է քրդական «Համիդիե» գնդի և թուրքական կանոնավոր զորքերի կողմից: Այդ հերոսական կռվում, տալով 15 զոհ (5 տասնապետ և 10 զինվոր), ճեղքում են պաշարման օղակը և փրկվում: Թշնամու կորուստների թիվը մեծ 400 էր: 1900 թ. Բաքվից անցնում է Կարս: 1902-1903 թթ. մասնակցում է Արևմտյան Հայաստան զենք և զինամթերք փոխադրելու, մարտական և զինատար խմբեր կազմելու և Երկիր առաքելու աշխատանքին: Այնուհետև Գյումուշխանեցի Ավոն ընդգրկվում է Թորգոմի (Թուման Թումանց) գլխավորած «Մրրիկ» ձիավոր խմբի կազմում և 1903 թ. մայիսին խմբի հետ անցնում է Երկիր, հասնում Սասուն: 1904 թ. մասնակցում է Սասունի ապստամբությանը և աչքի ընկնում քաջությամբ ու խիզախությամբ: 1909 թ. նա Տրապիզոնի ինքնապաշտպանության հանձնախմբի անդամ էր: 1914 թ. Անդրանիկի հետ անցնում է Կովկաս, որպես հեծյալ խմբի պետ ընդգրկվում է վերջինիս գլխավորած հայկական առաջին կամավորական գնդի կազմում: 1915 թ. ապրիլի 17-ին, մասնակցելով Դիլմանի ճակատամարտին, Ավոն իր հեծելազորով և 100 կոզակներով գրավում է Արաուլ լեռը: 1916 թ. ակտիվորեն մասնակցում է Սեբաստացի Մուրադի (Մուրադ Խրիմյան) հիմնած՝ «Մեկ հայը մեկ ոսկի» ցեղասպանությունից փրկված հայ որբերի հավաքագրման աշխատանքին: Ավոն մահացել է ծանր հիվանդությունից՝ 1917 թ. Տրապիզոնում:

41 Թոռլաքեան Մ., նշվ. աշխ., էջ 357:

42 Թոռլաքեան Մ., նշվ. աշխ., էջ 366:

Մտերմիկ զրոյց երիտասարդ դաշնակցականի մը հետ

Մարգար Շարապխանեան

Մարգար Շարապխանեանի յուրատեսակ կտակը

Հրապարակութեան է պատրաստվում ՀՅԴ անդամ, մշակութային եւ կրթական նշանաւոր գործիչ Մարգար Շարապխանեանի երկերի բազմահատոր ժողովածուն: Ընթերցողի ուշադրությանն ենք ներկայացնում գրքի առաջին հատորի հոդվածներից մեկը: Մեր խառն ու խառնակ օրերում, երբ բոլորը բոլորից դժգոհ են ու մեղադրում են երկրում տիրող իրավիճակի համար, Մարգար Շարապխանեանի հավասարակշիռ ու սրտացավ խոսքը կօգնի գտնել շատ հարցերի պատասխաններ:

3 փետրուար, 2006-ին, Հ.Յ.Դ. Թորոնթոյի «Սողոմոն Թէհլիրեան» կոմիտէութեան եւ «Արմէն Գարո» ուսանողական միութեան շարքերը մտան 14 երիտասարդ-երիտասարդուհիներ: Այս երեւոյթը ոչ միայն խանդավառիչ է, այլ նաեւ յուսադրիչ ապագայի նկատմամբ: Այս գօտեպնդիչ առիթն օգտագործելով՝ թուղթին յանձնեցի կարգ մը մտորումներ, զորս կը ներկայացնեմ ստորեւ: Իրենց բարի գալուստ մաղթելէ ետք, կը մաղթեմ նաեւ յարատեւութիւն եւ անսպառ տոկունութիւն իրենց առած այս ժողովրդանուէր որոշումին մէջ:

Երկար գրութենէ մըն է հոս մէջբերումը, որ ինչպէս խորագիրը կը թելադրէ, մտերիմ, ընկերական զրոյց մըն է երիտասարդ դաշնակցականի մը հետ՝ գլուխ գլխի տուած եւ ուղղակի իրեն ուղղուած:

Դաշնակցականը կ'ապրի ու կը գործէ իր ժողովուրդին մէջ եւ իր ժողովուրդին համար: Ան անոր ուրախութիւններուն, յաջողութիւններուն, ձախողութիւններուն, փորձանքներուն (բնութենէն կամ մարդոցմէ եկած), անոր հետապնդած նպատակներուն մասնակից ու հաղորդակից պէտք է դառնայ միշտ: Հայութեան ու մասնաւանդ՝ Հայաստանին նկատմամբ հեռուէն դիտողի դիրքին մէջ պէտք չէ ըլլայ ան: Նոյնն է պարագան նաեւ Սփիւռքի մէջ կատարուած աշխատանքներուն: Երդում տուած է ան անոնց ծառայելու մտքով, գործով եւ ֆիզիքապէս:

Դաշնակցական մը ոչ միայն ազգային հասկացողութիւն պէտք է ցուցաբերէ այս բոլորին նկատմամբ, այլ նաեւ հանրային հասկացողութիւն: Դէմքին երկու կողմերը աչապահներ դնելով ու գլխահակ յառաջ ընթանալով՝ տիպար դաշնակցական մը չի կրնար դառնալ ան: Պէտք է ըլլայ շրջահայեաց ու հեռատէս թէ՛ ազգային կեանքին մէջ եւ թէ՛ քաղաքական: Հանրային ու կուսակցական գործերուն նկատմամբ ոչ միայն իր բռնած դիրքին, այլ նաեւ իր կեանքի ընթացքին իր կատարած գործերուն միջոցով է, որ կը գնահատուի եւ կամ կը թերագնահատուի ան: Եթէ կ'ուզէ ապագային պատասխանատու գործեր ստանձնել, պէտք է կարդայ, ըմբռնէ, դատէ եւ մտիկ ընել սորվի անցեալին ու ներկային մէջ գործող ղեկավարներուն գրածներն ու յորդորները: Այս պարագային ուրիշին լսելը, ուրիշին ականջ տալը նպաստաւոր առաւելութիւններ են ապագայ ղեկավարի մը համար, որուն խօսքն ու գործը միատեղ պէտք է ընթանան, ուղիղ պէտք է ըլլան եւ վստահութիւն ներշնչող: Հոս ըրածս պարզապէս նկարագրական մըն է տիպար դաշնակցականի մը, որ իր ունեցած առաւելութիւններուն կողքին ունի նաեւ շնորհ մը խոնարհութեան ու համեստութեան:

Կուսակցական ու ազգային կեանքիդ մէջ երբեք փառասիրութենէ մի՛ տարուիր, բարձր պաշտօններու երբեք մի՛ ցանկար: Եղի՛ր խոնարհ ու համեստ: Եղի՛ր զինուոր ու աշխատասէր ծառայ: Ու վստահ եղիր, թէ ժամանակն է, որ պիտի արժեւորէ կատարած գործդ: Ժամանակն է, որ պիտի խօսի՝ արդարօրէն եւ իրաւամբ: Կեանքիդ տեւողութեան երբեք գովասանք ու պատիւ մի՛ ակնկալեր: Ասոնք անցողական շպարներ են, կարճատեւ զարդարանք: Գործդ եւ անձդ է, որ պէտք է դարձնես տոկուն եւ օրինակելի: Եղի՛ր գաղափարապաշտ, առանց նպատակի մի՛ ապրիր կեանքդ: Պարապ գործերով մի՛ վատներ երիտասարդութեանդ տարիները: Իմաստուն ու հեռատես կերպով գործա-

ծէ՛ զանոնք: Հմտութիւն եւ փորձառութիւն ամբարէ՝ պատասխանատուութիւններ յանձն առնելով: Պատասխանատուութիւնը դաշնակցականի մը մեծագոյն առաքինութիւններէն մէկն է: Տարիներ ետք, երբ ետ նայիս, վստահ եղիր, որ ետիդ դատարկութիւն թողուցած չըլլաս: Անշուշտ դուն եւ լծակիցներդ, նախքան ձեր երդում տալը, խորապէս ըմբռնած էք, թէ ինչ պարտաւորութիւններու եւ պարտականութիւններու տակ կը դնէք ձեր անձը՝ Դաշնակցութեան շարքերը մտնելով:

Դաշնակցական ըլլալը դիւրին է, ընկեր, դաշնակցական մնալն է դժուար: Ու այս մէկը խոր գիտակցութեան ու զոհողութեան հարց է: Նոյնն է պարագան հայ ծնած ըլլալուն, որ դիւրին է, հայ մնալն է դժուար:

Եղի՛ր խիզախ, յանդուգն ու վճռական: Հազարաւոր մարտիկներ ու ֆետայիներ մարմնացնող տիպարն ես դուն: Եղի՛ր անոնց նման անվեհեր, արդարադատ ու ազատասէր: Հեռո՛ւ կեցիր ստրկական ու կրաւորական դիրքաւորումներէ: Մի՛ մոռնար, որ Հայրենիքին, ազգին ու ազատութեան հանդէպ ցոյց տուած նուիրումդ գերագոյնն է մարդկային բոլոր նուիրումներէն: Մեր ֆետայական հին ու նոր պատմութիւնը այսպիսի նուիրումներով տոգորուած մարդիկ շատ ունի: Դաշնակցութիւնը միակամ պահող տուեալները եղած են անձնուիրութիւնը, կարգապահութիւնը, պարտաճանաչութիւնը, համերաշխութիւնը, հնազանդութիւնը, արդարադատութիւնը, խիզախութիւնն ու յանդգնութիւնը եւ այլ նոյնիմաստ առաքինութիւններ:

Դաշնակցութեան պատմութեան քաջարի ու տիպար անձերը, ֆետայիները, մարտիկները, հերոսները, մտքի ու զէնքի նուիրեալները, Հայրենիքին ու ժողովուրդին ազատութեան համար աննահանջ պայքարողները թող իրենց կեանքով ու կատարած գործերով ուղեցոյց դառնան քեզի: Հիմա առանձին չես դուն, անոնք մէջդ կ՚ապրին հազարաւոր ձայներով, անոնց կանչերուն ականջ դիր, ունկնդրէ զիրենք եւ ամէն ճիգ թափէ անոնց արժանի զաւակը դառնալու: Շատ են անոնք, ըլլա՛ն հիները եւ ըլլա՛ն նորերը, մեր ժամանակակից պատմութեան մէջ գործ կատարողները: Շրջահայեաց ու խորաթափանց նայուածքով մը կրնաս զանոնք նշմարել ու դրսեւորել: Ազնիւ ու վեհ գործերով զբաղէ դուն, ժողովուրդիդ նուիրուած գործերով, նոյնիսկ եթէ փոքր շրջանակի մը մէջ սահմանուած ըլլան անոնք: Մի՛ մոռնար բոլոր ժամանակներու մեծ ու հզօր բանաստեղծ Պարոյր Սեւակի խօսքը. «Մենք արեան կանչեր ունենք դեռ շատ»: Մի՛ մոռնար մանաւանդ, որ պատկանած կուսակցութեանդ անունին առաջին բառը ՀԱՅ-ն է, որ մեծ նշանակութիւն ունի Դաշնակցութեան համար: Առանց այդ բառին ներփակած խոր իմաստին, մեր կուսակցութիւնը կրնա դառնալ որեւէ ազգի պատկանող կուսակցութիւն: Սակայն ան զուտ ազգային կուսակցութիւն մըն է, որ նուիրուած է Հայրենիքին ու ժողովուրդին ծառայելու: Ազգայինը իր առաջնահերթութիւնն է, ազատութիւնն ու անկախութիւնը՝ նոյնպէս, որոնց ծառայելու նպատակով ամէն արարք, ամէն յեղափոխական գործ, կազմակերպած ու կատարած է ան իր ծնունդէն ի վեր: Ներկայիս այդ ուղղութեամբ ալ կը գործէ՝ ըլլայ ներկայ Հայաստանի, ուր վերստին ազդու ներկայութիւն մը դարձած է, եւ ըլլայ Սփիւռքի մէջ, ուր ազգապահպանման ու Հայ Դատի իրականացման սիրոյն ժողովրդանուէր գործ կը կատարէ: Ան իր ճանապարհին առջեւ արգելք հանդիսացողներուն դէմ քաջաբար կուրծք ցցած է, պայքարած՝ առանց երկչոտութեան, միշտ յանդուգն ու միշտ խիզախ: Ահա այսպիսի կուսակցութեան մը մէկ մասնիկը դարձար դուն ներկայիս, որուն հանդէպ ունեցած յարգանքդ ու հաւատքդ երբեք տկարութիւն թող չճանչնան:

Կեանքիդ մէջ եղի՛ր լրջախոհ ու ազնիւ: Ինքնագովութիւններէ հեռո՛ւ մնա: Եղի՛ր համեստ ու իմաստուն: Դատողութիւնդ ու անկէ բխող գործդ դասէ ամէն բանէ վեր: Բոլոր մարդիկը ընդունէ քեզի հաւասար: Ոչ դաշնակցականներուն ու անոր ընդդիմախօսներուն հանդէպ արհամարհական ու անտարբեր վերաբերմունք ցոյց մի՛ տար: Անոնց նկատմամբ եղիր լայնամիտ: Հաւատացածներդ անպայման մի՛ պարտադրեր ուրիշին: Ամէն անձ մտածելու, դատելու, իր յարգարժան եղանակը ունի: Բայց երբ անոնք Հայրենիքիդ, ազգիդ, ժողովուրդիդ եւ ազատութեան դէմ խօսին, եղի՛ր կտրուկ եւ անզիջող: Ասոնք սրբութիւններ են քեզի համար:

Դաշնակցութիւնը դպրոց մըն է, որուն աշակերտ դառնալը առանձնաշնորհում մը պէտք է համարես դուն: Նայէ, որ օգուտներ քաղես այս «դպրոցէն», որպէսզի թէ՛ անձդ եւ թէ՛ կուսակցութեանդ անունը միշտ բարձր պահես ժողովուրդին մէջ: Հիմա ժողովուրդը քեզ կը նայի ոչ թէ որպէս սոսկ հայի, այլ որպէս դաշնակցական հայի, որ քիչ մը կը տարբերին իրարմէ:

Վստահաբար, ամբողջութեամբ կը հասկնաս ըսածներս: Կը հասկնաս այն սրբութիւնները, զորս կ'ուզեմ փոխանցել քեզի պարզ ու ըմբռնելի բառերով, առանց խրթին ու դարձդարձիկ ուղիներու մէջ նետելու քեզ:

Հիմա, որ կամովին դաշնակցական եղար, բան մը զոհեցիր անհատականութենէդ, դարձար հաւաքական մտածողութեան մը մէկ մասնիկը: Դէպի նպատակ ընթացող ճանապարհիդ վրայ գործակից ընկերներ ունիս, որոնց հետ դէպի նոյն գաղափարին անձնատու եւ յանձնառու ընկերներ էք: Դաշնակցական բազմաթիւ ֆետայիներ, ազատամարտիկներ, զինուորներ, գործիչներ, գրչի ու մտքի նուիրեալներ պայքարեցան, կռուեցան, զոհուեցան, հերոսացան ու ներկայ Հայաստանը մեզի ժառանգ թողուցին, որ պահենք ու պաշտպանենք զայն: Քեզի պէս, անոնք ալ երդում տուած էին ազգին ու Հայրենիքին ծառայելու: Անոնք ոգի են եւ շունչ, խանդավառող անսպառ աղբիւր, գործելու մղիչ ուժ, դէպի նպատակ տանող եռանդ: Քալէ՛ անոնց ակօսած ճանապարհէն: Այդ ճանապարհն է, որ քեզ պիտի առաջնորդէ դէպի օրինակելի բարձունքներ, դէպի օրինակելի վսեմութիւններ, դէպի օրինակելի խիզախութիւններ: Հետեւէ անոնց օրինակին, որպէսզի ուրիշներ ալ հետեւին անոնց՝ առանց երկընտրանքի:

Հանրային բարի նպատակներու համար իրարու մօտ հաւաքուած ու գործող մարդիկը նուիրական առաքելութիւն մը ունին: Եւ Դաշնակցութիւնը, որուն մէկ զինուորն ես հիմա, այդ նուիրեալ հաւաքականութիւնն է, որ արժանի է գնահատանքի եւ աջակցութեան ու մանաւանդ՝ վստահութեան:

Ներկայ տարիներուն հոս ու հոն ցրուած հայ ժողովուրդի համախմբութեան, տունդարձի ռահվիրան՝ «Մովսէսը», Դաշնակցութիւնն է: Ան կը հաւատայ, որ իր ժողովուրդի եւ Հայրենիքի հզօրացումը Հայաստանի շուրջ եւ սեփական հողի վրայ համախմբուիլն է: Այս մէկը իր հետապնդած նպատակներէն ամէնէն

ազգօգուտն է: Իր բոլոր միւս նպատակները կրնան իրականանալ այս նպատակին իրագործումով: Մեր ազգի անտեսանելի թշնամին, Սփիւռքի մէջ ծուարած, մեր դէմ կ'աշխատի, ներսէն կը կրծէ մեզ ու մեր իսկութիւնը կը տկարացնէ: Տարիներ շարունակ այդ թշնամին մատնանիշ ընող ու զայն հարուածողը Դաշնակցութիւնը եղած է՝ իր կատարած ազգապահպան գործին շնորհիւ: Բազմագլխանի վտանգը սպիտակ ջարդ կը կոչուի, ու ան յարատեւ կերպով կը պայքարի անոր դէմ՝ Սփիւռքի մէջ հայկական կեանք կազմակերպելով ու զայն առաջնորդելով:

Դաշնակցութիւնը, սիրելի՛ ընկեր, գործի կուսակցութիւն է եւ ոչ թէ խօսքի: Ան կը հաւատայ, թէ խօսքը առանց գործի մեռեալ է: Խօսքը միջոց մըն է իրեն համար՝ գործին հասնելու: Իր կատարած գործերը, իր ծնունդէն ի վեր, փառապսակը եղած են իր գոյութեան, իր յարատեւութեան, իր վայելած ժողովրդականութեան:

Դաշնակցութիւնը խտիր չի դներ հարուստին ու աղքատին, քաղաքացիին ու գիւղացիին, գործատէրին ու բանուորին, մշակին ու արհեստաւորին, մտաւորականին ու սոսկ անհատին, գրչի մարդուն ու զինուորագրեալին, կրօնական տարբեր համոզումներ ունեցողներուն միջեւ, որքան ատեն որ անոնք բարոյականի տէր անձեր են եւ յօժար են իրենց ազատ կամքով մտնելու Դաշնակցութեան շարքերը եւ ծառայելու ժողովուրդին, Հայրենիքին եւ Դաշնակցութեան հաւատացած գաղափարներուն, որոնք տարբեր չեն հայ ժողովուրդի ունեցած գաղափարներէն: Ան իր դռները լայն բացած է բոլորին առջեւ, որոնք չափահաս են ու ազգին ծառայելու պատրաստակամութիւն ունին: Ան մէկ հովանիի տակ առած է բոլորը՝ անջատ իրենց ունեցած մտային կարողութենէն, ընկերային կենսամակարդակէն ու իրենց ունեցած կրօնական ու եկեղեցական պատկանելութենէն: Իր զինանշանին ու դրօշին վրայ տրուած երդումը կը հաւասարեցնէ բոլորը՝ մեծը, փոքրը, գիտունն ու պարզ գեղջուկը, չնայած իրենց սեռին եւ ունեցած հասարակական պաշտօնին: Այսօր պարզ ընկեր մը, վաղը նոյն անձը կրնաս տեսնել պարզ շարքային ընկեր մը: Ոչ մէկը եւ ոչ միւսը աւելիով դաշնակցական կրնան համարուիլ: Անոնք իրարու հաւասար ընկերներ են ինչ դիրքերու

ալ որ տէր դառնան: Չկան գերադաս կամ ստորադա դաշնակցականներ: Կան միայն դաշնակցականներ: Ու այս մէկը համայն աշխարհի տարածքին (անշուշտ, նաեւ Հայաստան), ուր ներկայիս դաշնակցական շարքեր գոյութիւն ունին: Դաշնակցութեան որդեգրած սկզբունքները եւ հետապնդած քաղաքական իտէալները ընդհանրական են, համահայկական եւ ոչ թէ միակողմանի, մեկուսի: Ան չէ ստեղծուած որոշ խաւի մը ծառայելու, այլ համայն հայութեան ծառան դառնալու: Անոր գոյութեան հիմնանպատակը իր ժողովուրդն է ու իր Հայրենիքը: Անոնց ծառայելը իր գոյութեան միակ դրդիչ ուժն է: Ան իր գոյապայքարի կորովը կը ստանայ իր ժողովուրդէն ու իր Հայրենիքէն, առանց անոնց ոչինչ կ'արժէ ան:

Դաշնակցութիւնը ինքնանպատակներ հետապնդող կուսակցութիւն մը չէ: Ստրկութեան ու բռնատիրութեան դէմ է ան՝ առաջնորդ ունենալով «Ազատութիւն կամ Մահ» նշանաբանը, որ գրուած է իր դրօշին վրայ: Հայկ Նահապետի, Սասունցի Դաւիթի, Վարդան Մամիկոնեանի, Ղեւոնդ Երէցի, Գայլ Վահանի եւ շատ ուրիշ քաջերու ոգիով, շունչով ու ինքնիշխան ապրելու տենչով առաջնորդուած կուսակցութիւն մըն է ան, որ հարիւր եւ աւելի տարիներէ ի վեր այդ ոգիով, այդ շունչով եւ այդ տենչով է, որ կը գործէ հայութեան մէջ, ուր որ կարիքը կը զգացուի:

Հիմա դուն լիիրաւ դաշնակցական մըն ես եւ քու լիիրաւութիւնդ կրնաս ձեռք ձգել միմիայն կուսակցութեանդ «Կանոնագիր»ին հնազանդելով ու անոր «Ծրագիր»ին հետ համակարծիք ըլլալով: Ապագային ցուցաբերած կեանքդ է, որ ապացոյց պիտի ըլլայ քու իրաւ դաշնակցականութեանդ: Եւ կամ հակառակը: Դաշնակցութեան միայն «Կանոնագիր»ը ընդունելով դաշնակցական եղած չես ըլլար, իմացի՛ր, այլ անոր պարփակած կանոններու ենթարկուելով, հնազանդելով: Ու Դաշնակցութեան կանոններուն ենթարկուիլ, հնազանդիլ, կարգապահ դառնալ չի նշանակեր անոր գերին դառնալ, որքան ատեն որ անոր ենթարկուիլը քու տուած երդուեալ համաձայնութիւն մըն է, համամտութիւն մը:

Յանցաւոր մտածումներէ, նախապաշարումներէ, սխալ արտայայտութիւններէ հեռու մնացող հայն ես դուն, որ կը հաւատայ գործին, տեսանելիին ունեցած ուղիղ եւ իրական ազդեցութեան վրայ:

Դաշնակցութիւնը ինքզինք հզօր կը զգայ միմիայն իր շարքային ընկերներուն ցոյց տուած կարգապահութեամբ, հնազանդութեամբ ու անսակարկ զոհաբերութեամբ: Ան հզօր կը զգայ նաեւ իր համակիրներով, իր ժողովուրդով: Ուխտեալներու հաւաքականութիւն մըն է ան, որ կը տարբերի ուրիշ որեւէ հաւաքականութենէ: Մէկ խօսքով անոր անդամագրուիլը որոշ հասկացողութիւն ու տրամաբանութիւն կը պահանջէ եւ ոչ թէ բարձր ուսում, գիտութիւն: Համեստ ուսում ու կենցաղ ունեցողներով լեցուն են իր շարքերը, որոնք իր գոյութեան ու գոյատեւման կորիզը կը կազմեն:

Երբ երդում կու տաս, չես կրնար, իրաւունք չունիս մասնաժամ դաշնակցական դառնալ: Կամ լիովին դաշնակցական ես եւ կամ չես: Չես կրնար պարտաւորութիւններուդ կէսը կամ մէկ մասը կատարել եւ միւս կէսը անտեսել: Չես կրնար անհնազանդութիւն ցոյց տալ եւ կամ որոշուած ցենզդ, նիւթական տուրքդ չվճարել կուսակցութեանդ, որ բարոյական հասկացողութիւն մը ունի եւ կը տարբերի որեւէ այլ անդամավճարէ: Այս անընդունելի արարքներուդ նկատմամբ արդար վճիռ արձակողը «Կանոնագիր»ը պիտի ըլլայ, որուն օրէնքներուն ծանօթացար ու համաձայն գտնուեցար նախքան դաշնակցական դառնալդ:

Հայոց պահանջատիրության արձագանքը լիբանանահայ մամուլի էջերում

(ըստ «Ազդակ», «Արարատ», «Զարթոնք» թերթերի 1965 թ..ապրիլյան հրապարակումների)

Մարիամ Հովսեփյան
ԳԱԱ Պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող
բանասիրական գիտությունների թեկնածու

Հայոց ցեղասպանության տարիներին և դրանից հետո թուրքական իշխանությունները հետևողականորեն վարեցին այնպիսի քաղաքականություն, որի համաձայն՝ հայրենիքից բռնի տեղահանված և կոտորածները վերապրած հայերը չկարողանային վերադառնալ իրենց հայրենի բնակավայրերը: Այդ նպատակով ոչ միայն քարոզչական աշխատանք էր տարվում՝ նրանց ներկայացնելով իբրև Թուրքիա պետությանը դավաճանած և անշնորհակալ ժողովրդի, այլև ընդունվում էին օրենքներ՝ հայերի վերադարձն արգելելու, ինչպես նաև նրանց ունեցվածքը հոգուտ պետության բռնագրավելու համար: Այս կապակցությամբ հիշատակենք հետևյալ փաստերը:

1923 թ. ապրիլի 15-ին Թուրքիայի խորհրդարանն ընդունել էր «Լքյալ գույքի մասին» օրենք, ըստ որի՝ այդ երկրում չբնակվող հայերի գույքը ենթակա էր բռնագրավման: Ընդ որում, հաշվի չէր առնվում, թե ինչ պայմաններից ելնելով էին նրանք հեռացել բնօրրան հայրենիքից՝ Արևմտյան Հայաստանից ու նախկինում հայաբնակ բնակավայրերից: Որպես լրացում այս օրենքի՝ 1926 թ. փետրվարի 2-ին ընդունված մեկ այլ օրենքով արգելվում էր հայերին վերադարձնել մինչև Լոզանի պայմանագրի ուժի մեջ մտնելը (1924 թ. օգոստոսի 19-ը) նրանցից արդեն բռնագրավված ունեցվածքն ու գույքը: 1923 թ. սեպտեմբերին «Հաշվառման մասին» օրենքի երկրորդ կետում կատարված փոփոխությամբ արգելվում էր Թուրքիա վերադառնալ այն հայերին, որոնք հեռացել էին Արևմտյան Հայաստանից ու Կիլիկիայից՝ ներկայացնելով կեղծ փաստարկ. հայերն իրենց կամքով էին արտագաղթել: 1927 թ. մայիսին ընդունված կառավարության օրենքի համաձայն էլ Թուրքիայի քաղաքացիություն չէին ստանում այն անձինք, այդ թվում՝ հայերը, որոնք երկրի տարածքից բացակայել էին 1923-1927 թվականներին[1]: 1935-1936 թթ. ընդունված կալվածքների մասին օրենքն ու հայտարարագիրը, նաև 1970-ականներին Վճռաբեկ դատարանի Իրավական խորհրդի կայացրած որոշումը Թուրքիայի հայ համայնքի ձեռքից խլեցին համայնքային կալվածքների մեծ մասը[2]:

Թուրքական իշխանությունների որդեգրած այս քաղաքականությունը, բնական է, որ պետք է իր ազդեցությունն ունենար տարագիր արևմտահայերի հոգեվիճակի ու վարքագծի վրա:

Մայր հայրենիքից բռնի դուրս քշված հայությունն ապաստանել էր իր բնակության վայրերին մոտ երկրներում՝ հույս փայփայելով աշխարհաքաղաքական նպաստավոր հանգամանքների դեպքում վերադառնալու սեփական տները: 1918-1920-ականների կեսին այդ հույսն ամրապնդվում էր Հայաստանի Առաջին հանրապետության հիմնադրմամբ, Սևրի պայմանագրով, Կ. Պոլսում երիտթուրքերի դատավարության մեկնարկով: Թուրքական իշխանություններն աչալուրջ էին, և դիվանագիտական հմուտ ու փորձառու քաղաքականության շնորհիվ այնպիսի քայլեր ձեռնարկեցին, որոնց հետևանքով գաղթական հայության թվաքանակը հարաբերականորեն նվազեց մասնավորապես Սիրիայում և Լիբանանում: Հիշատակենք Կարլեն Դալլաքյանի հետևյալ փաստարկված պնդումը. «Աշխարհագրականորեն իր տարածքին մերձակա շրջաններում հայության կենտրոնացումը Թուրքիան գնահատեց իբրև հնարավոր վտանգ իր սահմաններն... 1919 թ. փետրվարին, կազմակերպելով հայերի ջարդը Հալեպում արաբ լյումպենի ձեռքով, Թուրքիայում աստիճանաբար սկսեց ձևավորվել Սիրիայից ու Լիբանանից առհասարակ հայության վտարման մտայնությունը, որն ամբողջանալով, պիտի վերաճեր պետական քաղաքականության: Քաղաքականություն, որն ուղղվեց Թուրքիան շրջապատող տարածքները հայաթափելու գործին և որը, փաստորեն, մնաց շարունակական ընթացքի մեջ»[3]: Տեղին է նկատել, որ մենք թուրքական այդ քաղաքականության դրսևորման ներկայիս փուլի ականատեսն ու վկան ենք: Հետևողականորեն և մշակված ծրագրով

սասանվեցին ու թուլացան ժամանակին ուժեղ և ամուր սիրիահայ և լիբանանահայ համայնքները:

Ինչ վերաբերում է 1920-ականների երկրորդ կեսին, ապա այդ ժամանակահատվածում և հետագա տարիներին դեպքերի հետագա զարգացումն ի դերև է հանում տարագրված արևմտահայերի հայրենադարձության հույսը, թեև արդեն ձևավորվող սփյուռքյան կառույցները կազմակերպված պայքար են սկսում ցեղասպանության իրողության մասին համաշխարհային հանրությանն ու միջազգային կառույցներին իրազեկելու, նրանց դատապարտման, հայության վնասների փոխհատուցմանը հասնելու և ամենակարևորը՝ հայրենիք վերադառնալու ուղղությամբ: Բավական բարդ էր այդ գործընթացը, լի խոչընդոտներով, կասկածներով և պառակտումով: 1929 թ. «Հառաջ» թերթում տպագրվում է համազգային համախմբման կոչ[4]: Այս շրջանում սկսում է քննարկվել համասփյուռքյան մարմին հիմնելու հարցը գրեթե բոլոր հայկական համայնքներում: Ազգային ավանդական կուսակցությունները փորձում են մի կողմ թողնել գաղափարական տարաձայնությունները՝ հանուն հայոց պահանջատիրությանը նպաստող այս կարևոր նպատակի: Համարյա բոլոր երկրներում, որոնցում Մեծ եղեռնից հետո տնավորվել էին գաղթական արևմտահայերը, ձևավորվում են ազգային ճակատներ կամ խորհուրդներ[5]: Դրանք ակտիվ գործունեություն են ծավալում հատկապես 1940-ականներին և մասնավորապես Երկրորդ աշխարհամարտի տարիներին, երբ կրկին միջազգային դիվանագիտության ասպարեզում էր հայտնվել Հայկական հարցը: Այս փուլում հայոց պահանջատիրության խնդրի արծարծումը համահունչ էր խորհրդային իշխանությունների շահերին: Նրանց համաձայնությամբ էր, որ ամենայն հայոց Գևորգ VI Չորեքչյան կաթողիկոսը նույնպես միանում է Խորհրդային Միության, Մեծ Բրիտանիայի, Միացյալ Նահանգների ղեկավարներին, ՄԱԿ-ի Գլխավոր համաժողովի Փարիզյան նստաշրջանին ուղղված դիմումներ կազմելու և ուղարկելու գործում: 1945 թ. ապրիլի 11-ին Կահիրեում աշխատող բրիտանացի մի խումբ դիվանագետներ իրենց երկրի արտգործնախարար Ա. Իդենին գրած նամակում ներկայացնում են սփյուռքահայերի շրջանում տիրող տրամադրությունները.«Հայերը երազում են Թուրքիայից ազատագրված տեսնել հայկական նահանգները և միացված Հայկական Խորհրդային Հանրապետության հետ»[6]: 1945 թ. հունիսի 15-ին Երևանում հրատարակվող «Սովետական Հայաստան» թերթը տպագրում է[7] նույն թվականի մայիսի 7-ին ՄԱԿ-ի հիմնադիր Սան Ֆրանցիսկոյի նստաշրջանին Ամերիկահայ ազգային խորհրդի կողմից ներկայացված «Հայ ժողովրդի գործը» վերնագրով հուշագիրը[8]: Խորհրդային Հայաստանում որպես լիիրավ քաղաքացիներ ապրում էին եղեռնից մազապուրծ տասնյակ հազարավոր արևմտահայեր, որոնք իրենց մնացած հայրենակիցների հետ բուռն կերպով են արձագանքում Արևմտյան Հայաստանի հողերը Խորհրդային Հայաստանին միացնելու պահանջն արտահայտող այդ հուշագրին:

Հայկական սփյուռքում սկսված ազգային ուժերի միասնության և համազգային պահանջատիրության շարժումը թափ է հավաքում ու դառնում է վերազարթոնքի ազդանշան 1960-ականներին: Որպես ազդակ հանդիսացան թե՛ տարբեր հյուրընկալ երկրներում Հայ դատին հետամուտ կազմակերպությունների իրականացրած արդյունավետ գործունեությունը, թե՛ ԽՍՀՄ-ի վարած արտաքին քաղաքականությունը, որտեղ կրկին մեջտեղ էր բերվում Հայկական հարցը: Նպաստավոր գործոնների մեջ իրենց տեղն ունեին Խորհրդային Հայաստանի ղեկավար կազմում ազգային մտածողության տեր անձանց ներկայությունը և հասարակական ու մշակութային կյանքում Ցեղասպանության թեմային անդրադարձն ու կարևորումը[9]: Տասնամյակներով քնեցված ժողովրդական ցասման հրաբուխը պոռթկաց 1965 թվականի ապրիլի 24-ին, երբ Մեծ եղեռնի հիսնամյա տարելիցի կապակցությամբ հուզումներ, հավաքներ ու ցույցեր տեղի ունեցան Երևանում և սփյուռքում: ԽՄԿԿ Քաղբյուրոն թույլատրել էր, որ Խորհրդային Հայաստանում նշվեր այդ տարելիցը՝ հանձնարարելով կազմակերպել դասախոսություններ, զանգվածային լրատվամիջոցներով դատապարտել թուրքական իշխանությունների իրականացրած ցեղասպանական քաղաքականությունը, հարգանքի տուրք մատուցել Մեծ եղեռնի զոհերի հիշատակին և սփյուռքի մամուլում ներկայացնել խորհրդահայ իրականության նվաճումներն ու ձեռքբերումները[10]:

Համազգային այս հուժկու պահանջատիրական շարժումը Հայկական հարցի լուծման հույսեր արթնացրեց հատկապես սփյուռքում, որտեղ Հայ դատի բարձրաձայնման գործում մասնավորապես աչքի էին ընկնում ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Սիրիայում ու Լիբանանում ձևավորված համապատասխան կառույցները: Դեռևս 1945 թ. օգոստոսի 31-ին Բեյրութում հիմնվել էր Սիրիայի ու Լիբանանի Հայ ազգային խորհուրդը, որի նախագահը Ա. Մանվելյանն էր: Հայ դատի խնդրով զբաղվող այս մարմինն իր նպատակներն ամփոփող կոչում համաձայնություն էր հայտնել Ամերիկայի Հայ ազգային խորհրդի կողմից ՄԱԿ-ի Սան Ֆրանցիսկո-

յի ժողովին ուղարկված հուշագրի դրույթներին[11]: Այս կազմակերպությունը տարիների ընթացքում Բեյրութում, Հալեպում, Դամասկոսում և այլ քաղաքներում կազմակերպել էր հանրահավաքներ, որոնց մասնակցել էին տասնյակ հազարավոր հայեր: Բնականաբար, այս տրամադրություններն ու անցկացվող միջոցառումների մասին տեղեկատվությունն իրենց արձագանքն են գտել Սիրիայի ու Լիբանանի հայ մամուլի էջերում: Դրանց մեջ իրենց հրապարակումների բույլով և ընթերցող լսարանի վրա ունեցած մեծ ազդեցությամբ աչքի էին ընկնում Բեյրութում հրատարակված հայ ավանդական կուսակցությունների պաշտոնաթերթեր «Ազդակը» (ՀՅԴ), «Արարատը» (ՍԴՀԿ) և «Զարթոնքը» (ՌԱԿ): Հիմնվելով այս պարբերականների 1965 թ. ապրիլ ամսվա հրապարակումների ուսումնասիրության արդյունքների վրա՝ կարող ենք փաստել, որ Հայոց ցեղասպանության տարելիցը և պահանջատիրության ոգին Հայ դատի պաշտպանության հարցում միավորել ու միասնական էր դարձրել ավանդական կուսակցություններին: «Ազդակը», «Զարթոնքը» և «Արարատը» մի շարք համարներում և ապրիլքսանչորսյան բացառիկ թողարկումներում հանգամանորեն անդրադարձել են Հայոց ցեղասպանության պատմությանը, փուլերին, դրվագներին: Ներկայացրել են վերլուծական հոդվածներ թուրքական իշխանությունների կողմից մտահղացված այս ոճիրի պատճառների ու հետևանքների մասին: Պատկերացում են տվել հանուն գոյատևման գաղթականների մղած մաքառումների, նրանց տեղաշարժի, հաստատման վայրերի, սփյուռքի ձևավորման և հայապահպանման աշխատանքների վերաբերյալ: Կան Վանում և այլ վայրերում արևմտահայերի հերոսական դիմադրության և ինքնապաշտպանական մարտերին նվիրված նյութեր: Հայության կրած նյութական և հոգևոր կորուստների վերաբերյալ հրապարակումները ևս տեղ են գտել թերթերի էջերում: Բարձրաձայնվել են արևմտահայերի վնասների փոխհատուցման, հայերի՝ Արևմտյան Հայաստան վերադառնալու ու այն Խորհրդային Հայաստանին միացնելու պահանջները:

Պետք է փաստենք, որ Հայկական հարցի լուծման համար այս թերթերում առաջարկվող տարբերակները ներկայացնելիս երբեմն հաշվի չէր առնվում նախորդ դառը փորձը, պատմությունից դասեր հաճախ չէին քաղում՝ նորից դիմումներ ու պահանջագրեր ներկայացնելով աշխարհի հզոր պետություններին, միջազգային կառույցներին, հատկապես չէին խորանում խորհրդային իշխանությունների քաղաքական ու դիվանագիտական բուն նպատակների և հետապնդած շահերի հարցում:

Երեք կուսակցությունների պաշտոնաթերթերը լուսաբանել են Սիրիայի, Լիբանանի և այլ երկրների հայկական սփյուռքի կողմից ցեղասպանության հիսնամյա տարելիցի առիթով իրականացված միջոցառումները: Այդ բովանդակությամբ լուրեր են արտատպել խորհրդահայ թերթերից, որոնց շնորհիվ իրենց ընթերցողներին տեղեկացրել են Հայաստանի տարբեր վայրերում, հաստատություններում և հիմնարկներում անցկացված միջոցառումների մասին: Խմբագրակազմերի ուշադրությունից չեն վրիպել Հայաստանում ու սփյուռքում կազմակերպված հիսնամյա տարելիցի միջոցառումների, միտինգների, բողոքի ակցիաների, հանրահավաքների մասին թուրքական մամուլի անդրադարձերը, որոնց իրենց վերլուծաբանները տվել են համարժեք մեկնաբանություն և փաստարկված համարժեք պատասխան:

Վերլուծական հոդվածների բույլից կարելի է առանձնացնել «Զարթոնքի» էջերում տեղ գտածները, որոնք աչքի են ընկնում իրենց գիտականությամբ: Այս պարբերականում նաև տպագրել են օտարազգի անվանի դիվանագետների, Մեծ եղեռնը վերապրած հայ մտավորականների հուշագրային մենագրությունները, որոնք Հայոց ցեղասպանության վավերագիր սկզբնաղբյուրի արժեք ունեն: Այդ հրապարակումներից իբրև օրինակ հիշատակենք Յոհաննես Լեփսիուսի՝ «Հայաստանի ջարդերը», Ջեյմս Բրայսի՝ «1915-ի տարագրությունը», Արամ Անտոնյանի՝ «Մեծ ոճիրը» և այլ գրքեր:

«Զարթոնքի» խմբագրակազմը համոզված էր, որ Հայ դատն արդար է, իսկ այդ գիտակցումով Մեծ եղեռնի հիսնամյա տարելիցի միջոցառումների մասնակիցները հավատում էին, որ ապրիլի 24-ը հայության համար այլևս լոկ սուգի օր չէր լինելու, այլև՝ պայքարի և իր հարության մասին ազդարարող օր.«Թշնամին, անտարբերն ու բարեկամը պիտի լսեն, տեսնեն ու հաստատեն թէ կա՛նք ու պիտի ըլլանք աւելի՛, քան երբեք»[12]: «Ցեղասպանության հանցանքը և հատուցման օրենքը» վերնագրով խմբագրական-վերլուծական հոդվածում թերթը նկատում էր, որ թուրքական իշխանությունները չհասան հայերին մեկ-

ընդմիշտ ցեղասպանելու և Հայկական հարցը վերջնականորեն լուծելու իրենց նպատակներին: Նշվում էր, որ Հայկական հարցը մասնակիորեն լուծվել էր Խորհրդային Հայաստանի գոյության փաստով:

«Այսօր հայը կա՛յ... Եւ արդարասէր, ինքնավստահ ու խելացի հայը, որ աշխարհի դիմաց կանգնած է ահա, եւ կը պահանջէ հատուցում, կը պահանջէ իր անառարկելի ժառանգութիւնը, իր իրաւունքները, իր հողե՛րը: Վերապրող արեւմտահայը, սփիւռքի՛ հայը, հայրենաբնա՛կ արեւմտահայը, արեւելահա՛յը,- նո՛յն հայը՝ ՊԱՀԱՆՋԱՏԷՐ, հետամուտ իր հսկայ ժառանգութեան»[13],- կարդում ենք այդ հոդվածում: Այդտեղ վկայակոչելով 1946 թ. ՄԱԿ-ի Ընդհանուր ժողովում ընդունած Ցեղասպանությունը դատապարտող օրենքը՝ գրում էին, որ հայերը կարող են հասնել իրենց նկատմամբ իրականացված ցեղասպանության դատապարտմանը, հանցավորների պատժին և հայության կրած վնասների հատուցմանը: Պարբերականը հիշատակում է արևմտահայերին ոչնչացնելու՝ երիտթուրքական պարագլուխների հեռագրերն ու հրամանագրերը, դրանց մասին օտարերկրյա դիվանագետների, ականատես վկաների, ցեղասպանությունը վերապրած հայերի վկայությունները: Հայերին ոչ միայն սպանեցին, այլև բռնությամբ տեղահանեցին նրանց իսկ հայրենիքից: Ի հեճուկս թուրքական հայաջինջ ծրագրի՝ «Զարթոնքը» եզրակացնում էր հետևյալը. «Կանգնած ենք այսօր շուրջ հինգ միլիոն կենսունակ և քաջառողջ հայ, կանգնած մէկ հոգիի պէս, ու կը խոնարհինք մեր նահատակներու յիշատակին առջեւ, բայց չենք գոհանար միայն խունկ ու աղօթքով եւ յարգանքով, այլ կը վճռենք հաւատարիմ ըլլալ նահատակներու սրբազան առաքելութեան, ու կը պահանջենք թուրքէն ու աշխարհէն՝ հատուցո՛ւմ, արդարութի՛ւն: Եւ կ'ուխտենք տոկալ, յամառիլ ու յարատեւել, կ'ուխտենք պահանջել մեր իրաւունքները մինչեւ որ տիրանանք անոնց, մինչեւ որ իրականանայ մեր սուրբ նահատակներուն Մեծ Երազը: Հայ ժողովուրդը ահա ա՛յս ոգիով կը նշէ Մեծ եղեռնին յիսնամեակը: Կեցցէ՛ յաւերժ հայ ժողովուրդը»[14]:

«Ազդակի» նյութերին հատուկ էր հուզականությունը, զգացմունքայնությունը և վրեժի ցանկությունը: Եթե «Զարթոնք» և «Արարատ» թերթերում վրեժի մասին խոսելիս նկատի էին ունենում հայ ժողովրդի վերածնունդը, տարբեր ոլորտներում գրանցած հաջողությունները և թեկուզ ոչ լիիրավ ու լիարժեք կերպով հայկական պետականության գոյության փաստն՝ ի դեմս Խորհրդային Հայաստանի, ապա «Ազդակը» վրեժ բառի հինկտակարանական իմաստն էր գերադասում: Ապրիլի 24-ի համարում այս պարբերականը հանգամանորեն անդրադարձել էր ՀՅԴ կողմից պլանավորված և իրականացված «Նեմեսիս» գործողությանը[15] և ներկայացրել էր բոլոր հայ վրիժառուներին[16]: «Համաշխարհային առաջին պատերազմի աւարտումին... Հ.Յ. Դաշնակցութեան Պոլսոյ Պատասխանատու մարմինը վճռեց երեւան հանել հայակեր հրէշներու թաքստոցները եւ ահաբեկել զանոնք մէկիկ-մէկիկ»,- կարդում ենք այդ հոդվածում, որի վերջաբանում նշվում էր, որ կուսակցության պատուհասող բազուկն իջել էր նաև դավաճան հայերից մի քանիսի վրա[17]: «Ոգեկոչումին իմաստը» վերլուծականում Կարո Սասունին վստահեցնում էր, որ ողջ հայ ժողովուրդը, հին ու նոր սերունդներով, «ինքզինքը իրաւատէրը կը հռչակէ բռնագրաւուած հայրենի հողերուն»[18]: Նույն օրվա «Մեր խոսքը» վերնագրով խմբագրականում ՀՅԴ Լիբանանի Կենտրոնական կոմիտեի հայտարարությունն է զետեղված, որտեղ հստակորեն ներկայացված է կուսակցության քաղաքական գիծը Հայկական հարցում: Այնտեղ մասնավորապես գրված է. «Անթաղ մնացին մեր մեռելները, բայց իրենց հետ անթաղ պահեցին նաև հայ ազգային Դատը: Թող յաւե՛րժ ապրի յիշատակը անոնց, որպէս զգաստութեան և ազգային գիտակցութեան անշէջ հուր՝ հայ սրտերէն ներս»[19]: Բոլոր նյութերում լեյտմոտիվը նույնն էր՝ վրեժ, վերածնունդ, պայքար հողերի վերադարձի համար. «Հայ ժողովո՛ւրդ, չմոռնաս Ապրիլ 24-ը. գիտցի՛ր վրէժխնդիր ըլլալ, արիւն տուած ես, փոխարէն արիւն պէտք է պահանջես»[20]:

«Արարատի» 1965 թ. ապրիլի 24-ին լույս տեսած Բացառիկ համարն ամբողջությամբ նվիրված է Մեծ եղեռնի հիսնամյա տարելիցին: Հոդվածներում ավելի շատ պատմական ասպեկտով է անդրադարձ կատարված Հայոց ցեղասպանությանը և հողերի վերադարձի խնդրին: Բացի այդ՝ առավելապես ՍԴՀ կուսակցության գործունեությունն է առաջին պլան մղված, թեև հայտարարությունների բաժնում ներկայացված է նաև Հայ դատի համազգային մարմնի մասին տեղեկություն: Բացառիկ համարի խմբագրականում տրված է եվրոպական դիվանագիտության խաղացած բացասական դերը Հայկական հարցի լուծման գործընթացում: Թերթի կարծիքով՝ աշխարհի հզոր տերություններին «կոթնելով է, որ թուրքը ջարդած էր հայը: Նոյն տէրերուն կոթնելով է, որ շուրջ յիսուն տարիէ ի վեր թուրքը կը մերժէ հաշիւ տալ իր զոհին ժառանգորդներուն»[21]: Խմբագրակազմը գտնում էր, որ միջազգային հայանպաստ հանգամանքների դեպքում միայն կարելի էր հասնել Հայ դատի լուծմանը, իսկ

մինչ այդ օրը կհասնի, արդար վրեժխնդրության բոցավառվող խարույկը իր սրտում կրող հայությունը չպետք է դադարեցնի հանուն Հայկական հարցի լուծման պայքարը: Այդ պայքարը պետք է մղվի համահայկական միասնության վրա հենվելով: Թերթն առաջարկում էր երկու պայման. «Առաջին անհրաժեշտութիւնը մեր դատի հետապնդման շուրջ ազգային միասնութիւն ստեղծելն է, այնուհետեւ՝ հողային դատի ազգային քաղաքականութեան մը որդեգրումը: Դժբախտաբար, ցանկացուած գոյավիճակը ստեղծելու ուղղութեամբ ցարդ թափուած ճիգերը ապարդիւն մնացած են: Չկայ անհրաժեշտ միասնութիւնը: Չկայ հասարակաց ազգային քաղաքականութիւնը... Հայութեան առջեւ դրուած հրամայական պահանջը մէկ է ներկայիս. միասնանալ Երեւանէն մինչեւ հեռաւոր Սփիւռք եւ հաւաքական ճիգերով քարոզչութիւն ծաւալել միջազգային գետնի վրայ, հայուն պահանջին արդար ըլլալը օտարին ճանչցնելու համար... Այս պահանջը կրնայ իրականանալ, եթէ հատուածային շահախնդրութիւնները մէկդի դրուին»[22] :

Ամփոփելով մեր ուսումնասիրության արդյունքները՝ կարող ենք փաստել հետևյալը: Բեյրութի հայ մամուլի վերոհիշյալ օրգանների խմբագրակազմերի համոզմամբ՝ անհրաժեշտ էր ոչ միայն ոգեկոչել Մեծ եղեռնի զոհերին, այլև պայքարել Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման, Արևմտյան Հայաստանի հողերը Խորհրդային Հայաստանին միացնելու, աշխարհով մեկ սփռված տարագիր հայերի ու նրանց ժառանգների հայրենադարձության, վնասների հավաքական և անհատական փոխհատուցման ուղղությամբ հաջողություն գրանցելու համար: Անշուշտ, սա ողջունելի մտածելակերպ էր, իսկ արված առաջարկների փաթեթը գովելի էր: Կար մի բայց. առանց իրական անկախ ազգային պետականություն ունենալու այդ խնդիրները չէին լուծվելու: Միայն արդարություն պահանջելով՝ այն ձեռք չեն բերում: Հիշենք Սիամանթոյի խոսքերը.

«Ո՛վ մարդկային արդարություն,
թո՛ղ ես թքնեմ քու ճակատիդ»[23]:

Պետականություն, ուժեղ բանակ, ճկուն դիվանագիտություն, համահայկական միասնական պայքար հանուն Հայկական հարցի վերջնական ու հայանպաստ լուծման. Ահա սրանք են հաղթանակի գրավականները:

Հղում

1 «Թուրքիայի Հանրապետության պատմություն» 2014, 78:
2 «Թուրքիայի Հանրապետության պատմություն» 2014, 79:
3 «Հայոց պատմություն» 2010, 627:
4 «Հառաջ», Բեյրութ, 02.03.1929:
5 Մելքոնյան 2018, 32:
6 Մելքոնյան 2018, 30:
7 «Սովետական Հայաստան», Երևան, 15.06. 1945:
8 «Հայոց պատմություն» 2010, 643, Մելքոնյան 2018, 36-38:
9 «Հայոց պատմություն» 2016, 107:
10 «Հայոց պատմություն» 2016, 115-116:
11 «Ժողովրդի ձայն», Բեյրութ, 02.09.1945:
12 «Զարթոնք», Բեյրութ, 1965, №172 (8212) («Պիտի լսեն, տեսնեն և հաստատեն»):
13 «Զարթոնք», Բեյրութ, 1965, №173 (8213) («Ցեղասպանության հանցանքը և հատուցման օրենքը»):
14 «Զարթոնք», Բեյրութ, 1965, №173 (8213) («Ցեղասպանության հանցանքը և հատուցման օրենքը»):
15 Հովսեփյան 2020, 40, Հովսեփյան 2023, 100-114:
16 «Ազդակ», Բեյրութ, 1965, №42 (10087) («Հայ ժողովուրդի վրիժառու բազուկները»):
17 «Ազդակ», Բեյրութ, 1965, №42 (10087) («Հայ ժողովուրդի վրիժառու բազուկները»):
18 «Ազդակ», Բեյրութ, 1965, №42 (10087) («Ոգեկոչումին իմաստը»):
19 «Ազդակ», Բեյրութ, 1965, №42 (10087) («Մեր խոսքը»):
20 «Ազդակ», Բեյրութ, 1965, №42 (10087) («Հայ ժողովուրդ, չմոռնաս ապրիլ 24-ը»):
21 «Արարատ-Բացառիկ», Բեյրութ, 1965 («Կոտորած, վերածնություն և ազգային վեհքի նոր ուղի»):
22 «Արարատ-Բացառիկ», Բեյրութ, 1965 («Կոտորած, վերածնություն և ազգային վեհքի նոր ուղի»):
23 Վարուժան Դ, Սիամանթո 1979,135:

Գրականության ցանկ

«Թուրքիայի Հանրապետության պատմություն», 2014, Երևան, ԵՊՀ հրատ., 396 էջ:
«Հայոց պատմություն», 2010, Երևան, հ.4, գ.1, «Զանգակ 97» հրատ., 799 էջ:
«Հայոց պատմություն», 2016, Երևան, հ.4, գ.2, «Զանգակ» հրատ., 700 էջ:
Հովսեփյան Մ., «Ազգային վրեժի արդարահատույցը. Սողոմոն Թեհլիրյան», «Դրոշակ», Երևան, 2020, թիվ 3, էջ 40:
Հովսեփյան Մ., «Պոլսահայ պարբերականները «Նեմեսիս» գործողության մասին», «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 2023, N 2, էջ 100-114:
Մելքոնյան Ք., 2018, «Հայկական հարցը և սփյուռքահայությունը մինչև ԽՍՀՄ փլուզումը», Երևան, «Ճարտարագետ» հրատ., 168 էջ:
Վարուժան Դ., Երկեր, Սիամանթո Երկեր, «Հայ դասականների գրադարան» մատենաշար, Երևան, 1979, «Սովետական գրող» հրատարակչություն, 534 էջ:
«Ազդակ», Բեյրութ, 1965
«Արարատ», Բեյրութ, 1965
«Զարթոնք», Բեյրութ, 1965
«Ժողովրդի ձայն», Բեյրութ, 02.09.1945:
«Հառաջ», Բեյրութ, 02.03.1929:
«Սովետական Հայաստան», Երևան, 15.06.1945:

Արհամարհանք

Ա. Սարիբէկ

Ես ձեզ լաւ կը ճանչնամ, ստրուկները մեր ցեղին եւ նողկանքը մարդկութեան, հանդիպած եմ ձեզմէ շատերուն եւ անպատմելի զզուանքով համակուած, ի տես ձեր եղկելիօրէն հեզ գոյութեան:

Տեսած եմ ձեզ օտարներու առաջ եւ օտար հաստատութեանց դպրոցական գրասեղաններուն վրայ, խեղճուկ ու ողորմելի՝ միշտ պատրաստ քծնելու. յետոյ, մեր ազգային շարժումներու խրոխտ ու արիւնոտ օրերուն փոթորկալի:

Դիտած եմ ձեզմէ շատերը, ա՛յդ անհաւասար կռուի եւ պայքարի տարիներուն, թշնամիին առջև գլխահակ եւ Յուդա Սկարիովտիացիին պէս ուրացող ու վաճառուած:

Օ՜, ես ձեզմէ շատերուն եմ հանդիպած, իմ կեանքի բովանդակ տեւողութեան, ու արհամարհած եմ ձեզ եւ ձեր տկարութիւնը ամօթալի, անջիղ եւ անկամ: Արհամարհած եմ ձեզ եւ ձեր ստրկօրէն համակերպելու տրամադրութիւնը արգահատելի, ուժին եւ արծաթին առաջ գետնամած:

Տեսայ ձեզ նաեւ շուկան, առեւտուրի հրապարակին վրայ անսահման եւ տիեզերական՝ միշտ մեքենական կեղծ ժպիտը երեսնուդ եւ եղկելիօրէն ճկուն ու գալարուն. իսկ ի վերջոյ, մեր հասարակական ասպարէզին վրայ ցաւոտ, ուր, անողնայար եւ շուարուն, քծնանքով մը պժգալի, մէկերնիդ կտոր մը արծաթի, իսկ միւսնիդ ունայն շնորհի մը ի խնդիր, վաճառքի կը հանէիք գաղափարներն ու մարդկային Եսը երկնատուր, խիղճը անբռնաբարելի ու ազնիւ:

Օ՜, ստրուկներդ նողկալի... Ահա կը դիտեմ, մեր պատմութեան մշուշի մէջէն, ձեզ եւ ձեր նախնեաց ուրուականները մաշած ու դողահար,- հայրենիքին մէջ եւ հայրենիքէն դուրս, հայկական բարձրաւանդակէն մինչեւ Արարատի ստորոտը, եւ ապա 1915-ի տարին ահաւոր. իսկ այսօր ալ, մեր գաղութներուն մէջ տժգոյն ու պղտոր:

Դարերու պատմութեան մէջ, տմոյն կեղտի, թոյնի մը նման կը տարածուի ձեր անիծապարտ գոյութիւնը անամօթ, ուր սոնքալով երբեմնակի կ՝երեւաք պարտուած-

ներուն՝ վարձկան բռնաւորի մը պահանջներովը ահեղ ու անողորմ. բայց, գարշելիօրէն հեզ եւ լորձնաշուրթն կամակատար՝ օտար ուժերու բռունցքին առջեւ:

Օ՜ ես ձեզ լաւ կը ճանչնամ, ստրուկներն ու դաւաճանները մեր ցեղին եւ նողկանքի մարդկութեան:

Աւա՜ղ, դուք էիք մնացորդները մեր պատմութեան դժբախտ մէկ շրջանին, երբ, Ասիոյ բարբարոս ցեղերը վաչկատուն, անցան Հայաստան աշխարհի վրայով, եւ որպէս անէծք յաւիտենական, թափթփեցին ու խառնեցին ձեր դժնէ եւ օտարօտի էութիւնը հպարտ ժողովուրդին Հայաստանի: Եւ ա՛յն օրէն դուք եւ ձեր մնացորդները շնական, ի հաշիւ օտարին եւ մեր ոսոխներուն դարաւոր, դարձած էք գործակալները եւ գործիքները ազգակործան. խիճե՜ր մեր պայքարի, մարտնչումներու դաժան ճանապարհին: Եւ որպէս որոմ ցորեանի, ու շղթայ անէծքի, կը մնաք կապուած ու նետուած, դէպի ազատութեան արշալոյսը խոյացող մեր սերունդներուն ճամբուն վրայ լուսաշող:

Չէ՞ որ, մեր հին ու նոր պատմութեան մէջ, դարձեալ դուք էիք, անպատկառ լրբութեամբ դաւողները մեր անկախութեան դէմ, իսկ ձեր թափթփուքները այսօր, օտարածին եւ անհայրենիք, ծպտուած ամէն վայրի մէջ, կը ժպրիիք դժուարացնել հազար անգամ բգքտուած հայ ժողովուրդի դատի պաշտպանութեան նորօրեայ համօրէն ճիգերը մեր, եւ դաւադի՛ր, բազմիցս սեւցած հոգիով, կը նկրտիք դժուարացնելու երկնառաք միութիւնը ազգին հայոց եւ արագաթռիչ Վերածնունդը մեր միացեալ Հայրենիքին:

Օ՜, ես ձեզ լաւ կը ճանչնամ եւ ձեր վաճառուող էութիւնը գարշելի... ■

ՀԱՅՐԵՆԻՔ ՏԱՐԵԳԻՐՔ ՏՕՆԱՑՈՅՑ, 1947, «ՀԱՅՐԵՆԻՔ» ՏՊԱՐԱՆ ՊՈՍԹԸՆ, էջ 62-63

Պատիժը արդիւնք, արարքը պատճառ

Պարգև Աւագեան
Աւարտած է Հալէպի պետ. համալսարանի Երկրաչաբական բաժնի Էլեքդրոն ճիւղը:
Վարած է ուսուցիչի և դաստիարակի պաշտօններ: Հրապարակած է յօդուածներ «Գանձասար» շաբաթաթերթին մէջ:

Ահա թէ ուր է շատերու համար գաղտնիք դարձած Հ.Յ.Դաշնակցութեան ոյժը: Այս մասին շատ խօսուած ու գրուած է:

Հ.Յ.Դաշնակցութեան համար առաջնահերթութիւններ են՝

- երկու անփոխարինելի արժէքներ՝ արժանապատուութիւն եւ ազատատենչութիւն.
- երկու անզիջելի արժէքներ՝ հայրենիք եւ պատմութիւն.
- երկու անսերելի ըմբռնումներ՝ սխալին լռել եւ սխալը արդարացնել.
- երկու անշրջանցելի ապրումներ՝ խաբուածութիւն եւ անիրաւուածութիւն.
- երկու անընդունելի վերնագրումներ՝ շահագործել եւ չարաշահել.
- երկու անքակտելի զուգահեռ՝ իրաւունք եւ պարտաւորութիւն.

Առանց կրակի ծուխ չկայ, առանց աշխատանքի ձեռքերում չկայ եւ առանց յանցանքի պատիժ չկայ՝ նուազագոյնը որպէս տեսաբանական ճշմարտութիւն:

Պատժամիջոցները եղած են ընդհանրապէս աւելի մեծ սխալներ ծրագրող կողմերը սանձելու. բայց առ երեւոյթ եւ անմիջական օրինազանցութեան մը արժանի յատուցումը ըլլալու հանգամանք կը վայելէ:

Այս բոլորը հասկնալի եւ ընդունելի ըլլալով Հ.Յ.Դաշնակցութեան համար պատիժը զգաստացման հրաւէր ըլլալէն աւելին չէ:

Սակայն, օրինակները շատ են օրէնքի չարաշահումի, ուր պատժամիջոցներով կրցած են իրականացնել այս կամ այն ընդդիմադիրը եւ կամ ընդդիմութիւնը չէզոքացնելու ոչ ընդունելի գործընթացը:

Հ.Յ.Դաշնակցութեան համար իւրաքանչիւր անհատ արժէք է, ըստ ամենայնի՝ արժանիք, քննարկելու եւ յատկապէս քննադատելու բացառիկ իրաւունք, բայց միշտ մնալով փոխադարձ յարգանքի տրամաբանութեան շրջագիծէն ներս:

Միշտ վեր առնելով ու ընդգծումով յիշեցնելու այն մէկ ու միակ ճշմարտութիւնը, որ մեծ է տարբերութիւնը քննադատութեան անմեղ վերնագրումին տակ, երբ անհատներ չհաւակնին Դաշնակցութիւնը նուաստացնելու ոչ ազգային շահերէ մեկնած ըլլալու չոր ճշմարտութեամբ:

Դաստիարակութիւնը, կրթութիւնը, գիտելիքը, կազմակերպական ունակութիւնները պէտք է ծառայեն քաղաքական մտքի կազմակերպական ձեւաւորման:

Տասնամեակներ շարունակ հսկայական աշխատանք՝ հայապահպանութիւն, օտար երկնակամարներու տակ հայ ժողովուրդի ինքնութեան պահպանումը եւ եկեղեցիի ազգային դիմագիծի ուրուագծումը, հայ դատի եւ պահանջատիրութեան սերմանումը:

Ահա Հ.Յ. Դաշնակցութեան գործունէութեան դաշտը, ուր երբեմն մնաց առանձին որպէս այս բոլորի պաշտպանութեան ջահակիրը. առանց ուրանալու մեր պատմութեան փայլուն էջերու կերտումին մէջ մեր ազգային քաղաքական կազմակերպութիւններու ներդրումը ընդհանրապէս եւ հայ ժողովուրդի անսակարկ զոհողութիւնը այդ բոլորի իրականացման ճամբուն որպէս տոկուն հենարան:

Այս մեծ իրագործումներու ընթացքին եղած են անձնազոհեր, անձնուրացներ, որոնք երբեմն գիտակցաբար գործած են սխալներ կանխելու սխալին աւելի մեծը:

Պատժուած են ու երբեմն յայտարարած արդար պատիժը ընդունիլը. ամէն անձ կրնայ, իսկ անարդար պատիժը ընդունիլը ունի թէ գաղափարական եւ թէ նկարագրի տոկունութեան դրսեւորումի վերնագրում: Վերոյիշեալ բոլոր մատնանշումները միշտ տեղադրելով ընդունելիի եւ հասկնալիի տրամաբանութեան մէջ եւ ոչ թէ Հ.Յ. Դաշնակցութեան մշակոյթին անհարիր ստրկամտութեան մերժելի հոգեբանութեան մէջ:

Հիմա հասկնալի դարձաւ թէ ուր է Հ.Յ.Դաշնակցութեան ոյժի գաղտնիքը: ■

Ներուժէն՝ ուժ

Վրէժ-Արմէն
Ճարտարապետ, գրող, հրապարակագիր, «Հորիզոն»-ի ու «Հորիզոն գրական»-ի աւագ խմբագիր

Ընկերական ժողովէն մը երբ դուրս կու գայինք, տարեկից ընկեր մը հարց տուաւ ինծի.

- Գիտե՞ս ինչ է United Jewish Appeal-ը:

- Այո՛,- պատասխանեցի, քիչ մըն ալ զարմանալով, թէ ինչո՞ւ այդ հարցումը կ՚ուղղէր ինծի այդ պահուն:

- Գիտե՞ս ինչ անչափելի գումարներ կը հաւաքեն այդ ձեւով, կը հաւաքեն ու իրենց երկրին, իրենց դատին, իրենց ազգային կարիքներուն կը յատկացնեն: Ամեն հրեայ կրօնաւոր կը շրջի իր ծոխերը ու իւրաքանչիւր անդամէ կը գանձէ իր «լուման»: Ինչո՞ւ մենք ալ չունենանք, նոյնը չընենք. United Armenian Appeal! Եւ մե՛նք ըլլանք նախաձեռնողը, մե՛նք սկսինք:

Անշուշտ զարմանքս փարատեցաւ, քանի որ ամբողջ երկու ժամ մեր ժողովը յատկացուած էր Հայաստանի ու Հայ դատի աշխատանքներուն տնտեսական օգնութիւն հասցնելու խնդիրներուն, Խնդիրի՛ն՝ գլխագրով:

- Յաջորդ գրելիքս այդ մասին պիտի ըլլայ, սիրելիս, - ըսի ընկերոջս, - ինծի կարեւոր նիւթ մը հայթայթեցիր:

Հայկական միացեալ հայց..., անպայման եւ ինչո՞ւ ոչ:

Եւ հիմա որ նստեր եմ համակարգիչիս առջեւ, ու մատներս կը ցատկոտեն ստեղնաշարին վրայ, ուրիշ հարցումներ կը ներխուժէն միտքս.

- Արդեօք նման փորձ մը չէ՞ր Հայաստան համահայկական հիմնադրամը, որ ձախողութեան մատնուեցաւ, կամ այդպէս կը թուի:

- Արդեօք անյաղթահարելի արգելքներ պիտի չցցուի՞ն մեր առջեւ եթէ նման աշխատանքի մը նախաձեռնենք, - արտաքին բայց մանաւանդ ներքին արգելքներ:

- Արդեօք «միացեալ»-ի գաղափարն անգամ ընդդիմութեան պիտի չհանդիպի՞ մեր պատմութեան ներկայ փուլին:

- Արդեօք, վերջապէս, միայն նիւթականի գոյացմա՞ն հարց է, որ կայ:

Եւ քանի կը մտածեմ, այնքան աւելի կը համոզուիմ, որ նիւթականը չէ, որ կը պակսի: Ունի՛նք այդ ներուժը: Կ՚ենթադրեմ մեր ազգակիցները, անհատաբար նկատի առնուած, այնքան նիւթական ունին, որ թիզ առ թիզ կրնան գնել հայապատկան մեր պատմական հողերը... Բայց կա՛յ կամքը այդ անհատական ներուժը վերածելու հաւաքական ուժի: Ահա խնդիրը, որ մեր առջեւ կը դրուի, մարտահրաւէ՛րը, որ ընկերոջս հարցադրումով մեր առջեւ կը նետուի: Եւ ոչ միայն նիւթական մարզէն ներս:

Եւ ի հարկէ ազգային այդ կամքը ստեղծե՛լ է պէտք:

Այո՛, 135 տարիներ առաջ այդ կամքը ստեղծելո՛ւ համար ազգին ծոցէն, Վահագնի ծնունդին նման, ծնաւ Հայ յեղափոխական դաշնակցութիւնը, աւելի ճիշտ՝ Հայ յեղափոխականներու դաշնակցութիւնը՝ իր սկզբնական անուանումով: Դաշնակցութի՛ւն: Իր այդ անունովն իսկ ան ստանձնած է համախմբել ազգին ուժերը, եւ եթէ ատենին գլխաւոր նպատակը պայքարիլ էր հայու ֆիզիքական գոյութիւնը ապահովելու համար, այսօր շատ աւելի ընդհանրական ու համապարփակ է նպատակը,- պահպանել հայու ինքնութիւնը, այս

մոլորակին վրայ իբր հայ ապրելու մեր իրաւունքը, - ուստի անհերքելի է միասնակա՛ն ուժերով պայքարելու անհրաժեշտութիւնը:

Հայկական միացեալ հայց...

Բայց նախ անհրաժեշտ է, որ ազգովին համաձայնինք, որ միացեալ ըլլալը անխուսափելի է:

Ապա կարենանք ունենալ պետութիւն մը, որ մեր ինքնութիւնը պահպանելու յանձնառութիւնը ունի:

Հուսկ, կարելի ըլլայ փոխադարձ վստահութիւնը վերահաստատել Երկրի ու Արտերկրի, կամ դասական բառերով՝ Հայրենիքի ու Սփիւռքի միջեւ:

Կարեւոր է, որ սկսինք գործնական քայլերով, նոյնիսկ փոքր քայլերով, փոխանակ տակաւին ժամանակ վատնելու՝ որոշելու համար թէ միացեալ աշխատանքները վարող մարմինները ինչպէ՞ս պիտի մէջտեղ գան, որո՞նց մասնակցութեամբ եւ այլն: Ներկայիս գործող կազմակերպութիւնները, համաձայնաբար, կրնան ժամանակաւոր յանձնախումբեր կազմել, ծրագրեր որդեգրել ու անցնիլ գործի:

Հայկական միացեալ հայց...

Ինչպէս Հայաստանի, այնպէս ալ մեր գաղթօճախներու կարիքները անհամար են: Ընտրենք, օրինակ, համայնք մը ընդունելի թատերասրահով մը օժտելու ծրագիրը: Հանգանակութիւնը կատարենք միասնաբար, գնենք կամ կերտենք շէնքը, սահմանենք օգտագործման պայմանները, եւ ամբողջ տարին զայն լեցնենք մեր հանդիսութիւններով ու ներկայացումներով, ազատ ժամանակներն ալ վարձու տանք ու յաւելեալ եկամուտ մըն ալ ապահովենք: Եւ միասնաբար հսկելով նաեւ նիւթականի ճշգրիտ յանձնանձման վրայ: Նոյնը կարելի է կատարել նաեւ Հայաստանի մէջ, բոլորովին անկախ որեւէ պետական միջամտութենէ, յարգելով հանդերձ տեղւոյն բոլոր օրինական պահանջները:

Թատերասրահ, կրթաթոշակ, դասագիրք, գիրք թէ...

Կարեւորը՝ փոխադարձ վստահութեամբ ու միասնաբար գործելու մտադրութեամբ: Այդպէս, քայլ առ քայլ, կը յառաջանայ հայկական միացեալ հայցը:

Իրաւունք ունի ընկերս: Ինչո՞ւ ոչ: Ունի՛նք ներուժը: Կը մնայ ուժի՛ վերածել զայն: ■

ԱԼ. ԽԱՏԻՍՅԱՆԻ ՇԻՐՄԱՔԱՐԻ ԲԱՑՈՒՄԸ

Այսն թվականի հունիսի 21-ին Փարիզի Պեր Լաշեզ գերեզմանատանը տեղի ունեցավ ՀՀ առաջին հանրապետության վարչապետ Ալեքսանդր Խատիսյանի վերանորոգված շիրմաքարի բացման արարողությունը: Արարողությունը կազմակերպել էր ՀՅԴ Արևմտյան Եվրոպայի կենտրոնական կոմիտեն: Միջոցառմանը մասնակցում էին Գերաշնորհ Նորվան Սրբազանը, Առնուվիլ քաղաքի քահանա Տեր Մանվել Ռաշո Հովհաննեսյանը, ՀՅ Դաշնակցության Բյուրոյի անդամներ Մուրադ Փափազյանն ու Հովսեփ Տեր-Գևորգյանը, ՀՅԴ Արևմտյան Եվրոպայի կենտրոնական կոմիտեն, Հայաստանի դեսպանատան կցորդ Շիրազ Հովակիմյանը և բազմաթիվ ուրիշներ: Հրանդ Նորշենի գլխավորությամբ մի խումբ հայորդիներ նվիրեցին Ալ. Խատիսյանի և տիկնոջ լուսանկարով հուշաքար: Հոգևոր հայրերի իրականացրած կրոնական արարողությունից և Նորվան Սրբազանի խոսքից հետո ելույթ ունեցավ Ալֆորվիլ քաղաքի փոխքաղաքապետ Կարո Խաչիկյանը, ով խոսքը փոխանցեց երջանկահիշատակ վարչապետի թոռանը՝ Քրիստոֆին: Այնուհետև Դրո Էքմեքչյանը պատմեց ինչպես է մեկ այլ ընկերոջ հետ հղացել շիրմաքարի վերանորոգման նախաձեռնությունը, ինչպես է տեղի ունեցել համապատասխան ծախսերի համար անհրաժեշտ գումարի գոյացման աշխատանքը, ինչպես և փոխանցեց կազմակերպական այլ մանրամասներ: Հակոբ Սազճյանը պատմական անդրադարձով ներկայացրեց Խատիսյանի անցած ճանապարհը և նրա քաղաքական պետական գործունեությունը: Արարողությունը եզրափակվեց ՀՅԴ Արևմտյան Եվրոպայի կենտրոնական կոմիտեի ներկայացուցիչ Հրաչ Վարժապետյանի ամփոփիչ խոսքով:

ԴՐՕՇԱԿ